

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

43-ԴԴ ՏԱՐԻ ԹԻԻ 429 - Vol. XXXXIII N° 429 - السنة الثالثة والاربعون - العدد ٤٢٩





# ԱՅՍ ԱՄԱՌ-ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ



**Տ**արուան մը ակամայ ուշացումով, այս ամառ, Բիւրականի «Գառնիկ Սկրտիչեան» բանակայրին մէջ տեղի կ'ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումը, մասնակցութեամբ միութեան զանազան շրջաններէն աւելի 600 սկաուտներու: Բանակումին հիւրաբար կը մասնակցի Իրանի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութիւնը (Հ.Մ.Ա.Կ.):

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր նախաձեռնութիւններու նման, սկաուտական բանակումը եւս տարիով մը յետաձգուեցաւ քորոնայի համաճարակին պատճառով: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական վերջին բանակումը կատարուած էր միութեան 100-ամեակի տօնակատարութիւններու սեմին, Յուլիս 2018-ին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումը տեղի պիտի ունենայ 21-30 Յուլիս 2023, Բիւրական, Հայաստան: Նախատեսուած է, որ բանակողները Երեւանի մէջ ունենան պաշտօնական տողանցք, այցելեն Մեծ Եղեռնի նահատակաց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ Եռաբլուրի Արցախեան նահատակաց պանթէոն:

Բանակումը հարուստ է սկաուտական յայտագիրներով եւ խաղերով: Օր մը նախատեսուած է մասնակից



պատուիրակութիւններու երկիրներու մշակոյթներուն ներկայացման համար: Նախատեսուած է նաեւ «Homenetmen got talent»-ի մրցում մը: Շրջապտոյտներ կազմակերպուած են դէպի Սեւանայ լիճ եւ Կիւմրի:

Բանակումին նշանաբանն է «Խրոխտ, խիզախ, միշտ պատրաստ»: Բանակումը ունի իր խորհրդանշանը լոկոն (հեղինակ՝ Յովիկ Փամփալեան) եւ քայլերգը (խօսք եւ երաժշտութիւն՝ եղբ. Ակուսին Անալեանի, Հարաւային Ամերիկայէն):

Բանակումին ընդհանուր խմբապետն է եղբ. Պօղոս Մահպուլեան Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն, փոխ խմբապետներն են՝ եղբ. Գէորգ Օհանեան Հայաստանէն եւ քոյր Շարլին Կեօզալեան՝ Արեւմտեան Մ. Նահանգներէն: Բանակումին խմբապետական գործադիր կազմը բաղկացած է հետեւեալ քոյր-եղբայրներէն.- քոյրեր Թամար Քէլէշեան (Լիբանան), Մենար Պոյաճեան (Միւնիխ), եղբայրներ Յովիկ Փամփալեան (Մուրիա), Արամ Գայսէրեան (Արեւելեան Մ.Ն.), Ակուսին Անալեան (Հարաւային Ամերիկա), Գրիգոր Տուլգարեան (Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՄԿ) եւ Աւագ Կարապետեան (Քուէյթ):

Յայտնենք, որ այս տարի կը նշուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու 45-ամեակը: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին բանակումը տեղի ունեցած է 1978-ին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին չորս բանակումները կատարուած են Հայաստանէն դուրս՝ Յունաստան (1978, 1990), Ֆրանսա (1980) եւ Անգլիա (1986): Հայաստանի վերանկախացումէն ետք, 1994-էն սկսեալ, եւ չորս տարին անգամ մը, անոնք կազմակերպուած են Հայաստանի մէջ:





### ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

#### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նպատակը **2**

#### ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

##### Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Համագումարը **4**

Պաշտօնական բացումը **10**

Քացման խօսքեր **13**

Ակումբ այցելություն **16**

Կիպրոսի նահատակաց **18**

յուշակոթողի այցելություն **19**

Այցելութեան խօսքեր **20**

Ի պատիւ համագումարի **23**

մասնակիցներուն **26**

ճաշկերոյթի խօսքեր **26**

#### ՅՈՒՇԵՐ

Համա-արարական սկաուտական **28**

Ա. ճամբարի մասնակցություն **28**

Վկայություններ Հ.Մ.Ը.Մ.ի **32**

ֆուրպոլի փառաւոր անցեալէն **32**



#### ԱՆԿՐԱԳԱՐՉ

Եղբ. Սարգիս Քէօշկերեան (Նեկրո) **36**

#### ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

Շրջանէ շրջան **38**

#### Հ.Մ.Ը.Մ.Ը ՇՐՋԱՓՎԱԿՈՒԱԾ

ԱՐՅԱՍԻ ՄԵՉ **48**

ՄԱՍՆԱԳԻՂԷ ՄԱՍՆԱԳԻՂ **49**

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ **88**

#### ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ

Ատենապետներու առցանց **88**

Գ. Ժողով **88**



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org



Խմբագիր: Վիգեն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Սեւան Նազարեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Սիւլահեան, Սիւզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Սիլվա Ալավերեան:

Վարչական կազմ: Աբո Մոսիկեան, Սիլվա Սաղրեան, Վարդուկ Չըռնզեան, Վարդան Քասնիկեան, Տիրան Շահինեան եւ Եղիա Քիլիկեան:

Էջադրում եւ ընդհանուր ձեւաւորում: Աբո Պալեան, Կողքի պատրաստություն: Y Concept International, Գրաշարություն: Շողիկ Պոյանեան, Տպագրութեան պատրաստություն: Photogravure Paklayan, Տպագրություն: Համագաղայինի «Վահէ Աթեան» սպարան, Պէյրուս, Լիբանան:

Քաժանորդագրություն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ նշուած է Լիբանան 150,000 Լ.Ս. Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 65 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հասալանադի սակն է 25,000 Լ.Ս.: Ցրում: «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համագաղային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրուս, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

# ՆՊԱՏԱԿԸ

**Հ**այ կեանքի այս տխուր օրերուն, բոլորին ակնարկները դարձեալ ուղղուած են Հ.Մ.-Ը.Մ.ին.- ի՞նչ կ'ընէ այս միութիւնը, ի՞նչպէս կ'ընէ, որ ամէնուրեք կը յաջողի նոր սերունդ համախմբել, պատանիներ ու երիտասարդներ խանդավառել եւ այդ խանդավառութեամբ իր շրջապատին կենսունակութիւն պարզելու:



Իր մթնոլորտը իբրեւ ամուր շաղախ ունենալով, Հ.Մ.Ը.Մ. մասնիկները իրարու կը միացնէ. Կիպրոսի մէջ աշխարհի չորս ծագերէն երիտասարդներ քով-քովի կը բերէ, իսկ Հայաստանի մէջ՝ սկաուտական մեծաթիւ բանակում կը կազմակերպէ: Բոլորին սիրտերը իրարու կը կապէ, կամքերը իրարու կը միացնէ: Անհատականութիւնները հաւաքականութեան կը վերածէ:

Անվերջ շարժում է Հ.Մ.Ը.Մ.ը: Կեանք եւ

Պարզ է, որ հայ կեանքը լաւ օրերու մէջ չէ: Քիչ մը ամէն տեղ կը տիրէ հիասթափութիւն, անորոշութիւն եւ տեղ-տեղ նաեւ յուսահատութիւն՝ ի տես Արցախի կացութեան, Հայաստանի իրավիճակին եւ այս երկուքով պայմանաւորուած Սփիւքի ներկային ու ապագային:

Պարզ է նաեւ, որ տնտեսական համաշխարհային տագնապը, քորոնայի համաճարակին առողջապահական-ընկերային ահաւոր հետեւանքները լուրջ մարտահրաւերներու դէմ յանդիման դրած են ամբողջ մարդկութիւնը եւ յատկապէս՝ նորահաս սերունդի դաստիարակութեամբ զբաղող պետական մարմինները, ոչ-կառավարական կազմակերպութիւնները, միութիւնները, կրթական հաստատութիւնները եւ քաղաքացիական ընկերութիւնները:

Այս բոլորով հանդերձ սակայն, աչքի՛ անցուցէք վերջին ամիսներու հայ կեանքի համայնապատկերը եւ շուտով պիտի նկատէք, որ մեծ ՆԵՐԿԱՅ մը կայ այնտեղ, երբ ուրիշներ մեծ բացակայ մըն են հոն: Ներկան Հ.Մ.Ը.Մ.ն է, որ տեղ մը կարգապահ շարքերով Վեհափառ Հայրապետ կը դիմաւորէ, այլ տեղ՝ շեփորախումբով Ապրիլ 24-ի եւ Մայիս 28-ի ձեռնարկներ կ'առաջնորդէ: Մէկ այլ տեղ՝ աշակերտական մարզախաղեր կը կատարէ: Քիչ մը ամէն տեղ սկաուտական հաւաքոյթներ եւ մարզական մրցաշարքներ կ'իրականացնէ: Ընկերային հանդիպումներով ցիր ու ցան հայեր կը համախմբէ: Իսկ այս բոլորով, հսկայական ճիգով ու աշխատանքով, միութենական խանդավառութիւն եւ ազգային ոգեւորութիւն կը ստեղծէ:

աշխուժութիւն սփռող, լաւատեսութիւն եւ նորութիւն ստեղծող: Շարժում, որ օրուան 24 ժամերուն հանգիստ չի ճանչնար: Երբ տեղ մը խարուկահանդէս մը կամ խրախճանք մը իր աւարտին կը հասնի, այլ տեղ բանակումի մը առաւօտեան դրօշակի արարողութիւնը նոր կը սկսի, ախոյեանական մրցաշարքի մը սուլիչը նոր կը հնչէ:

Հայացնող շարժում է Հ.Մ.Ը.Մ.ը: Ով որ Հ.Մ.Ը.Մ.էն կ'անցնի հայ կը մնայ: Հ.Մ.Ը.Մ. հայ մարդուն կու տայ ինչ որ ամէնէն աւելի կը պակսի անոր՝ հպարտութեան զգացումը եւ յաղթանակի բերկրանքը: Հ.Մ.Ը.Մ. յաղթել կը սորվեցնէ հայուն:

Ի գուր չէ, որ հայ ժողովուրդի արժանաւոր մտաւորականներէն մէկը առիթով մը խոստովանած է, թէ այբուբենի գիրերէն ամէնէն աւելի սիրած է Հօ տառը, որովհետեւ անով կը սկսին Հայը, Հայկը, Հայաստանը, Հպարտութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ը:

Իսկ գաղտնի՞քը այս բոլորին:

Քաղտնիքը միութեան մէջ եւ միութեան շուրջ եղող տեսական խանդավառութիւնն է, որ հայ մարդը կը կերպարանափոխէ, անոր գոյութեան եւ գոյատեւման ուժ կու տայ, հայ ըլլալու եւ հայ մնալու կորով կը ներշնչէ: Ժողովուրդը կը սիրէ խանդավառութիւնը: Կը սիրէ խանդավառութեան աղբիւր Հ.Մ.Ը.Մ.ը, կը վստահի եւ կը գուրգուրայ անոր, որովհետեւ լաւ գիտէ, որ Հ.Մ.Ը.Մ. սովորական սկաուտական շարժում մը չէ, մարզական ակումբ մը չէ: Հ.Մ.Ը.Մ. մարմինի, հոգիի եւ միտքի կրթութեան իւրայատուկ շարժում մըն է, որուն





ալիքները հայ պատանին ու երիտասարդը կը պաշտպանեն շրջապատի տեսակաւոր վտանգներէն:

Գաղտնիքը միութեան նպատակին գիտակցութիւնն է եւ այդ նպատակին ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ականներու մնայուն պատրաստակամութիւնը: Նպատակ, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ հայութեան հզօրացումը զինք տկարացնել, ընկճել եւ պարտութեան մատնել փորձող ուժերուն դէմ.- կազմակերպական հզօրացում, տնտեսական հզօրացում, հոգիներու եւ միտքերու հզօրացում`

չհամակերպելու համար պարտութեան եւ նահանջի բոլոր տեսակի երեւոյթներու:

Իսկ կա՞յ աւելի մեծ գաղտնիք՝ քան Հ.Մ.Ը.Մ.ի եւ հայութեան նպատակներուն միջեւ զոյութիւն ունեցող այս գուգորդութիւնը: Այն, որ երկուքն ալ բնական ձրգտումը ունին յաղթական ազգ դառնալու, հզօր եւ անպարտելի հայրենիք ունենալու:

Ինչ որ մեր օրերու հիմնական պահանջն է:  
Հրամայականն է:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՆՆԱԾԻՂԵՐ ԵՒ ՄԻԱՌՈՐՆԵՐ

**Հայաստան:** «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդլեան» (Երեւան), «Վ. Չաքարեան» (Երեւան), Արովեան (Արովեան), «Հ. Առուստամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Բրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախշեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վետի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Գ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Ստեփանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պ. Համուտ, Այնճար, Դիմի, Անթիլիաս, Շրտէյտէ, Պաուլիէ, Ռաուտա. **Սուրիա:** Հալէպ, Գամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղատատ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթիանիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնտոն. **Աստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանտա:** Այնլո, Արքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէտ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոտերթելիա, Օրեսարու. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովտիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս. **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիձ, Մէնք Գաթրինգ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, «Սասուն» (Ֆրեզնօ), Մոնթբէյլլօ, «Ազատամարտ» (Փասատինա), «Արարատ» (Կլենտէյլ), Օրէնձ Քաունթի, «Մասիս» (Սան Ֆեռնանտօ), «Սեւան» (Սան Տիէկօ), «Արազ» (Ինլընտ Էմփալթ), «Անի» (Սանթա Գլարա), «Շանք» (Քրետնթա Հովիտ), «Միլիան» (Պրրալէնք), «Արցախ» (Լաս Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Բրիք) «Ջալալաք» (Նորթ Հովիվուտ), «Լոռի» (Մաքրամենթօ), «Կիլիկիա» (Սանթա Բլարիքս), «Հրաշք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Դըրզի, Շիքսկօ, Ֆիլատելֆիա, Տիքոնթօ, Փրովիտընս, Ֆլորիտա, Ալպընի, Շարլոթ, Մերիմաք Հովիտ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այլէս, Գորտոպա, Մոնթեւիտէօ. **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Միտնի), «Արաքս» (Մելբուռն), «Կամք» (Միտնի), «Նաւասարդ» (Միտնի), «Արարատ» (Միտնի).



**2** 011-ին որդեգրուած Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրը յատուկ ուշադրութեամբ անդրադարձաւ միութենական հատուածի մը, որ իբրեւ սկաուտ կամ մարզիկ, պատանեկութեան եւ երիտասարդութեան Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմելէ ետք, 18 տարեկանէն ետք շրջան մը ինքզինք «անգործ» կը զգայ, կը հեռանայ, եւ բաւական երկար ընդմիջումէ ետք միութենական գործունէութեան կը վերադառնայ, իբրեւ վարչական ծառայելու իր պատկանած միութեան եւ կամ, իբրեւ ծնողք, իր գաւազն առաջնորդելու հո՛ն, ուր ինք մեծցած եւ կազմաւորուած է:

«Անգործութեան» այս շրջանին լուծում մը գտնելու եւ 18-35 տարեկան երիտասարդներու ներուժը կարենալ օգտագործելու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ժ. Ընդհանուր Ժողովը որոշեց միութեան մէջ յառաջացնել միջավայր մը, ուր կարելի ըլլայ համախմբել 18-35 տարեկան նախկին սկաուտները եւ մարզիկները, անոնց մասնագիտական կարողութիւնները, հմտութիւնները եւ միութենական հետաքրքրութիւնները ի սպաս դնելու համար միութեան աշխատանքներուն:

Չուզահեռ, որոշուեցաւ չորս տարին անգամ մը կազմակերպել երիտասարդական համագումարներ, մօտէն առնչուելու համար Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդներով եւ լսելու համար անոնց մտահոգութիւնները, տագնապները եւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայիս ու ապագային կապուած անոնց պատկերացումները: Չորս տարի առաջ, Մայիս 2019-ին, երիտասարդական նման համագումար մը, միութեան պատմութեան մէջ առաջինը, տեղի ունեցաւ Աթէնքի մէջ: Չորս տարի ետք, Ապրիլ 2023-ին, երիտասարդական երկրորդ համագումարը տեղի ունեցաւ Նիկոսիոյ մէջ եւ մօտէն քննեց ընդհանրապէս հայ եւ մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութիւնը յուզող հարցերը՝ նոր օրերու լոյսին տակ, նոր լուծումներ գտնելու եւ աշխատանքի նոր գործադաշտեր ստեղծելու ճիգով մը:

Համագումարը ունեցաւ պաշտօնական բացման հանդիսութիւն, ժողովական եւ աշխատանքային նիստեր, ազգային հաստատութիւններու այցելութիւններ եւ ընկերային բաժիններ:



է եւ կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր նախաձեռնութիւններուն առանցքը: Մեծ է երիտասարդութեան դերը Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն մէջ: Չորս տարիէ ի վեր միութիւնը ստեղծած է երիտասարդական յատուկ ծրագիր, որ իր վերջնական ձեւը պիտի ստանայ Հ.Մ.Ը.Մ.ի 13-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, Հոկտեմբեր 2023-ին: Այս համագումարը, ինչպէս նախորդը, բեմ է



**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ**  
Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական երկրորդ համագումարին բացումը կատարուեցաւ Ուրբաթ, 28 Ապրիլ 2023-ի առաւօտեան ժամը 10-ին, պաշտօնական հանդիսութեամբ մը, որ ուղղակիօրէն սփռուեցաւ միութեան դիմատետրի էջէն (բացման հանդիսութեան մասին տեսնել էջ 10):  
Բացման հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն: Ապա, կարճ դադարէ

մը ետք, համագումարը իր աշխատանքներուն սկսաւ կէսօրուան ժամը 12-ին, Նիկոսիոյ «Սեմիլի» պանդոկի սրահին մէջ:  
**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԵԿՆԱՐԿԸ**  
Համագումարին բացման խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան յայտնեց, որ երիտասարդութիւնը եղած






## Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՈՐՈՆԵՅ 18-35 ՏԱՐԵԿԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԳՈՐԾԱԴԱՇՏԵՐՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւ առիթ, որ պէսզի երիտասարդներ իրենց մտահոգութիւնները ներկայացրնեն եւ զանոնք մինչեւ Պատգամաւորական ժողով հասցնեն: Արդարեւ, համագումարէն պիտի ընտրուին ներկայացուցիչներ, որոնք նիստերու ընթացքին արտայայ-

տրլած առաջարկները եւ մտածումները պիտի փոխանցեն Պատգամաւորական Ընդհանուր ժողով:  
Օրակարգի յաջորդ կէտով, համագումարի մասնակիցները ծանօթացու-

ցին իրենք զիրենք, միութենական իրենց կենսագրութիւնը եւ մասնագիտական կրթութիւնը: Պարզուեցաւ, որ ներկաներուն միջին տարիքը 23.7 է: Համագումարին ներկայ են հետեւեալ շրջան-







ները իրենց ներկայացուցիչներով- Արեւելեան Մ. Նահանգներ- Լիլիա Եուսէֆեան, Նարոտ Բէյվանեան: Աւստրալիա- Մասիա Ղազարեան, Սարին Զէյթունեան, Զեփիւռ Կիլպոյեան: Հարաւային Ամերիկա- Սոֆիա Թոր-

գոմեան, Յակոբ Թուրուշեան, Կարինէ Տէր Մարգարեան: Յունաստան- Մարիամ Ծիրանեան, Ճորճ Սելիմեան: Լիբանան- Արմէն Եղիայեան, Շահան Նաճարեան, Էւա Ղազարեան: Հ.Մ.Ը.Մ.- ՀԱՍԿ- Արէն Ռէիսեան:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս- Կասիա Վէքիլեան: Մարսէյ- Մելինէ Տէր Պօղոսեան (միակ մասնակիցը, որ մասնակցած է նաեւ երիտասարդական Ա. համագումարին, Աթէնք, 2019-ին), Հայկ Մինասեան:

Սոտերթեյիա- Նենսի Խաչատուրեան, Կարիկ Վարդանեան:

Ալմերո- Ռազմիկ Արամեան:

Թիֆլիս- Ժանեթա Պաղտասարեան: Կիպրոս- Պարէթ Գազանճեան, Ալէքս Գազանճեան, Կարպիս Զիլինկիրեան, Ծովինար Տէր Պետրոսեան, Վանա Հապէշեան:

Համագումարին ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան դիւանի անդամները եւ երիտասարդական ծրագրի պատասխանատուները՝ եղբայրներ Վաչէ Նաճարեան, Վիգէն Աւագեան, քոյր Թային Օրտոզլեան եւ եղբ. Օշին Փիրումեան: Հիւրընկալ Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.- ՀեՄ-ի Մեկուսի վարչութենէն ներկայ էին ատենապետ եղբ. Սարհատ Տէմիրճեան եւ ատենադպիր եղբ. Յակոբ Գազանճեան: Ներկայ էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութենէն քոյր Ռուբինա Նալպանտեան:

Այս առիթով, հիւրընկալ շրջանի վարչութեան ատենապետ եղբ. Սարհատ Տէմիրճեան արտասանեց բարի գալուստի խօսք մը՝ յաջողութիւն մաղթելով համագումարի աշխատանքներուն: Իր խօսքին մէջ ան ըսաւ. «Այս համագումարին բոլորս հաւատարիմ պիտի մնանք միութեան սկզբունքներուն եւ պիտի որդեգրենք ծրագրներ, որոնք պիտի սատարեն հայ պատանի-երիտասարդներու դաստիարակութեան: Ծրագրներ, որոնք պիտի օգնեն, որպէսզի անոնք ազգային գիտակցութեամբ մեծնան եւ նուիրումով ծառայեն իրենց ազգին ու հայրենիքին: Այս համագումարին եկէք մեր արդար բաժինը բերենք, անշահախնդիր գոհողութեամբ, անխախտ ու անսասան հաւատքով: Արժէքներ, որոնք շնորհիւ Հ.Մ.Ը.Մ. աւելի քան 100 տարի հարթեց իր ճամբուն վրայ ցցուած խոչընդոտները եւ իր քայլերը ուղղեց դէպի լաւն ու բարին, յոյս եւ ինքնավստահութիւն ներշնչելով իրերայաջորդ սերունդներու»:

Հ.Մ.Ը.Մ.-ՀեՄ-ի ատենապետին խօսքէն ետք, համագումարը կազմեց իր դի-



լանը եւ ընտրեց քարոզչական եւ քուէախոյզ յանձնախումբերը: Դիւանին մաս կազմեցին Մասիա Ղազարեան (Աւստրալիա) եւ Նարոտ Քէյվանեան (Արեւելեան Մ. Նահանգներ)՝ ատենապետներ, Շահան Նաճարեան (Լիբանան) եւ Նենսի Խաչատուրեան (Սոտերթեյրա)՝ ատենադպիրներ:

Քարոզչական յանձնախումբը բաղկացաւ հետեւեալներէն.- Ջեփիլու Կիլպոյեան (Աւստրալիա), Արէն Ռէխեան (Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ), Կարիկ Վարդանեան (Սոտերթեյրա), Էւա Ղազարեան (Լիբանան) եւ Կարինէ Տէր Մարգարեան (Հարաւային Ամերիկա): Քուէախոյզ յանձնախումբին մաս կազմեցին Ռազմիկ Արամեան (Ալմեր), Յակոբ Թուրուշեան (Հարաւային Ամերիկա) եւ Կասիա Վէքիլեան (Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա):

Ապա, ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կողմէ պատրաստուած տեսանիւթ մը, ուր երիտասարդական նախորդ համագումարէն ընտրուած եւ Հ.Մ.Ը.Մ-ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցած հինգ երիտասարդներ՝ Նժդէ՛՛ Մկրտիչեան (Լիբանան), Սիլվա Ասլանեան (Հարաւային Ամերիկա), Դրօ Աթոլիկեան (Գանատա), Շահան Աթմաճեան (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ Սեւակ Քէթէնճեան (Լիբանան) կը ներկայացընէին իրենց հաճելի եւ ուսանելի փորձառութեան տպաւորութիւնները:

**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ  
ՉՐՈՅՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ**

Համագումարի առաջին նիստին վերջին բաժինով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան փառաբար փոյնթով ներկայացուց «Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը երէկ եւ այսօր» նիւթը:

Նիւթին ներկայացումէն ետք, համագումարին մասնակիցները բաժնուեցան չորս խմբակի եւ իւրաքանչիւրը պարտականութիւն ստանձնեց SWOT-ի օրինակով քննելու Հ.Մ.Ը.Մ-ի զօրութիւնները, տկարութիւնները, ունեցած առիթները եւ դիմագրաւած սպառնալիքները: Խմբակները առանձնացան, պատրաստեցին իրենց վստահուած աշխատանքը եւ ապա ներկայացուցին հա-



մագումարի մասնակիցներուն:  
Յաջորդեց կէսօրուան ճաշի դադարը: Կէսօրին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ճաշի հիւրը եղաւ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեան:  
Յետմիջօրէի ժամը 4-ին ընթացք առաւ համագումարին երկրորդ նիստը, որուն զեկուցաբերները եղան Կաթողիկոսական Փոխանորդը եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան ատենադպիր եղբ. Յակոբ Գազանճեան:  
Արդարեւ, Խորէն Արք. Տողրամաճեան ներկայացուց «Հայ երիտասարդու-





թիւնը իր տագնապներով եւ սպասումներով» նիւթը, իսկ եղբ. Յակոբ Գազանճեան փորձեց պատասխաններ գտնել, թէ «Հ.Մ.Ը.Մ.ի կառուցային, կազմակերպական, դաստիարակչական եւ քարոզչական մօտեցումները որքանո՞վ կը պատշաճին մերօրեայ երիտասարդութեան ակնկալութիւններուն»: Երկու նիւթերն ալ մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին համագումարին մասնակիցներուն մօտ, առիթ տալով շահեկան զրոյց-քննարկումներու:

Համագումարին առաջին օրուան աշխատանքները իրենց աւարտին հասան երեկոյեան 6.45 անց:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑԻՆ ԾԱՆՕԹԱՑՈՒՄԸ**  
Շաբաթ, 29 Ապրիլի առաւօտեան, համագումարին երկրորդ օրուան առաջին նիստը յատկացուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի

երիտասարդական ուղեցոյցին ծանօթացման: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ երիտասարդականի պատասխանատու եղբ. Օշին Փիրումեան փառըր փոյնթով ներկայացուց «Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական գործունէութեան շրջագիծը. քննարկում երիտասարդական ուղեցոյցի» նիւթը: Եղբայրը իր նիւթով պարզեց Հ.Մ.Ը.Մ.ի մէջ երիտասարդական միջավայր մը ստեղծելու շարժառիթները, այս գծով Պատգամաւորական յաջորդական Ընդհանուր Ժողովներու որոշումները եւ երիտասարդական ուղեցոյցի մշակման հոլովոյթը: Եղբայրը նաեւ շեշտեց, որ երիտասարդական համագումար եւ երիտասարդական ուղեցոյց իրարմէ տարբեր, սակայն իրարու շաղկապուած նախաձեռնութիւններ են, որոնք կը նպատակադրեն 18-35 տարեկան Հ.Մ.Ը.Մ.ական նախկին սկաուտները եւ մարզիկները համախմբել եւ

անոնց ներուժը օգտագործել միութեան զարգացման ի խնդիր:

Յաջորդ գեկուցումով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադրպիր, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր եւ երիտասարդականի պատասխանատու եղբ. Վիգէն Աւագեան փառըր փոյնթով ներկայացուց «Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական ուղեցոյցը եւ նոր գործադաշտերու կարելիութիւններ» նիւթը: Եղբայրը անդրադարձաւ մերօրեայ երիտասարդութեան դիմագիծին, հետաքրքրութիւններուն եւ պահանջներուն, նշելով այն բոլոր նորութիւնները, որոնցմով երիտասարդներ կրնան խանդավառուիլ, համախմբուիլ եւ գործել:

Ներկայացուած երկու նիւթերն ալ արժանացան լայն քննարկման: Խմբակներու բաժնուած, մասնակիցները աշխատանքային յատուկ նիստերով սերտեցին Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական ուղեցոյցը եւ համագումարի կազմին դի-





մաց ներկայացուցին իրենց առաջարկները եւ տեսակէտները:

Կէսօրուան ճաշի դադարին համագումարի մասնակիցներուն այցելեց Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան: Ան ներկայ գտնուեցաւ յետմիջօրէի նիստին եւ փառաբար փոյնթով ներկայացուց Կիպրոսի հայ գաղութին անցեալն ու ներկան, հետաքրքրական տեղեկութիւններ փոխանցելով կղզիին հայ բնակչութեան կազմութեան, թրքական ներխուժումին պատճառով կրած վնասներուն (1974) եւ այնուհետեւ վերականգնումի եւ վերածաղկումի հանգրուանին մասին:

Պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի ներկայացումէն ետք, օրակարգի վերջնիւթեր կէտը յատկացած էր ընդհանուր առաջարկներու, իսկ վերջին կէտը՝ համագումարին կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի 13-րդ Պատգամաւորական



Ընդհանուր ժողովի ներկայացուցիչներու ընտրութեան: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, դէպի հանգամանքով, ներկայացուցիչ կրնային դառնալ մասնակիցներու քուէներու պարզ մեծամասնութեան արժանացող



երեք երիտասարդ-երիտասարդուհիներ: Ընտրութեան արդիւնքով ոչ ոք կարողացաւ ապահովել անհրաժեշտ թիւով քուէները: Հետեւաբար, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց բարձրագոյն քուէներ ստացած առաջին երեք մասնակիցները հրաւիրել Պատգամաւորական Ընդհանուր ժողով: Բայց տրուած ըլլալով որ երրորդ բարձրագոյն քուէն կը բաժնեկցէին երկու մասնակիցներ, հրաւիրեալներուն թիւը բարձրացաւ չորսի՝ Յակոբ Թուլթուշեան (Հարաւային Ամերիկա), Արմէն Եղիայեան (Վիբանան), Նենսի Խաչատուրեան (Սոտերթեյիա) եւ Սարին Զէյթունեան (Աւստրալիա):

Երկու օրուան նիստերէ ետք, Շաբաթ, 29 Ապրիլի յետմիջօրէի ժամը 5-ին, համագումարը աւարտին հասաւ յիշատակի խմբանկարով եւ «Յառաջ նահատակ» քայլերգի կատարումով:





# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՅՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



**Կ**ազմակերպութեամբ Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան եւ հիւրընկալութեամբ Կիպրոսի Հ.Մ.Լ.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի վարչութեան, երիտասարդական երկրորդ համագումարի բացման պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 28 Ապրիլ 2023-ի առաւօտեան ժամը 10-ին, Նիկոսիոյ «Սեմիլի» պանդոկի սրահին մէջ, ներկայութեամբ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեանի, Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի եւ տիկնոջ, գաղութի ազգային-կուսակցական, թեմական մարմիններու ներկայացուցիչներու, Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամներու եւ երիտասարդական համագումարի 26 մասնակիցներու:

Կիպրոսի, Հայաստանի եւ Հ.Մ.Լ.Մ.-ի քայլերգներու ունկնդրութենէն ետք, ընթացք առաւ օրուան յայտագիրը:

## Հ.Մ.Լ.Մ.-ՀԵՄ-ի ԱՏՆԱՊԹՏԻՆ ԽՕՍԲԸ

Հանդիսութեան բացման խօսքով հանդէս եկաւ հիւրընկալ Հ.Մ.Լ.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի վարչութեան ատենապետ եղբ. Սարհատ Տէմիրճեան: Եղբայրը նշեց, որ Հ.Մ.Լ.Մ.-ի առաքելութեան հաւատարմով, այսօր Նիկոսիա կը գտնուին աշխարհի գանազան շրջաններէ երիտասարդ քոյրեր եւ եղբայրներ, Աւրստրալիայէն մինչեւ Մ. Նահանգներ, Լիբանանէն մինչեւ Հայաստան եւ

Հարաւային Ամերիկա: Այս երիտասարդները իրենց հանգիստը ձգելով, քանի մը օրուան համար կը գտնուին Կիպրոս, որպէսզի օժտուին նոր գիտելիքներով, եւ նոր պարտականութիւններ ստանձնելով վերադառնան իրենց շրջանները:

Շարունակելով իր խօսքը, եղբ. Տէմիրճեան յայտնեց, որ «Իբրեւ Հ.Մ.Լ.Մ.-ի մեծ ընտանիքի անբաժան մաս, շատ ընելիք ունինք՝ մեր պատանիներն ու երիտասարդները համախմբելու, դաստիարակելու եւ ազգային նպատակներով առաջնորդելու համար: Հ.Մ.Լ.Մ.-ի պատմութիւնը լաւ պէտք է կարգալ՝ տեսնելու համար, թէ մարմնակրթական այս միութիւնը ինչպէ՞ս կարողացած է 105 տարի կանգուն մնալ՝

հաւատաւոր սկաուտներու, նուիրեալ մարզիկներու եւ անձնուէր վարչականներու նիւթական եւ բարոյական հսկայական զոհողութիւններու շնորհիւ:

«Հ.Մ.Լ.Մ.-ը սերունդներու հոգեմտաւոր եւ ազգային արժէքներով դարբնումի դպրոց է, բառին ամբողջական առումով՝ Մեր ազգին հոգեւոր, մշակութային, ազգային եւ համահայկական արժէքները եւ իտէպսները միշտ եղած են մղիչ ուժերը Հ.Մ.Լ.Մ.-ի կեանքին ու գործունէութեան», հաստատեց ան:

Ապա, եղբ. Տէմիրճեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան, որ Կիպրոսի շրջանին





վստահեցաւ միութեան երիտասարդական երկրորդ համագումարին կազմակերպումը: Եղբայրը համագումարի մասնակիցներուն մաղթեց յաջողութիւն, որպէսզի նոր լիցքեր ստացած, համագումարէն ուժ առած՝ շարունակեն Սփիւռքի մէջ հայ երիտասարդութեան մօտ ազգային կեանքի զօրացման հայանուէր իրենց Սուրբ գործը **(ԽՕՍՔԻՆ ԱՄՔՈՂՉՈՒՅԻՆԸ ՄԵՆՏԵՂ ԷՅ 15)**:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Եղբայ-

րը յայտնեց, որ այսօր, աւելի քան երբեք, կենսական է մեր երիտասարդութեան ներուժը պահպանել եւ աճեցնել, որպէսզի նորահաս սերունդի մեր տղաքն ու աղջիկները դաստիարակուին իբրեւ տիպար քաղաքացիներ եւ միութեան ճամբով ծառայող ուժ դառնան այն բոլոր շրջաններուն մէջ, ուր կը

գործեն անոնք: Հ.Մ.-Ը.Մ. կ'առաջադրէ նաեւ պատրաստել վաղուան մեր պատասխանատուները եւ վարչականները, որոնք պիտի շարունակեն նախկիններուն գործը, յայտնեց եղբ. Նաճարեան:

Եղբ. Նաճարեան նկատել տուաւ, որ երիտասարդները թարմութիւն կու տան համահայկական մեր աշխատանքներուն, նոր թափ եւ աշխուժութիւն՝ ազգային մեր կեանքին ու կառուցներուն: Հետեւաբար, ան հրամայական նկատեց երիտասարդութեան դերն ու ներդրումը Հ.Մ.-Ը.Մ.-ին եւ անոր ճամբով ազգային մեր կեանքին:

Իր խօսքին մէջ, Կեդրոնական Վարչութեան ատենապետը հարց տուաւ, թէ հիմա ո՞ր է հայ երիտասարդութիւնը եւ ո՞ր է Հ.Մ.-Ը.Մ.-ը այս աշխատանքներուն մէջ: Հարցումներ, որոնց պատասխանները պիտի փորձէ գտնել այս համագումարը, երիտասարդներու ճամբով, երիտասարդներու համար, նշեց ան:

Եղբ. Նաճարեան շարունակեց.







«Պէտք է վերաբեռել մինչեւ հիմա որդեգրուած միջոցները, արժեքները երիտասարդներու ներկայութիւնը մեր միութենական իրականութեան եւ հաւաքական մեր կեանքին մէջ:

«Ներկայ օրերուն, մանաւանդ քորոնա համաճարակին ստեղծած ընկերային վիճակի լճացումէն ետք, շատ աւելի կարիքը կը զգացուի նման աշխատանքներու, որովհետեւ օրէ օր աւելի նկատելի կը դառնայ մեր ազգային եւ միութենական կառույցներուն մէջ երիտասարդութեան բացակայութիւնը: Եւ մեր միութիւնները ամէնուրեք կը գործեն տակաւին մեծ մասամբ իրենց անցեալի ժառանգին վրայ եւ վայրկեան մը ապագան մշտնջող կրնայ թուիլ բոլորին:

«Մէկ իրականութիւն, որ կարելի չէ ուրանալ, այն ալ Հ.Մ.Ը.Մ-ի հաւատքն է եւ նուիրումը՝ պահպանելու եւ շարունակելու միութեան առաքելութիւնը, դաստիարակելու եւ կրթելու հայ պատա-

նին ու երիտասարդը, իբրեւ Ֆիզիքապէս եւ հոգեպէս տոկուն հայ քաղաքացի, ամբողջական Հայաստանի տեսլականով մեծցող հայ մարդ», ընդգծեց ան (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 13):

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ ՊԱՏԳԱՄԸ**

Բացման պաշտօնական հանդիսութեան եզրափակիչ խօսքը փոխանցեց Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեան: Սրբազանը ողջունեց 105-ամեայ, սակայն միշտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ-ը, որ միշտ կը մնայ աշխոյժ, կենսունակ եւ ազգային մեր պահանջատիրութեան առաջին գիծերուն վրայ:

Այս առիթով, Խորէն Արք. խորին յարգանքով խոնարհեցաւ Արցախեան պատերազմներուն զոհուած Հ.Մ.Ը.Մ-ական երիտասարդներու յիշատակին դիմաց եւ յայտնեց, որ 70 տարի, երբ Հայաստան անկախութիւն չունէր, Սփիւռքի մէջ Հ.Մ.Ը.Մ-ը կը ներկայացընէր ազգային մեր բանակը: Հ.Մ.Ը.Մ. իր շեփորախումբերով, սկսուածական եւ մարզական խումբերով հաւատք, կամք եւ ինքնավստահութիւն կը ներշնչէր մեր ժողովուրդին:

Խորէն Արք. ուշադրաւ նկատեց Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագումարին կազմակերպումը Կիպրոսի մէջ եւ ա՛յս օրե-

րուն: Ան նշեց, որ Հայաստանէն դուրս, Կիպրոսը միակ տեղն է, ուր հայկական բռնադրուակ հողեր եւ եկեղեցիներ կան: Բռնադրուակ Ս. Մակարայ վանքը կայ: Իսկ թուականի իմաստով, համագումարը կը կատարուի 28-29 Ապրիլին, Հայոց Յեղասպանութեան յիշատակի ոգեկոչումէն օրեր ետք եւ քանի մը օրեր առաջ միայն Մայիսեան յողթանակներու տօնակատարութեան: Այս բոլորը մեզի կը թելադրեն դուրս գալ մեր պարտուողական վիճակէն եւ թուրքին ցոյց տալ, որ մենք կը մնանք հարազատ ժառանգորդ մեր պապերուն, արժանի գաւազները Մայիս 28 կերտած սերունդին, յայտնեց ան:

Խօսքին վերջին բաժինով, Խորէն Արք. շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը չի ծերանար, որովհետեւ երիտասարդութեամբ կը զբաղի, տեւաբար երիտասարդներով կը վերանորոգուի: Ան գնահատեց երիտասարդութեան դերը մեր կեանքին մէջ եւ հաստատեց, որ երիտասարդութիւնը եղած է ու կը մնայ յեղաշրջող, փոփոխութիւն կատարող տարր: Արդ, ան կոչ ուղղեց համագումարի մասնակիցներուն՝ անսալու Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբան «Բարձրացի՛ր-բարձրացող»ին եւ տեւաբար ինքզինք կերտելու, կատարելագործելու եւ բարձրանալու, կարենալ բարձրացնելու համար զգալի նահանջի մատնուած մեր կեանքը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ: Երիտասարդութիւնը մեր յոյսն ու ապաւենն է, մեր



ներկան ու ապագան է, եզրափակեց Խորէն Արք. Տողրամաճեան:

**ԳԵՂԱՐՈՒԻԵՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ**

Բացման պաշտօնական հանդիսութիւնը ընդգրկեց գեղարուեստական պատշաճ յայտագիր. նուազ (տուտուկով՝ հայրենի երաժիշտ Արսէն Մկրտչեան), երգ (Մարիա Մոսկոֆեան) եւ Հ.Մ.Ը.Մ-ի 105-ամեայ երթը ծանօթացընող տեսերիզի ցուցադրութիւն:

Բացման պաշտօնական հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն:



# ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՒՆԸ ԿԱՊՈՒԱԾ ՊԱՀԵԼ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷ ՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ՆԻԿՈՍԻԱ, ԿԻՊՐՈՍ)

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի Կիպրոսի Մեկուսի վարչութեան հիւրընկալութեամբ, 28 եւ 29 Ապրիլ 2023-ին, Նիկոսիոյ մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.Ի երիտասարդական Բ. համագումարը:

Հ.Մ.Ը.Մ.Ի երիտասարդական Ա. համագումարը տեղի ունեցած էր Աթէնք, Յունաստան, 10 եւ 11 Մայիս 2019-ին, ուր սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի երիտասարդական ծրագիրը:

Երիտասարդական համագումարները նորութիւն են Հ.Մ.Ը.Մ.Ի համար: Անոնք կը քննեն միութեան սկաուտական եւ մարզական բնագաւառներէն դուրս գտնուող երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներու (18-35 տարեկան) աշխատանքային նոր գործադաշտեր ստեղծելու կարելիութիւնները:

Եթէ ուզենք անդրադառնալ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան եւ ստեղծման, հոն կը տեսնենք տեսլականը մեր հիմնադիր հայրերու, որոնք ուզեցին ստեղծել միութիւն մը՝ հայ ազգի ծոցէն ծնած եւ հայ ազգի ծառայութեան նուիրուած, ի մասնաւորի Մեծ Եղեռնի կոտորածներէն հազիւ ազատած, անտէր եւ անտուն մնացած որբերուն հոգատարութեան նուիրուելու, նպատակ ունենալով դաստիարակել ապագայի հայ տիպար երիտասարդը, որ պիտի ծառայէ իր ժողովուրդին եւ ապրած միջավայրին, ըլլալով տիպար օրինակ հայ քաղաքացիի:

Այսպիսով ընթացք առաւ միութեան 105-ամեայ պատմութիւնը եւ ներկայիս իր 111 մասնաճիւղերով, մօտ 26 հազար անդամներով, ան կը գործէ սկաուտական եւ մարզական թեւերով:

Միութեան 100-ամեակին, թէ՛ 2017-ին 1250 մարզիկներով եւ թէ՛ 2018-ին 1200 սկաուտներով Երեւանի հրապարակը տողանցքներ կազմակերպելով, Հ.Մ.Ը.Մ.ը եկաւ գրաւելու իր արժանավայել դիրքը մեր ժողովուրդին մօտ եւ ամբողջ հայաշխարհին մէջ, իբրեւ մեր իրականութեան գլխաւոր մարզական եւ սկաուտական միութիւնը՝ նուիրուած պատանիներու դաստիարակութեան:

Ակնթարթի մը համար, վայրկեանի մը համար կրնար թուիլ, թէ միութեան հարիւրամեայ պատմութիւնը կրնար տեղափոխուիլ կամ նոյնիսկ դադարի ու ետքայլի մատնուիլ, այ-

Երիտասարդութեան հսկայական ներուժը պէտք է պահպանել եւ աճեցնել, որպէսզի անոնք շարունակեն դաստիարակուիլ իբրեւ տիպար քաղաքացիներ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի ճամբով ծառայող ուժ դառնան այն բոլոր գաղութներուն, ուր որ կը գտնուին անոնք:

լեւս ինքզինք գերազանցելու եւ նորանոր ու աւելի բարձր մակարդակի աշխատանքներ յաջողցնելու մարտահրաւէրին առջեւ գտնուելով:

Բայց վերադառնալով իր հիմնադիրներու պատգամին, Հ.Մ.Ը.Մ. փորձեց գտնել նոր գործադաշտեր հայ ժողովուրդին ծառայելու, նոյն ատեն վերանորոգելով եւ թարմացնելով ինքզինք:

Այսպէս, միութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին իր զարգացման ռազմավարական

ծրագիրը մշակելով՝ առաջադրեց միութեան մէջ ստեղծոււմը երիտասարդական բաժանմունքի մը, որուն մաս պիտի կազմեն 18-35 տարեկան Հ.Մ.Ը.Մ.ական տղաք ու աղջիկներ:

Նպատակը ի՞նչ էր այս ծրագիրին: Պարզապէս նոր գործադաշտ ստեղծել չէր:

Նպատակը հասնիլ էր մեր ժողովուրդի երիտասարդ տարիքի այն անդամներուն, որոնք հայկական միջավայրէ դուրս մնացած են, կամ տարիքի բերմամբ այն սկաուտները եւ մարզիկները որոնք կ'անցնին կեանքի ասպարէզ եւ կը հեռանան միութեանական ազգային միջավայրէն՝ կապուած պահել զանոնք միութեան եւ ազգին:

Այս մարտահրաւէրներու դէմ յանդիման կը գտնուէր մեր միութիւնը երկար ժամանակէ ի վեր եւ ձեւեր կը փնտ-





Մեր երիտասարդուքիւնը պահելով եւ զարգացնելով, թափ կու տանք անոնց հայկական եւ ազգային դաստիարակութեան՝ սատարելով հայ մշակոյթի պահպանման եւ տարածման՝ զանոնք փրկելով օտարացումի կորուստէն եւ այլասերման վտանգներէն:



թիւններուն, ըսելիք եւ ընելիք ունենան Հ.Մ.Ը.Մ-ի մէջ:

Այս երիտասարդութեան հսկայական ներուժը պէտք է պահպանել եւ աճեցնել, որպէսզի անոնք շարունակեն դաստիարակուիլ իբրեւ տիպար քաղաքացիներ եւ Հ.Մ.Ը.Մ-ի ճամբով ծառայող ուժ դառնան այն բոլոր գաղութներուն, ուր որ կը գտնուին անոնք:

Այս ծրագիրին ընդմէջէն նաեւ կը հետապնդուի պատրաստութիւնը վաղուան մեր պատասխանատուներուն, վարչականներուն, որոնք պիտի շարունակեն իրենց նախկիններուն գործը:


Առաւել նաեւ, մեր երիտասարդութիւնը պահելով եւ զարգացնելով, թափ կու տանք անոնց հայկական եւ ազգային դաստիարակութեան՝ սատարելով հայ մշակոյթի պահպանման եւ տարածման՝ զանոնք փրկելով օտարացումի կորուստէն եւ այլասերման վտանգներէն:

Երիտասարդները մեր աշխատանքներուն մէջ ներառելով, մենք կը հաւատանք, որ անոնք իրենց քննարկումներով եւ առաջարկներով նոր թարմութիւն եւ կեանք կու տան միութեան համահայկական աշխատանքներուն:

Այս նպատակով է նաեւ, որ միութիւնը յատուկ կարգավիճակ տուաւ այս համագումարներուն, երիտասարդներուն ձայնը, առաջարկները եւ բանաձեւերը հասցնելու համար ուղղակի միութեան գերագոյն ժողովին:

Ներկայ բացը եւ այս ծրագրի կա-

ռէր, թէ ի՞նչպէս աշխատիլ եւ ի՞նչ ծրագրել, որպէսզի երիտասարդ-երիտասարդուհիներ շարունակեն իրենց միութենական ծառայութիւնը: Ունաեւ, ի՞նչպէս ընել, որ այն երիտասարդները, որոնք պատանի տարիքէն Հ.Մ.Ը.Մ-ին չեն անդամագրուած, հեռու մնացած են անկէ, օտարութեան մէջ զրկուելով ազգային առողջ մթնոլորտէն ու նաեւ, այն երիտասարդները, որոնք չեն ուզեր անդամակցիլ մեր այսպէս կոչուած դասական միութիւններուն,



րեւորութիւնը շեշտելու համար պէտք է նախ հարցնել, թէ հիմա ո՞ր է հայ երիտասարդութիւնը եւ ո՞ր է Հ.Մ.Ը.Մ-ը այս աշխատանքներուն մէջ: Հարցումներ, որոնց պատասխանները պիտի փորձէ գտնել այս համագումարը, երիտասարդներու ճամբով, երիտասարդներու համար:

Պէտք է վերաբեռել մինչեւ հիմա որդեգրուած միջոցները, արժեւորել երիտասարդներու ներկայութիւնը մեր միութենական իրականութեան եւ հաւաքական մեր կեանքին մէջ:

Ներկայ օրերուն, մանաւանդ քորոնա համաճարակին ստեղծած ընկերային վիճակի լճացումէն ետք, շատ աւելի կարիք կը զգացուի նման աշխատանքներու, որովհետեւ օրէ օր աւելի նկատելի կը դառնայ մեր ազգային եւ միութենական կառոյցներուն մէջ երիտասարդութեան բացակայութիւնը: Եւ մեր միութիւնները ամէնուրեք կը գործեն տակաւին մեծ մասամբ իրենց անցեալի ժառանգին վրայ եւ վայրկեան մը ապագան մշուշոտ կրնայ թուիլ բոլորին:

Մէկ իրականութիւն, որ կարելի չէ ուրանալ, այն ալ Հ.Մ.Ը.Մ-ի հաւատքն է եւ նուիրումը՝ պահպանելու եւ շարունակելու միութեան առաքելութիւնը, դաստիարակելու եւ կրթելու հայ պատանին ու երիտասարդը, իբրեւ ֆիզիքապէս եւ հոգեպէս տոկուն հայ քաղաքացի, ամբողջական Հայաստանի տեսլականով մեծցող հայ մարդ:

Ահա այսպէս, այսօր, Հ.Մ.Ը.Մ-ը շարունակէ 105-ամեայ իր երթը՝ քաջ գիտնալով որ առանց ամբողջական Հայաստանի տեսլականին կարելի չէ հայ ժողովուրդի գոյութիւնը պահպանել, կարելի չէ հզօր եւ բարգաւաճ Հայաստան ունենալ եւ մանաւանդ կարելի չէ վերականգնող Արցախ ունենալ:

Այս առիթով շնորհակալութիւն համագումարին յաջողութեան նպաստած բոլոր քոյրերուն եւ եղբայրներուն: Շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան եւ մեր հիւրերուն, որոնք իրենց ներկայութեամբ կը պատուեն մեր մեծ միութիւնը:

Երիտասարդները մեր աշխատանքներուն մէջ ներառելով, մենք կը հաւատանք, որ անոնք իրենց քննարկումներով եւ առաջարկներով նոր թարմութիւն եւ կեանք կու տան միութեան համահայկական աշխատանքներուն:

# Հ.Մ.Ը.Մ.Ը ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՀՈԳԵՄՏԱՔԻՈՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՎ ԴԱՐՔՆՈՒՄԻ ԴՊՐՈՑ Է

(Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՍԱՐՀԱՏ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՅՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ՆԻԿՈՍԻԱ, ԿԻՊՐՈՍ)

**Հ**.Մ.Ը.Մ.-ի Կեղրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի վարչութեան կազմակերպութեամբ, այսօր, այս արարողութեամբ, Կիպրոսի մէջ մեկնարկը կը կատարենք Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագումարին, ուր երկու օրուան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ կառույցներու անդամ երիտասարդ քոյրեր եւ եղբայրներ հայ երիտասարդին ուրոյն դերը եւ արժանի տեղը պիտի ճշդեն մեր կեանքին մէջ, քանի այս երիտասարդութեան լուսաւոր ապագայով պայմանաւորուած՝ պիտի կենսագործուին եւ իրականանան ծրագիրներ՝ ի շահ Հայաստանի, Արցախի եւ հայապահպանման:



բարոյական հակայական զոհողութիւններու շնորհիւ:

Հ.Մ.Ը.Մ.-ը սերունդներու հոգեմտաւոր եւ ազգային արժէքներով դարձնուած զպրոց է, բառին ամբողջական առումով: Մեր ազգին հոգեւոր, մշակութային, ազգային եւ համահայկական արժէքները եւ խոչանքները միշտ եղած են մղիչ ուժերը Հ.Մ.Ը.Մ-ի կեանքին ու գործունէութեան:

Այս սրահին մէջ գտնուողները հաստատ գիտեն, որ այս եւ ասոր նման նախաձեռնութիւններ, Կիպրոսի մէջ թէ՛ այլուր, պիտի համախմբեն սերունդներ, դժուարեանները զանոնք ազգային դաշտաբարախօսութեամբ, մղեն հայապահպանման, հայակերտման եւ Հայ Դատի պայքարի մարդկային ու հայկական ամէնէն ազնիւ, նուիրեալ ու նպատակասլաց խոչանքներով:

Անկասկած, համագումարին մասնակից երիտասարդներուն թիւը արդիւնք է հետեւողական աշխատանքի, նուիրուածութեան, Հ.Մ.Ը.Մ-ի մատղաջ սերունդի ֆիզիքայէս առողջ, նկարագիրով անբասիր, հայեցի դաստիարակութեամբ զինուած, գիտակից քոյր-եղբայրներու կոչումին: Այս ներկայութիւնը կը թելադրէ ըլլալ ճկուն, ըլլալ հանդուրժող եւ լայնամիտ: Հարկ է ամէն ճիշդ ի գործ դնել, որպէսզի Հ.Մ.Ը.Մ. շարունակէ իր շուրջը համախմբել հայ երիտասարդութիւնը՝ իր բոլոր շերտերով, անխտիր:

Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագումարին մասնակցող բոլոր քոյրերն ու եղբայրները այս պահուն պատենչի վրայ կանգնած, հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ-ի սկզբունքներուն, իրենց ամբողջ կարողականութիւնը ի սպաս դրած են մեր ժողովուրդի ծառայութեան, խոստանալով, որ առաւել հաւատքով ու սիրով պիտի շարունակեն ծառայել իրենց առաքելութեան:

Պատահական չէ, որ այսօր, այստեղ կը գտնուին աշխարհի գանազան շրջաններէ երիտասարդ քոյրեր եւ եղբայրներ, Աւստրալիայէն մինչեւ Մ. Նահանգներ, Լիբանանէն մինչեւ Հայաստան եւ Հարաւային Ամերիկա, հաւատալով Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան: Այս երիտասարդները իրենց հանգիստը ձգելով, քանի մը օրուան համար կը գտնուին Կիպրոս, որպէսզի օժտուին նոր գիտելիքներով, եւ նոր պարտականութիւններ ստանձնելով վերադառնան իրենց շրջանները: Մենք պէտք է վերանորոգուինք եւ վերակազմաւորուինք՝ կերտելու ապագան եւ ոչ թէ ներկային մէջ ապրինք մեր անցեալը:

Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի վարչութիւնը մեծ ուրախութեամբ եւ պատասխանատուութեամբ ընդունեց կազմակերպել այս համագումարը Կիպրոսի մէջ, եւ այս առիթէն օգտուելով, խօսքս փակելէ առաջ կ'ուզեմ վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնել Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան, որ մեր շրջանին վստահեցաւ, որպէսզի կազմակերպենք Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագումարը: Միջին Արեւելքի, յատկապէս Լիբանանի եւ Սուրիոյ մէջ տիրող տագնապները, ինչպէս նաեւ Արցախի շրջափակումը եւ տիրող քաղաքական անորոշութիւնը մեզմէ կը պահանջեն կառուցածութիւն եւ ամուր կեցուածք, որոնց մենք միշտ պատրաստ ենք:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի անբաժան մաս, մեր վարչութիւնը կը հաւատայ, որ շատ ընելիք ունինք՝ մեր պատանիներն ու երիտասարդները համախմբելու, դաստիարակելու եւ ազգային նպատակներով առաջնորդելու համար: Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը լաւ պէտք է կարդալ՝ տեսնելու համար, թէ մարմնակրթական այս միութիւնը ինչպէ՞ս կարողացած է 105 տարի կանգուն մնալ՝ հաւատաւոր սկսողներու, նուիրեալ մարզիկներու եւ անձնուէր վարչականներու նիւթական եւ

Սիրելի՛ երիտասարդ քոյրեր եւ եղբայրներ, համագումարին մասնակցողներ, ձեզի կը մաղթեմ յաջողութիւն, որպէսզի նոր լիցքեր ստացած, համագումարէն ուժ առած՝ շարունակէք Սփիւռքի մէջ հայ երիտասարդութեան մօտ ազգային կեանքի զօրացման հայանուէր Սուրբ գործը: Յաջողութիւն ձեր աշխատանքներուն:



# Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-Ի ՆԻԿՈՍԻՈՅ ԱԿՈՒՄԲԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ



**Կ**իպրոս այցելել եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի ակումբը չայցելել կարելի չէր:

Երիտասարդական համագումարին առաջին օրը, Ուրբաթ, 28 Ապրիլի երեկոյեան, մասնակից երիտասարդները այցելեցին Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի ակումբ եւ մօտէն ծանօթացան այնտեղ կատարւող աշխատանքին:

Երիտասարդները նախ շրջեցան ակումբին զանազան բաժինները, ապա ներկայ գտնուեցան սկաուտական շաբաթօրեայ հաւաքի մը, ուր գայլիկ-արծուիկներ գիտական տեղեկութիւններ կը սորվէին իրենց պատասխանատուներէն: Տեղւոյն

վրայ նկարուեցան խմբանկարներ եւ անցան ակումբին ֆուլթայլի դաշտը, ուր Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը միութեան նշանակը ներկայացնող յուշանուէր մը յանձնեց Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի վարչութեան, յանձինն ատենապետ եղբ. Սարհատ Տէմիրճեանի:

Համագումարին մասնակիցները առիթէն օգտուելով ֆուլթայլ խաղացին սկաուտական հաւաքին ներկայ գայլիկներուն հետ, ուրախացան եւ ուրախացուցին զիրար: Ապա, անոնք ակումբին հրաժեշտ տուին Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին առիթով կանգնեցուած յուշարձանին առջեւ խմբանկար մը նկարուելով:







## ՀԻՒՐԵՆԿԱԼՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԿՈՂՄԷ

Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Կիպրոսի ակումբին հրաժեշտ տալիս ետք, երիտասարդական համագումարին մասնակիցները հիւրընկալուեցան Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի եւ ազնիւ տիկնոջ՝ Մակիրին կողմէ, ներկայացուցիչին բնակարանին մէջ, Նիկոսիա:

Մտերմիկ եւ հիւրասէր մթնոլորտի մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամները եւ աշխարհի զանազան շրջաններէն ժամանած երիտասարդները այդ օրը ընթրիքի հիւրը եղան Մահտեսեան ամուլին, այս առիթով փոխանակելով շնորհակալութեան եւ երախտագիտութեան ջերմ խօսքեր:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի նշանակը ներկայացնող յուշանուէրով մը պատուեց Մահտեսեան ընտանիքը:







## ԿԻՊՐՈՍԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. նահատակները յարգող միութիւնն է:

Հ.Մ.Ը.Մ. կը խոնարհի թուրքին եաթաղանին զոհ գացած բոլոր նահատակներու յիշատակին դիմաց, ինչ ազգի ալ պատկանին անոնք, ո՛ւր ալ ինկած ըլլան անոնք, ինչ պայմաններու մէջ ալ զոհուած ըլլան:

Յոյնը, կիպրացին եւս թուրքին զոհերը դարձած են: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական համագումարի մասնակիցներուն համար բարոյական պարտք էր յիշել սեփական հայրենիքի պաշտպանութեան ընթացքին թուրքին հարձակին զոհ գացած յոյն-կիպրացի նահատակները, որոնք 1974-ին դէմ դրին Կիպրոս ներխուժած թրքական ուժերուն, դիմադրեցին հերոսաբար եւ ինկան անձուիրաբար:

Այս նպատակով, երիտասարդական համագումարի փակումէն անմիջապէս ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչական անդամներու առաջնորդութեամբ, համագումարին մասնակիցները ուղղուեցան Թիմփօ, Կիպրոսի նահատակաց յուշակոթող եւ յարգանքի իրենց տուրքը ընծայեցին 300 յոյն եւ կիպրացի զինուորներու, որոնք 1974-ին նահատակուեցան Կիպրոսի մայրաքաղաքին եւ օդակայանին պաշտպանութեան կռիւներուն ընթացքին:

Թիմփօ հասնելով, Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութեան անունով՝ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան դափնեպսակ մը գետեղեց նահատակներու գլխաւոր յուշակոթողին: Ապա, Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան ատենադպիր եղբ. Յակոբ Գազանճեան այցելուներուն ներկայացուց պատմականը 1974-ի ներխուժումին եւ այս վայրին



մէջ նահատակուած յոյն-կիպրացիներու սիրագործութեան: Ան նշեց, որ նահատակներու շարքին էր յունահայ մը՝ Բարսեղ Պիպեռեան, որուն անունով մօտերս փողոց մը պիտի կոչուի Նիկոսիոյ մէջ:

Այնուհետեւ, համագումարի մասնակից երիտասարդները շրջեցան 300 նահատակներու շիրիմները, ծանօթացան այնտեղ հանգչած երկու փոքր օդանաւերու, որոնք 1974-ին Կրետէէն Կիպրոս փոխադրած են յոյն քումանտոներ՝ դէմ դնելու համար թրքական ներխուժող ուժերուն:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան անդամ եղբ. Պարէտ Գազանճեան յունարէն խօսքով մը ոգեկոչեց յիշատակը այն բոլոր նահատակներուն, «որոնք ինկան պաշտպանելով հայրենիքը, ափ մը հող ապահովելու սերունդներու համար, որպէսզի մենք շարունակենք արժանապատուութեամբ գոյատեւել իրրեւ ժողովուրդ»:



# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՄՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԻՊՐՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅՈՒՇԱՐՁԱՆ

**Ե**րիտասարդական Բ. համագումարի աշխատանքներու աւարտէն օր մը ետք, Կիրակի, 30 Ապրիլ 2023-ի կէսօրին, Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական Բ. համագումարը ներկայացնող բազմանդամ պատուիրակութիւն մը, բաղկացած Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի վարչութեան անդամներէ եւ համագումարին մասնակից երիտասարդ-երիտասարդուհիներէ, այցելեց Նիկոսիոյ Ազգային Առաջնորդարան եւ սիրալիբ ընդունելութեան արժանացաւ Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեանի կողմէ:

Հանդիպումին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան շնորհակալութիւն յայտնեց Սրբազան հօր, որ ներկայ գտնուեցաւ երիտասարդական Բ. համագումարի պաշտօնական բացման եւ նոյն օրը, յետմիջօրէին, զրոյց մը վարեց համագումարի մասնակիցներուն հետ: Այս առիթով, առ ի գնահատանք եւ երախտագիտութիւն, եղբ. Նաճարեան համագումարին անունով Սրբազանը պատուեց Հ.Մ.Ը.Մ-ի նշանակը ներկայացնող յուշանուէրով մը:

## ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՍՐՏԻ ԽՕՍՔ

Իրեն ընծայուած պատիւէն մեծապէս զգացուած, Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեան արտասանեց սրտի խօսք մը, նշելով, թէ այս Առաջնորդարանը, ինչպէս մեր բոլոր գա-



ղութներու Առաջնորդարանները, պէտք է ըլլան մեր ժողովուրդին ամէնօրեայ տունները: Եկեղեցիները, ակումբները եւ մեր միութիւնները իմաստ չունին եթէ անոնց մէջ չնչաւոր մարդ չկայ: Նոր սերունդ չկայ, նոր ուժով, նոր հաւատքով աշխատանքը շարունակելու կամք չկայ:

Խորէն Արք. անդրադարձաւ հայութեան իրավիճակին եւ յայտնեց, որ «Այսօր դժուարութեան դիմաց է Հայաստանը: Դժուարութեան դիմաց է Արցախը: Սակայն շատ աւելի մեծ դժուարութեան դիմաց է Սփիւռքը: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը երկրորդ տարին ըլլալով յայտարարած է «Սփիւռքի տարի», ինչ որ մեզմէ իւրաքանչիւրին նոր մղում եւ նոր հորիզոն կու տայ նոր կամքով եւ նոր հաւատքով շարունակելու մեր գործերը: Սփիւռքը մաշուամի մէջ է: Այսօր Սփիւռքը կը տագնապի ամէն մակարդակի վրայ, ոչ միայն հոգեւոր, այլեւ՝ ազգային մակարդակի վրայ եւս, որովհետեւ այսօր մեր արժէքները փոխուած են եւ մարդիկ սկսած են հեռանալ իրենց ազ-







գալին պատկանելիութենէն, իրենց աւանդական արժէքներէն եւ սկսած են օտարանալ: Ժամանակին, ինչ որ հայկական է պատուական է կ'ըսէինք, ներկայիս շատեր սկսած են խրտչլլ հայկականութենէ»:

մի՛ ամչնաք ձեր հայկականութեամբ: Պատիւ զգացէք, որ մենք աշխարհին մշակոյթ տուած ենք: Հպարտ զգացէք, որ մենք աշխարհին տուած ենք մեծ դէմքեր՝ երաժիշտներ, գրագէտներ, ճարտարապետներ, գիտնականներ եւ այլն: Այդ

Խորէն Արք. երիտասարդութեան թեւադրեց. «Բոլորս ալ հայ ենք: Մէկ բան պէտք է գիտնանք, որ մեր ճակատին, բոլորիս ճակատին, հայկական միւռոն կայ: Բոլորիս երակներուն մէջ հայկական արիւն կայ: Ուր որ երթանք պէտք է փաստենք մեր հայկականութիւնը: Միշտ պէտք է յիշենք Վարդանանց այն խօսքը, թէ եկեղեցին եւ Աւետարանը մեր տունն են, քրիստոնէութիւնը մեր հաւատքն է, մեր մորթին գոյնն է, որմէ չենք կրնար ձերբազատուիլ»:

Շարունակելով, Խորէն Արք. իր խօսքը եզրափակեց ըսելով. «Հայերէն խօսիլը կարեւոր է, հայերէն երգելը կարեւոր է: Իսկ ամէնէն կարեւորը հայերէն զգացում ունենալն է: Հետեւաբար, Արովեանի բառերով, որքան լեզու կ'ուզէք գիտցէք, բայց դուք ձեզի հայ զգացէք: Երբեք

## ՉԵՐ ՄԷՉ ԹՈՂ ՎԵՐԱՊՐԻ ԵՒ ՎԵՐԱԹԱՐՄԱՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄԸ

(ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԽՈՐԷՆ ԱՐՔ.ՏՈՂԱՄԱՃԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍԳԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

**Ա**նճնապէս, կրօնական դասին, մեր գաղութի երեսփոխանական ժողովին եւ Ազգային Վարչութեան անունով շնորհակարութիւն կը յայտնեմ, որ պաշտօնապէս Առաջնորդարան կ'այցելէք եւ մեր օրհնութեամբ կ'ուզէք փակել երիտասարդական ձեր համագումարը:

Այս Առաջնորդարանը, ինչպէս մեր բոլոր գաղութներու Առաջնորդարանները, պէտք է ըլլան մեր ժողովուրդին ամէնօրեայ տունները: Եկեղեցիները, ակումբները եւ մեր միութիւնները իմաստ չունին եթէ անոնց մէջ շնչաւոր մարդ չկայ: Եւ երբ կ'ըսեմ շնչաւոր մարդ, յատկապէս նկատի ունիմ նոր սերունդ, նոր ուժ, նոր հաւատքով աշխատանքը շարունակելու կամք:

Այս տան մէջ մենք ընդունած ենք նախագահներ, Կաթողիկոսներ, նախարարներ, ընդունած ենք մեր բոլոր կառոյցներու պատասխանատուներ, անոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.Ի նախկին Կեդրոնական Վարչութեան ատենապետներ, ներկայ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եւ անդամներ:

Դուք այսօր կը մտնէք ազգային Առաջնորդարանի ոսկեայ մատեանին մէջ, որովհետեւ առաջին երիտասարդներն էք, որ Առաջնորդարան կ'այցելէք, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.Ի երիտասարդական համագումարի մասնակիցներ: Ես ձեր ներկայութիւնը այստեղ կ'ուզեմ նկատել մէկ ամբողջութիւն: Հայկական առածները կ'ըսեմ «Մէկ ծաղիկով գարուն չի գար», «Մէկ ձեռքով չենք կրնար ծափել», «Մէկ ձեռքով երկու ձմեռուկ չենք կրնար բռնել»: Այսօր, մենք այստեղ ներկայութիւն ենք իբրեւ աշխարհի գանազան երկիրներու ներկայացուցիչներ, երիտասարդներ:

Այսօր դժուարութեան դիմաց է Հայաստանը: Դժուարութեան դիմաց է Արցախը: Սակայն շատ աւելի մեծ դժուարութեան դիմաց է Սփիւռքը: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը երկրորդ տարին ըլլալով յայտարարած է «Սփիւռքի տարի», ինչ որ մեզմէ իւրաքանչիւրին նոր մղում եւ նոր հորիզոն կու տայ նոր կամքով եւ նոր հաւատքով շարունակելու մեր գործերը: Սփիւռքը մաշունի մէջ է: Այսօր Սփիւռքը կը տագնապի



դէմքերը ահագին բան տուած են մարդկութեան եւ քաղաքակրթութեան: Դժբախտաբար, սակայն, շատեր չեն գիտեր, թէ ո՞վ է հայը եւ ի՞նչ տուած է աշխարհին: Իսկ երբ չեն գիտեր, յաճախ տկար կը զգան իրենք զիրենք: Չմոռնաք բանաս-

տեղծին խօսքերը՝ «մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում»: Չմոռնաք նաեւ՝ «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»: «Իմ անունս է պայքար, վախճանս է յաղթանակ»: ... Ձեր վարձքը կատար, ուր որ երթաք Աստուած ձեզի հետ ըլլայ: Ոտնակոխեցէք դժուարութիւնները եւ հասէք ձեր նպատակին: Ապրի՛ք, երկար ապրի՛ք, Աստուծոյ շունչով եւ հայու ոգիով ապրի՛ք: Բարձրացէք եւ ձեզի հետ ձեր շրջապատն ալ բարձրացուցէք» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 20-21):

**ՀԱՅՈՑ ԾԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ**

Կաթողիկոսական Փոխանորդին հետ հանդիպումէն ետք, Հ.Մ.Լ.Մ.ի պատուիրակութիւնը, Խորէն Արք. Տողրամաճեանի եւ Կեդրոնական Վարչութեան անդամներու առաջնորդութեամբ, ուղղուեցաւ Առաջնորդարանի շրջափակին մէջ գտնուող, Հայոց Յեղասպանութեան նահատակներու յուշարձանը, որուն առջեւ Հ.Մ.Լ.Մ.ի անունով դափնեպսակ մը

ամէն մակարդակի վրայ, ոչ միայն հոգեւոր, այլեւ՝ ազգային մակարդակի վրայ եւս, որովհետեւ այսօր մեր արժեքները փոխուած են եւ մարդիկ սկսած են հեռանալ իրենց ազգային պատկանելիութենէն, իրենց աւանդական արժեքներէն եւ սկսած են օտարանալ: Ժամանակին, ինչ որ հայկական է պատուական է կ'ըսէինք, ներկայիս շատեր սկսած են խառնիլ հայկականութենէ: Ես կ'ուզեմ, որ իբրեւ երիտասարդներ, ձեր մէջ վերապրի եւ վերաթարմանայ հայկականութեան զգացումը: Բոլորս ալ հայ ենք: Մէկ բան պէտք է գիտնանք, որ մեր ճակատին, բոլորիս ճակատին, հայկական միւտոն կայ: Բոլորիս երակներուն մէջ հայկական արիւն կայ: Ուր որ երթանք պէտք է փաստենք մեր հայկականութիւնը: Միշտ պէտք է յիշենք Վարդանանց այն խօսքը, թէ եկեղեցին եւ Աւետարանը մեր տունն են, քրիստոնէութիւնը մեր հաւատքն է, մեր մորթին գոյնն է, որմէ չենք կրնար ձեռքազատիլ:

Սիրելի՛ երիտասարդներ, յիշեցէք նաեւ նշանաւոր գրագետ Խաչատուր Աբովեանի խօսքերը՝ «Տասը լեզու տրվեցէք, սակայն ձեր լեզուն եւ հաւատքը ամուր պահեցէք»: Ես ուրախ եմ, որ ձեզմէ շատերը կու գան այնպիսի շրջաններէ, ուր հայկական դպրոց չկայ, բայց դուք բոլորդ կը խօսիք լաւ հայերէն: Ես կը խոնարհիմ եւ կը համբուրեմ ձեր ճակատները: Դուք բախտաւոր էք, որ հայերէն կը խօսիք: Չըլլայ, թէ մտածէք որ տկար ձեռով կը խօսիք: Հայերէն խօսիլը կարեւոր է, հայերէն երգելը կարեւոր է: Իսկ ամէնէն կարեւորը հայերէն զգացում ունենալն

է: Հետեւաբար, Աբովեանի բառերով, որքան լեզու կ'ուզէք գիտցէք, բայց դուք ձեզի հայ զգացէք: Երբեք մի՛ ամչնաք ձեր հայկականութեամբ: Պատիւ զգացէք, որ մենք աշխարհին մշակոյթ տուած ենք: Հպարտ զգացէք, որ մենք աշխարհին տուած ենք մեծ դէմքեր՝ երաժիշտներ, գրագէտներ, ճարտարապետներ, գիտնականներ եւ այլն: Այդ դէմքերը ահագին բան տուած են մարդկութեան եւ քաղաքակրթութեան: Դժբախտաբար, սակայն, շատեր չեն գիտեր, թէ ո՞վ է հայը եւ ի՞նչ տուած է աշխարհին: Իսկ երբ չեն գիտեր, յաճախ տկար կը զգան իրենք զիրենք: Չմոռնաք բանաստեղծին խօսքերը՝ «Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում»: Չմոռնաք նաեւ՝ «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»: «Իմ անունս է պայքար, վախճանս է յաղթանակ»:

Բոլորիդ կը մաղթեմ, որ ձեր կեանքին մէջ յաղթանակ տանիք եւ օրին մէկը, երբ դարձեալ հանդիպինք, ձեզի նայինք եւ հպարտ զգանք, որ դուք Կիպրոսի այս համագումարին մասնակցեցաք եւ հիմա բարձր դիրքերու հասած էք եւ կացութիւն փոխած էք: Ձեր վարձքը կատար, ուր որ երթաք Աստուած ձեզի հետ ըլլայ: Ոտնակոխեցէք դժուարութիւնները եւ հասէք ձեր նպատակին: Ապրի՛ք, երկար ապրի՛ք, Աստուծոյ շունչով եւ հայու ոգիով ապրի՛ք: Բարձրացէք եւ ձեզի հետ ձեր շրջապատն ալ բարձրացուցէք:

**Երիտասարդական Բ. համագումարի լուսանկարները՝ ԿԱՐԵՆ ԳԱՀԱՆՃԵԱՆԻ**





### ՈՒՂՂՈՒԻՆՔ ՄԻՇՏ ՅԱՌԱՋ

*(ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՂԲ. ՌԱԶՄԻԿ ԱՐԱՄԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍԻԸ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵԻ, ՆԻԿՈՍԻԱ)*

Հայոց Յեղասպանութեան 108-ամեակը կ'ոգեկոչենք ազգային-քաղաքական ծանր պայմաններու մէջ:

Երբ մտածենք Հայոց Յեղասպանութեան մասին, կը տեսնենք այն բոլորը, զոր կորսնցուցինք. հողեր, բնակարաններ, հարստութիւն, ֆիզիքական կորուստ, վիրաւորանք, տեղահանութիւն եւ տառապանք:

Մեզմէ իւրաքանչիւրին պարտականութիւնը ո՛չ միայն յիշել է մեր անմեղ նահատակները եւ աղօթել անոնց համար, այլե՛ անոնց հոգիներուն հանգիստ պարգեւելու համար ամրապնդել մեր հաւատքը, տէր մնալ մեր ինքնութեան եւ գոյատեւել՝ հակառակ բոլոր դժուարութիւններուն:

Մենք այսօր յարգանքով կը խոնարհինք մեր 1.5 միլիոն նահատակներու յիշատակին դիմաց եւ կ'աղօթենք հաւատարիմ մնալ անոնց կտակին:

Մենք այսօր ցոյց կու տանք համայն աշխարհին, որ մենք տակաւին կանք ու մեր Սուրբ միութեան միջոցով պիտի վերանորոգենք մեր ուխտը:

108 տարիներ տարածուեցանք, 108 տարիներ չարչարուեցանք, 108 տարիներ պայքարեցանք մեր գոյատեւման համար: Սակայն, այսօր, երիտասարդական այս համագումարին մեր ներկայութիւնը 12 տարբեր շրջաններէ, 26 անդամներով, փաստն է մեր գոյատեւման:

Ինչպէս մեր քայլերօրը կ'ըսէ՝ «Յառա՛ջ նահատակ, ցեղի անմահներ»:

Մենք ուղղուինք մի՛շտ յառաջ, հասնելու համար մեր Սուրբ նպատակին:

Կեցցէ՛ Հ.Մ.Բ.Մ.ը եւ հայ երիտասարդութիւնը:



զետեղեց կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան:

Ապա, համագումարի մասնակիցներուն կողմէ խօսք առաւ Արմէրոյէն եղբ. Ռազմիկ Արամեան: Ան ըսաւ, որ «Հայոց Յեղասպանութեան 108-ամեակը կ'ոգեկոչենք ազգային-քաղաքական ծանր պայմաններու մէջ: Երբ մտածենք Հայոց Յեղասպանութեան մասին, կը տեսնենք այն բոլորը, զոր կորսնցուցինք. հողեր, բնակարաններ, հարստութիւն, ֆիզիքական կորուստ, վիրաւորանք, տեղահանութիւն եւ տառապանք»:

Եղբ. Արամեան շեշտեց, որ մեզմէ իւրաքանչիւրին պարտականութիւնը ո՛չ միայն յիշել է մեր անմեղ նահատակները եւ աղօթել անոնց համար, այլե՛ անոնց հոգիներուն հանգիստ պարգեւելու համար ամրապնդել մեր հաւատքը, տէր մնալ մեր ինքնութեան եւ գոյատեւել՝ հակառակ բոլոր դժուարութիւններուն»:

«Մենք այսօր յարգանքով կը խոնարհինք մեր 1.5 միլիոն նահատակներու յիշատակին դիմաց եւ կ'աղօթենք հաւատարիմ մնալ անոնց կտակին: Մենք այսօր ցոյց կու տանք համայն աշխարհին, որ մենք տակաւին կանք ու մեր Սուրբ միութեան միջոցով պիտի վերանորոգենք մեր ուխտը:

«108 տարիներ տարածուեցանք, 108 տարիներ չարչարուեցանք, 108 տարիներ պայքարեցանք մեր գոյատեւման համար: Սակայն, այսօր, երիտասարդական այս համագումարին մեր ներկայութիւնը 12 տարբեր շրջաններէ, 26 անդամներով, փաստն է մեր գոյատեւման», եզրափակեց եղբ. Արամեան:

Այնուհետեւ, այցելութիւնը փակուեցաւ Սրբազան հօր «Պահպանիչ»ով եւ Հ.Մ.Բ.Մ.ի քայլերդ «Յառաջ նահատակ»ով:



# ԿԻՊՐՈՍԻ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-Ի ՃԱՇԿԵՐՈՅԹ-Ը՝ Ի ՊԱՏԻ ԵՐԻՏԱՄԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՄ

## Հ.Մ.Ը.Մ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԻ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԴԳԻՄ ՄԱՀՏԵՍԵԱՆԸ

**Կ**ազմակերպութեամբ Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի շրջանի վարչութեան, Շաբաթ, 29 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Նիկոսիոյ «Քլէոփաթրա» պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը՝ ի պատիւ Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագումարի մասնակիցներուն:

Իրենց ներկայութեամբ ճաշկերոյթը պատուեցին Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Կիպրոսի ազգային-կուսակցական մարմիններու, ՀՕՄ-ի եւ Համագայինի տեղական վարչութիւններու ներկայացուցիչներ եւ աւելի քան հարիւր կիպրահայեր:

Երեկոյին բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Մեկուսի վարչութեան ատենապետ եղբ. Սարհատ Տէմիրճեան: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագումարը իր աւարտին հասաւ օրակարգի բոլոր կէտերու քննութեամբ: Ապա, ան անդրադարձաւ երիտասարդութեան կարեւորութեան եւ ըսաւ. «Երիտասարդութիւնը եղած է ու կը մնայ մնայուն ուշադրութեան առարկայ: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ նկարագիր կը կերտուի, անհատականութիւն կը դարձնուի, հաճելի եւ օգտակար մթնոլորտի մէջ: Այս ճաշկերոյթ խրախուսանքին առիթը պիտի ունենաք մօտէն ծանօթանալու համա-



գումարին մասնակցած երիտասարդներուն: Վերջապէս, այսօրուան երիտասարդները վաղուան մեր պատասխանատուներն են: Համագումարին մասնակցած քոյրերն ու եղբայրները պիտի դառնան Հ.Մ.Ը.Մ-ի եւ ազգային մեր կառույցներու մարդկային ազնուութեան եւ հայկական մաքուր դիմագիծի կերտման դրօշակակիրները»:

Շարունակելով, եղբ. Տէմիրճեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, որ Կիպրոսը ընտրեց իբրեւ համագումարի կազմակերպման վայր: Ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութիւնը հաւատարմով Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան եւ հետապնդած նպատակներուն, առանց վարանելու, նուիրումով, իր կարելին ի գործ դրաւ կազմակերպելու համագումարը, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Կիպրոսի գաղութի յարատեւման, յաջողութեան եւ վերելքին համար:

Եղբ. Տէմիրճեան այնուհետեւ իր խօսքը համագումարի մասնակիցներուն ուղղելով ըսաւ. «Սիրելիներ, ձեր ներկայութիւնը գեղեցիկ երեւոյթ էր: Դուք կարողացաք արդիւնաւէտ ըլլալ: Կարողացաք յաղթական, ուրախ մթնոլորտ ստեղծել: Մենք ձեր մէջ տեսանք վեհանձնութիւն, փոխադարձ օգնութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատելի զգացում: Դարձէ՛ք փարոս՝ հայ երիտասարդութիւնը ներգրակելու: Կերտեցէ՛ք Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հայ Դատի յաղթական ապագան» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 27):

Իր խօսքին աւարտին, եղբ. Տէմիրճեան Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան անունով Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւ-





նը պատուեց յուշանուէրով մը: Ան յուշանուէրը յանձնեց Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանին:

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Եղբայրը առաջին հերթին արժեւորումը կատարեց երիտասարդական երկրորդ համագումարի աշխատանքներուն եւ նշեց, որ անցնող օրերուն, 12 շրջաններէ ժամանած 26 ներկայացուցիչներ լուրջ եւ փորձառու միութենականներու Հ.Մ.Ը.Մ.ական գիտակցութեամբ քննեցին երիտասարդութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ը յուզող զանազան հարցեր եւ փորձեցին գտնել անոնց լաւագոյն լուծումները:

Եղբ. Նաճարեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմական դերակատարութեան եւ շեշտեց, որ «105 տարին երկար ժամանակ է մարդու մը կեանքին համար, սակայն շատ կարճ ժամանակ է ազգային հաւաքականութեան մը համար, սովաւար, գաղթական եւ որբացած սերունդներէ միտքով ու մարմնով առողջ, ազգային ինքնութեամբ հպարտ եւ արժանապատիւ սերունդներ կերտելու համար»:

«Սփիւռքի մէջ,- յայտնեց եղբ. Նաճարեան,- Հ.Մ.Ը.Մ. աշխատեցաւ եւ ստեղծեց փոքր հայրենիք մը հայրենիքէն հեռու: Նոյն թափով, հաւատքով եւ վճռակամութեամբ ան շարունակեց միութեան գաղափարախօսութիւնը, դաստիարակելով եւ ստեղծելով հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով իր հայրենակիցներուն, պարելու իբրեւ հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը պահելով իրենց սրտին մէջ»:

Ապա, եղբ. Նաճարեան շնորհակալական խօսքեր փոխանցեց համագումարի հիւրընկալ Կիպրոսի շրջանին եւ համագումարի մասնակից շրջաններուն եւ երիտասարդ-երիտա-



սարդուհիներուն: Ան դրուատեց 90 տարիներ առաջ ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Կիպրոսի Մեկուսի շրջանը, որ հակառակ համեմատաբար իր «երիտասարդ» տարիքին եւ անդամներու փոքր թիւին, այսօր իր արժանաւոր տեղը կը գրաւէ Հ.Մ.Ը.Մ.ի աւելի մեծ շրջաններու կողքին՝ ստանձնելով կազմակերպումը վերջին տասնամեակին համա-

Հ.Մ.Ը.Մ.ական երեք ձեռնարկներու՝ երիտասարդական ներկայ համագումարը, միջդիւրանական 9-րդ համագումարը 2016-ին եւ միջդիւրանական 8-րդ համագումարը 2012-ին. իրողութիւն մը, որուն միայն հպարտութեամբ կրնանք անդրադառնալ:

Իր խօսքը եզրափակելով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենապետը անակնկալ մը հրամցուց ներկաներուն, երբ յայտարարեց, որ Կեղրոնական Վարչութիւնը որոշած է «Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի բարգաւաճման բերած նպաստին, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ծրագիրներուն եւ Կեղրոնական Վարչութեան աշխատանքներուն իր մնայուն աջակցութեան համար», միութեան «Արտակարգ» պատուանշանով պարգեւատրել Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը: Ան ընթերցեց պարգեւատրեալին կենսագրական գիծերը եւ Կեղրոնական Վարչութեան անդամ քրոջ եւ եղբայրներուն հետ կատարեց Մահտեսեանին պարգեւատրումը (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 26):

Պարգեւատրման անակնկալէն մեծապէս զգացուած, պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան արտասանեց շնորհակալութեան խօսք մը եւ նշեց, որ «Ձեմ գիտեր որքան արժանի եմ պատուանշանին, սակայն սրտանց շնորհակալ եմ այս պատիւին համար, որ ինձի ընծայեցիք, իբրեւ Կեղրոնական Վարչութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը միշտ բարձր գնահատած եմ, աշխարհի չորս ծագերուն: 105 տարի Հ.Մ.Ը.Մ. իր սկառտներով եւ մարդիկներով կարողացած է հայ երիտասարդութիւնը իրարու մօտ պահել: Շատ մեծ գործ կատարած է: Շատ գնահատելի աշխատանք»:

Վարդգէս Մահտեսեան վերջիչեց Հ.Մ.Ը.Մ.ի հետ իր առաջին ծանօթութիւնը եւ ըսաւ. «Ես անձնապէս, առաջին անգամ, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան մասին տեղեկացայ հանգուցեալ հօրմէս, փոքր տարիքիս: Մանկութեանս ան ինձի կը բացատրէր եւ կը պատմէր Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան մասին: Ան օրին մէկը ինձի ցոյց տուաւ «Մարգիկ» ամսաթերթը: Ես, որ մարմնամարզը սիրող երիտասարդ մըն էի, թերթը «չորս աչքով» կը սպասէի ամէն ամիս: Երբ «Մարգիկ»ը մեր տունը ժամա-





նէր, ես էջ առ էջ կը կարդայի գայն: «Մարզիկ» մեծ ուրախութիւն կը պարգեւէր ինձի»:

Շարունակելով, Վարդգէս Մահտեսեան վերլիչեց. «Մտքիս մէջ դրոշմուած է նաեւ այլ բան մը, զոր երբեք պիտի չմոռնամ: 1961 կամ 1962 թուականին, վստահ չեմ լիչեր, Կիպրոսի Հ.Մ.-Ը.Մ.-ՀԵՄ-ը կազմակերպեց պտոյտ մը դէպի Հալէպ, Գամիշլի եւ Պէյրութ: Անմոռանալի պտոյտ մըն էր ասիկա եւ մինչեւ այսօր չեմ կրնար մոռնալ գայն: Ես այդ պտոյտին շնորհիւ կարողացայ տեսնել Հ.Մ.-Ը.Մ.-ի Հալէպի միջ-մասնաճիւղային շքեղ տողանցքը, հարիւրաւոր սկառուտներով եւ մարզիկներով: Լաւ փորձառութիւն մըն էր, զոր երբեք պիտի չմոռնամ»:

Հուսկ, Վարդգէս Մահտեսեան յաջողութիւն մաղթեց համագումարի մասնակիցներուն եւ իր խօսքը եզրափակեց ըսելով՝ «Ապրի՛ք տղաք, շարունակեցէ՛ք ձեր սուրբ գործը եւ մենք միշտ հպարտ պիտի զգանք Հ.Մ.-Ը.Մ.-ով»:

Պաշտօնական խօսքերու բաժինէն ետք, ճաշկերոյթը խանդավառեց երգիչ Սուրէն Աճէմեան, երգեհոնի ընկերակցութեամբ Յովիկ Ատուրեանի: Տեղի ունեցաւ վիճակահանութեան վաճառք եւ վիճակաձգութիւն:

Ներկաները հայկական տոհմիկ երգերով ու պարերով անցուցին անմոռանալի ժամեր: Ծաշկերոյթը խանդավառութեան դազաթնակէտին հասաւ ազգային-յեղափոխական երգերով:



## ՃԱՆՉՆԱՆՔ

### Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐՏԱԿԱՐԳ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼ ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆ

Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան ծնած է 13 Նոյեմբեր 1950-ին: Նախակրթութիւնը ստացած է Նիկոսիոյ հայկական վարժարանին մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ Նիկոսիոյ անգլիական վարժարանը, զոր աւարտած է 1970-ին: Համալսարանական ուսման տիրացած է Անգլիոյ մէջ, վկայուելով Business Administration-ի եւ Management-ի մասնագիտութիւններուն մէջ:



Վարդգէս Մահտեսեան 1996-1998 կը վարէ Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան ատենապետութեան պաշտօնը: 1996-2006 ան մաս կը կազմէ Կիպրոսի թեմի Ազգային Վարչութեան:

2006-ին, Վարդգէս Մահտեսեան կ'ընտրուի հայ համայնքի ներկայացուցիչ Կիպրոսի խորհրդարանին մօտ: Այնուհետեւ, նոյն պաշտօնին ան կը վերընտրուի երեք անգամ՝ 2011-ին, 2016-ին եւ 2021-ին, ընտրութենէն մինչեւ օրս՝ 17 տարի համայնքը արժանաբար ներկայացնելով Կիպրոսի սահմանադիր իշխանութեան մէջ:

Վարդգէս Մահտեսեան սերտօրէն կ'աջակցի Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի նախաձեռնութիւններուն յաջողութեան: Ան իր ներդրումը կ'ունենայ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ Կիպրոսի մէջ իրականացած ծրագիրներուն, յատկապէս միջ-դիւանական 8-րդ եւ 9-րդ խորհրդաժողովներուն, 2013-ին եւ 2016-ին: Վարդգէս Մահտեսեան իր նիւթական աջակցութիւնը կը ցուցաբերէ Հ.Մ.-Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններուն կազմակերպման եւ կը նպաստէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդական Բ. համագումարին իրականացման, Ապրիլ 2023-ին, Նիկոսիա:

Վարդգէս Մահտեսեան ամուսնացած է Մակի Սահակեանի հետ եւ բախտաւորաւ է երկու զաւակով՝ Վիզէն եւ Գարլա:



# Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-Ի ԿԻՊՐՈՍԻ ՇՐՋԱՆԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ, ՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՅԱԶՈՂԱԾ Է

(Հ.Մ.Ը.Մ.-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ.ՎԱԶԷ ՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՄԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ Ի ՊԱՏԻԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ)

**Ա**յսօր, հոս հաւաքուած ենք Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Կիպրոսի Մեկուսի վարչութեան կազմակերպած պարահանդէսին, ի պատիւ Հ.Մ.Ը.Մ.-ի երիտասարդական Բ. համագումարի մասնակիցներուն:

Իրականութեան մէջ համագումարը վերջ չի գտներ իր երկօրեայ հարուստ օրակարգին աւարտով, այլ՝ իր ընթացքը նոր կը սկսի: Արդարեւ, անցնող օրերուն, 12 շրջաններէ ժամանած 26 ներկայացուցիչներ, լուրջ եւ փորձառու միութեանականներու Հ.Մ.Ը.Մ.-ական գիտակցութեամբ, քննեցին երիտասարդութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.-ը յուզող զանազան հարցեր եւ փորձեցին գտնել անոնց լաւագոյն լուծումները:

Մեր երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.-ականները փաստը տուին, որ 1918-ին Պոլիս հիմնուած այս միութիւնը դարձած է աշխարհասփիւռ կազմակերպութիւն, հարիւրաւոր մասնաճիւղերով, հազարաւոր սկսողներով եւ մարզիկներով, որոնք ազգանուէր աշխատանք կը տանին եւ հայ ժողովուրդին կը ծառայեն ուր որ գտնուին՝ տարածուած միութեան 111 մասնաճիւղերուն եւ աւելի քան 26 երկիրներու մէջ:

Ազգերու պատմութեան մէջ հազուագիւտ են այն կազմակերպութիւնները եւ միութիւնները, որոնք ունին 100 տարիէն աւելի ժառանգ, եւ աշխատանք կը տանին ներշնչուելով իրենց հիմնադիրներու պատգամէն, ինչպէս է Հ.Մ.Ը.Մ.-ը:

Ինչպէս ամէնուրեք, հոս եւս, Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Կիպրոսի

Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Կիպրոսի Մեկուսի շրջանը կը հաստատէ, որ ժամանակի քննութեան յաջողած է եւ պատմութեան մոռցուած էջերուն անցնելու փոխարէն ջարդարար թուրքին կը փաստէ, որ ինքը միշտ ներկայ է ու պիտի մնայ տէրը իր նահատակներու կտակին, պիտի շարունակէ Հայ Գաղթի պայքարը եւ արդար պահանջատիրութիւնը: Հ.Մ.Ը.Մ. պիտի փաստէ, որ այս միութիւնը իր գաղափարներով եւ գործով բարձր պիտի պահէ իր հաւատքը եւ հաստատակամութիւնը բոլոր անոնց դէմ, որոնք պիտի փորձեն քանդել ամբողջական Հայաստանի տեսլականը:

Սփիւռքի մէջ, ինչպէս ամէն տեղ, հոս եւս Հ.Մ.Ը.Մ. աշխատեցաւ եւ ստեղծեց փոքր հայրենիք մը հայրենիքէն հեռու: Նոյն թափով, հաւատքով եւ վրձնակամութեամբ ան շարունակեց միութեան գաղափարախօսութիւնը, դաստիարակելով եւ ստեղծելով հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով իր հայրենակիցներուն, ապրելու իրքերու հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը պահելով իրենց սրտին մէջ:

Մեկուսի շրջանի յաջողական սերունդները իրենց ներշնչումը առին միութեան նշանաբանէն՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»-ը:

105 տարին երկար ժամանակ է մարդու մը կեանքին համար, սակայն շատ կարճ ժամանակ է ազգային հաւաքականութեան մը համար, սովահար, գաղթական եւ որբացած սերունդներէ միտքով ու մարմնով առողջ, ազգային ինքնութեամբ հպարտ եւ արժանապատիւ սերունդներ կերտելու համար:

Այսպիսով Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Կիպրոսի Մեկուսի շրջանը կը հաստատէ, որ ժամանակի քննութեան յաջողած է եւ պատմութեան մոռցուած էջերուն անցնելու փոխարէն ջարդարար թուրքին կը փաստէ, որ ինքը միշտ ներկայ է ու պիտի

մնայ տէրը իր նահատակներու կտակին, պիտի շարունակէ Հայ Դատի պայքարը եւ արդար պահանջատիրութիւնը: Հ.Մ.Ը.Մ. պիտի փաստէ, որ այս միութիւնը իր գաղափարներով եւ գործով բարձր պիտի պահէ իր հաւատքը եւ հաստատակամութիւնը բոլոր անոնց դէմ, որոնք պիտի փորձեն քանդել ամբողջական Հայաստանի տեսլականը, Հայաստանի մէջ, Արցախի մէջ թէ՛ այլուր:

Սփիւռքի մէջ, ինչպէս ամէն տեղ, հոս եւս Հ.Մ.Ը.Մ. աշխատեցաւ եւ ստեղծեց փոքր հայրենիք մը հայրենիքէն հեռու: Նոյն թափով, հաւատքով եւ վճռակամութեամբ ան շարունակեց միութեան գաղափարախօսութիւնը, դաստիարակելով եւ ստեղծելով հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով իր հայրենակիցներուն, ապրելու իրքերու հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը պահելով իրենց սրտին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը կը շնորհաւորէ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի Կիպրոսի Մեկուսի շրջանը, միութեան նշանաբանով առաջնորդուելու եւ Եւրոպայի ամբողջական հայր հայ պահելու իր առաքելութեան կատարման համար:

Շնորհակալութեան խօսք համագումարի մասնակից շրջաններուն եւ մասնաւանդ մասնակից երիտասարդներուն, որոնք իրենց աշխատանքները, համալսարանները եւ գործերը գոհեցրով, աշխարհի չորս կողմերէն ժամանած են Կիպրոս՝ մասնակից դառնալու Հ.Մ.Ը.Մ.-ական այս կարեւոր հանդիպումին:



Կեդրոնական Վարչութիւնը նաեւ սրբ-տագին շնորհակալութիւն կ'ուզէ յայտ-նել Հ.Մ.Ը.Մ.-ՀեՄ-ի Կիպրոսի Մեկուսի շրջանին, վարչութեան եւ համագումարին յաջողութեան նպաստած բոլոր քոյ-րերուն եւ եղբայրներուն եւ վարձքը կա-տար ըսել բոլոր կամաւոր աշխատողնե-րուն, որոնք նպաստեցին այս ձեռնարկին յաջողութեան:

Բարի վայելում մեր հիւրերուն, որոնք իրենց ներկայութեամբ կը պատուեն մեր մեծ միութիւնը:

90 տարիներ առաջ ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ.-ՀեՄ-ի Կիպրոսի Մեկուսի շրջանը, հակառակ համեմատաբար իր «երիտա-սարդ» տարիքին եւ անդամներու փոքր թիւին, այսօր իր ար-ժանաւոր տեղը կը գրաւէ Հ.Մ.Ը.Մ-ի աւելի մեծ շրջաններու կողքին՝ ստանձնելով կազմակերպումը վերջին տասնամեա-կին համա-Հ.Մ.Ը.Մ-ական երեք ձեռնարկներու՝ երիտասար-

**Ազգերու պատմութեան մէջ հազուագիտ են այն կազմա-կերպութիւնները եւ միութիւն-ները, որոնք ունին 100 տարին աւելի ժառանգ, եւ աշխատանք կը տանին ներշնչուելով իրենց հիմնադիրներու պատգամէն, ինչպէս է Հ.Մ.Ը.Մ.ը:**

դական ներկայ համագումարը, միջ-դիւանական 9-րդ համագումարը 2016-ին եւ միջ-դիւանական 8-րդ համագում-արը 2012-ին. իրողութիւն մը, որուն միայն հպարտութեամբ կրնանք անդ-րադառնալ:

Յարգելինէ՛ր, Կիպրոսի շրջանին հա-մար պատմական այս պահուն կը փա-փաքիմ յատուկ կերպով անդրադառ-նալ եղբօր մը մասին, որ Կիպրոսի հայ համայնքի սիրտն ու հոգին է. ան եղ-

բայր Վարդգէս Մահտեսեանն է:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, Վարդ-գէս Մահտեսեան կ'արժանանայ միութեան «Արտակարգ» պատուանշանին, միութեան կողմէն ծառայութեան, Հ.Մ.Ը.Մ.-ՀեՄ-ի բարգաւաճման բերած նպաստին, Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի ծրագիրներուն եւ Կեդրոնական Վարչութեան աշ-խատանքներուն իր մնայուն աջակցութեան համար:

## ՄԵՐ ՀԱՄԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ԵՒ ԻՂՁԵՐՈՒՄՆ ԿԵՆԵԼԻ ՀԱՂՈՐԴԱԿԻՑ ՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՌՆԱՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

**(Հ.Մ.Ը.Մ.-ՀեՄ-ի ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ.ՍԱՐՀԱՏ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՄ Ի ՊԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԶԱՇԿԵՐՈՅԹԻՆ)**

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռ-նութեամբ եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.-ՀեՄ-ի Մեկուսի վարչութեան գործակցութեամբ, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագումարը, որուն աշխատանքները աւարտեցինք այսօր: Հ.Մ.Ը.Մ-ի աշ-խարհասփիւռ կառույցներու պատկանող երիտասարդ քոյրեր եւ եղբայրներ հեռավոր փերէ հաւաքուեցան Կիպրոս եւ անցնող երկու օրերուն քննարկեցին օրակարգով ճշդուած նիւթեր:

Սիրելի՛ ներկաներ,

Երիտասարդութիւնը եղած է ու կը մնայ մնայուն ուշադ-րութեան առարկայ: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ նկարագիր կը կերտուի, անհատականութիւն կը դարբնուի, հաճելի եւ օգտակար մըթ-նորոտի մէջ: Այս ճաշկերոյթ խրախճանքին առիթը պիտի ու-նենաք մօտէն ծանօթանալու համագումարին մասնակցած երիտասարդներուն: Վերջապէս, այսօրուան երիտասարդնե-րը վաղուան մեր պատասխանատուներն են: Համագումարին մասնակցած քոյրերն ու եղբայրները պիտի դառնան Հ.Մ.Ը.Մ-ի եւ ազգային մեր կառույցներու մարդկային ազնը-ւութեան եւ հայկական մաքուր դիմազիծի կերտման դրօշա-կակիրները:

Իսկ դո՛ւք, յարգելի համակիրներ, գաղտնիք բացայայտած չեմ ըլլար, եթէ ըսեմ, որ միշտ մեր կողքին էք, գոհացում եւ կորով տալով մեր կազմակերպական աշխատանքներուն: Ձեր

բոլորին ներկայութիւնը այսօր, այս սրահին մէջ, վկայութիւն է, որ դուք կը հաւատաք մեր գործին:

Այս առիթով, անգամ մը եւս կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, որ ընտրեց փոքրիկ եւ չակերտեալ «աղմկոտ» Կիպրոսը, որպէսզի հոն կատարուի Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական երկրորդ համագում-արը: Մենք հաւատալով Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան եւ հե-տապնդած նպատակներուն, առանց վարանելու, նուիրու-մով, կարելին ի գործ դրինք կազմակերպելու այս համագում-արը, Հ.Մ.Ը.Մ-ի եւ մեր գաղութի յարատեւման, յաջողու-թեան եւ վերելքին համար:

Իսկ գալով համագումարին մասնակցած երիտասարդ քոյ-րերուն եւ եղբայրներուն, սիրելինէ՛ր, ձեր ներկայութիւնը գեղեցիկ երեւոյթ էր: Դուք կարողացաք արդիւնաւէտ ըլլալ: Կարողացաք յաղթական, ուրախ մթնոլորտ ստեղծել: Մենք ձեր մէջ տեսանք վեհանձնութիւն, փոխադարձ օգնութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատուի զգա-ցում: Դարձէ՛ք փարոս՝ հայ երիտասարդութիւնը ներգրաւե-լու: Կերտեցէ՛ք Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հայ Դատի յաղթական ապա-գան:

Շնորհակալ ենք ձեր մասնակցութեան համար: Բարի վե-րադարձ: Մեր բարի լուրերը հասցուցէք ձեր շրջանները՝ ընդգծելով մեր հաւաքական կեանքին եւ իղձերուն աւելի հա-ղորդակից ու մասնակից դառնալու անհրաժեշտութիւնը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ-Բ.

# ՀԱՄԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՌ-ԱԶԻՆ ՃԱՄԲԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Յարուք Չէքիճեան  
ՊԵՅՐՈՒԹ

Համա-արաբական առաջին ճամբարի աւարտէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի մեր խումբը, եղբ. Ժիրայր Սարգիսեանի գլխավորութեամբ, 4 Սեպտեմբեր 1964-ի առաւօտուն, Աղեքսանդրիոյ երկաթուղիի «Մասր» կայարանէն ճամբայ ելաւ դէպի մայրաքաղաք Գահիրէ, 8 օրուան կեցութեան համար: Աղեքսանդրիայէն Գահիրէ երկաթուղին շուրջ 180 քմ. հեռավորութիւն ունի եւ այն ժամանակ շուրջ 5 ժամ տեւեց ճամբորդութիւնը՝ երկու կայարան կանգ առնելով: Դանդաղ, որովհետեւ գնացքը կ'անցնի գիւղական, երկրագործական շատ մը գեղեցիկ վայրերու մէջէն եւ անդադար կը սուլէ՝ զգուշացնելու համար տեղւոյն բնակիչները եւ արածող անասունները:

Ներկայիս, առանց կանգ առնելու, այս ճամբորդութիւնը կը տեւէ շուրջ 3 ժամ 45 վայրկեան: Ճամբորդութիւն, գոր 28 Սեպտեմբեր 2000-ին կրկնեցի, օր մը առաջ Հ.Մ.Ը.Մ.Ի Աղեքսանդրիոյ մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովին ներկայ գտնուելէ ետք: Եղբ. Ճորճ Կասեանը կայարան հասցուց զիս եւ Գահիրէի «Ռամսիս» կայարանին մէջ, եղբ. Կարօ Թումայեանը ղիմաւորեց ինձի: Իրարու անծանօթ՝ նախապէս ճշդուած, երկուքս «Մարզիկ» թիւ մը բռնած, զիրար գտանք: Նոյնն էր պարագան Աղեքսանդրիոյ օդակայանին մէջ, ուր ինձի ղիմաւորեցին երեք վարչականներ, որոնց մէջ բժ. եղբ. Արմէն Գաւուքճ-եանը: Թող ներքն, որ չեմ յիշեր անունները միւս երկու եղբայրներուն, որոնց հետ Աղեքսանդրիոյ տեսարժան վայրերը այցելեցինք:

Գնացքին մէջ խանդավառ երգեր երգելով ժամանակը անցուցինք: Նստարանները դէմ ղիմաց էին եւ Կարօն ու Լեւոնը, երկուքն ալ կատակասէր, իրենց դէմքերը դէպի ետեւ նստած՝ չէին տեսներ ղիմացէն եկող գնացքները: «Թիփի բորան» երգի ժամանակ, յանկարծ, ղիմացէն սուրացող գնացք մը մեր քովէն անցաւ, ահաւոր ճունչիւն եւ աղմուկ պատճառելով, երբ երգին «Չան Ֆետայիներ» համարը կ'երգէինք: Լեւոնը, որ չէր տեսներ եկող գնացքը, սարսափահար՝ «Չան Ֆ...»-ին վրայ բերանը բաց սառած մնաց, եւ կատակասէր սկստուներս ժամանակ մը «Չան Ֆ» կոչեցինք զայն:

Գահիրէի մէջ, Եգիպտոսի սկստական կազմակերպութիւնը պատրաստած էր զբօսաշրջային ճոխ յայտագիր, որմէ լիբանանեան պատուիրակութենէն կարծեմ միայն մենք օգտուեցանք: Մեր կեցութեան համար տրամադրած էին ամառ-



Աղեքսանդրիոյ «Ալ Սուքրազահ» թագաւորական պալատ-ամառանոցին առջեւ, որ թանգարանի վերածուած է եւ նշանաւոր է իր պարտեզներով:

նային արձակուրդի մէջ եղող վարժարան մը, ուր մնացինք քանի մը օր: Այցելեցինք երկու շատ հետաքրքրական ճարտարաւոճարական գործարաններ, որոնցմէ առաջինը՝ ցարդ բանող «Էլ Նասր» երեկտրական լամբերու գործարանն էր: Շատ հետաքրքրական էին թէ՛ մեքենական եւ թէ՛ դասական ապակեգործութեամբ՝ մարդկային ճարտարութեամբ գրեթէ հալած ապակին փշելով շատ մեծ լամբերու մարմիններու արտադրութիւնը:

Երկրորդ օրը այցելեցինք Հալուանի մէջ արաբական աշխարհի առաջին ինքնաշարժի արտադրութեան՝ «Ալ Նասր» ցարդ արտադրող տպաւորիչ գործարանը, որ տարի մը առաջ՝ 1963-ին հիմնուած էր եւ «Ռամսիս» տիպի ինքնաշարժներ կ'արտադրէր:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՓԱՐԱԻՈՆՆԵՐՈՒ ԲՈՒՐԳԵՐ

Մեր յաջորդ երկու այցելութիւնները, նոյն օրը, կրկին Եգիպտոսի մէջ գտնուող, աշխարհի հրաշալիքներէն բուրգերը եւ Սֆինքսն էին, ապա 1891-ին հիմնուած՝ Գահիրէի կենդանաբանական պարտէզը, որ քաղաքին հարաւ-արեւմուտքը կը գտնուի՝ դէպի բուրգերը տանող ճամբուն վրայ, երկուքը ձիգէ (Կիզա) արուարձանին մէջ:

Անհաւատալի է ու աներեւակայելի, դաշտէն բարձրացող, մարդկային բազուկով ու ճարտարութեամբ կառուցուած երեք բուրգերուն հրաշալի երեւոյթը, որոնց բարձրագոյնը՝

146.6 մեթր, Խուլֆու փարաւոնին համար Գ.Ա. 26-րդ դարուն՝ 27 տարիէն կառուցուած է, գործածելով աւելի քան 2 միլիոն 300 հազար կրանիթէ հսկայական «քարեր»: Ուղղակի բլուր մըն է: Սովորական առողջ մարդոց համար 1-2 ժամ կը տեւէ անոր գագաթը բարձրանալը, սակայն մեր այցելութեան օրը, այն ժամանակուան Եգիպտոսի ախոյեանը՝ 10 կամ 12 վայրկեանէն գագաթ հասաւ, իսկ այս օրերուն՝ մրցանիշը 8 վայրկեան է: Այժմ այցելուներուն համար ճշգրտած է մագլցելու յատուկ ուղի մը, որ վարէն վեր օժտուած է իբրեւ բազրիք ծառայող հաստ պարանով:

Թէեւ շատ ժամանակ չունէինք, սակայն իբրեւ չարքաշ սկառտներ, չէինք կրնար անտեսել մեծ բուրգը մագլցելու եւ գագաթը հասնելու մարտահրաւէրը: Քանի մը հոգիով փորձեցինք մագլցել, սակայն հազիւ 30-40 մեթր կարողացանք բարձրանալ, քանի որ բուրգը կազմող իւրաքանչիւր «քար» 1-1.5 մեթր բարձրութիւն ունի եւ կը կշռէ 6.5-10 թոն: Իսկ փորձառուները գիտեն մաշած կամ ոտք դնելու տեղ ունեցող ուղիներէն բարձրանալ: Այցելեցինք նաեւ փոքր բուրգը եւ անոր ետին շատ աւելի փոքր, աստիճանաձեւ ուրուագիծով բուրգերը:

Այդ ժամանակ կար փոքր թանգարանի նման վայր մը, զոր այցելեցինք: Սակայն մեծ բուրգէն շուրջ 600 մեթր դէպի հարաւարեւելք գտնուող Սֆինքսը աւելի մատչելի, առեղծուածային կոթող մըն է, մարդկային դէմքով եւ առիւծանման մարմինով, գետնէն շուրջ 30 մեթր բարձրութիւն ունի եւ երկայնքը 73 մեթր է: Այսպիսով բուրգերուն այցելութիւնը աւարտելէ ետք, կէսօրին, ուղղուեցանք Գահիրէի կենդանաբանական պարտէզը:

Կենդանաբանական պարտէզը այն ժամանակ «վանդակային» էր, այսինքն՝ կենդանիները ցուցադրելու համար վանդակներու մէջ դրուած էին եւ բոլորը յարաբերաբար նեղ ու մութ ուղիներու երկու կողմերը շարուած էին, իրարմէ ոչ հեռու: Կենդանիներուն հոտը ամէն կողմ տարածուած էր, գարշելի ըլլալու աստիճան: Չեմ յիշեր քանի՞ կենդանիներ կային այն ժամանակ, սակայն այժմ 6000 կենդանի եւ 175 տեսակ կը գտնուի այնտեղ:

Ինծի համար անկրկնելի փորձառութիւն մը եղաւ այս այցելութիւնը: Առիւծներու վանդակին առջեւ կանգնած էր զանոնք խնամող պաշտօնեան, որ կարծէք թէ նոր կերակրած էր զանոնք: Տեսնելով մեր տարազը ու լսելով օտար (հայերէն) լեզուով մեր զուարթ խօսակցութիւնը, ան ինքնաբոլի առաջարկեց, որ եթէ կը փափաքէինք առիւծի մը փաշէն բռնել: Անմիջապէս համաձայնեցայ եւ իս-



Վ.Ս.Ը.Մ.ի մեր խումբէն մաս մը Սֆինքսին մօտ, աջից՝ եղբ. Ժիրայր Սարգիսեանը, ձախից՝ ես:

կոյն ան ծայրը կարթի նման երկաթէ ձող մը մտցուց վանդակէն ներս, եւ ոլորելով առիւծի մը փաշերուն մէջ, դէպի ճաղերը քաշեց գայն, որ թեթեւ գանգատով՝ մեղմ ոռնալով մօտեցաւ ճաղերուն: Փաշը բռնէ՛ ըսաւ ինձամօղը եւ նախ փաշերը շոյելէս ետք ամուր բռնեցի, ապա երկաթէ ձողը վերցուց ան ու ահա ես առիւծի փաշէն բռնած, գլուխը ճաղերուն քաշած մնացի, մինչեւ որ տղաքը նկարեն գիս: Առիւծին փաշը ձգելէս ետք, ձեռքիս մէջ մնացած էր անոր ստեւներէն, զորս երկար ժամանակ պահեցի: Ուրեմն, ծեր ու յոգնած առիւծ մըն էր խեղճ անասունը, որուն հանգիստը խանգարեցի... Վերջը անդրադարձայ, որ այս դէպքը հաւանաբար պաշտօնեային եկամուտի աղբիւր մըն էր, սկառտ ըլլալու համար սակայն դրամի խօսք չըրաւ ան:

Շնորհակալութիւն յայտնեցինք մեզ առաջնորդող եգիպտացի սկառտներուն եւ իմբապետին, ու վերջին գիշերը անցուցինք դպրոցին մէջ: Յաջորդող քանի մը օրերը Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.ին եւ «Յուսաբեր»ին հիւրերն էինք: Գիշերելու համար մեզի տրամադրուեցաւ «Յուսաբեր» օրաթերթին խմբագրատան յարկաբաժինը, ուր մեր սկառտական միջոցներով գետինը կը քնանայինք, այնպէս ինչպէս նախորդող օրերը՝ տեղական դպրոցին մէջ:

«Յուսաբեր»ի շէնքը, չեմ յիշեր թէ 7 կամ 8 յարկանի, Գահիրէի կեդրոնական շրջանին մէջ կը գտնուէր եւ իւրաքանչիւր յարկ կը ծառայէր նպատակի մը. ժողովրդային տուն՝ ահուժը, հանդիսութիւններու ընդարձակ սրահ-թատրոն, ժողովի սենեակներ, իմբագրատուն, ամառանային տանիքի պարտէզ-ճաշարան եւ օրաթերթին ու զանազան այլ գործերու տպարան: Բեգլար Նաւասարդ-



Պատիւը ունեցայ բարի ու ծեր առիւծին փաշը շոյելու եւ բռնելու:





**Չախխն, կեդրոնը՝ Ը.Մ.Ը.Մ.ի Գահիրեի խմբապետ եղբ. Սուրեն Նազարեան. աջին՝ եղբ. Ժիրայր Սարգիսեան եւ Լեւոն, ապա՝ ես: Ծուճկի, ձերմակ չափկով, եղբ. Միհրան Քսիկպաշեան, Գահիրեի թանգարանի մուտքին: Աջ կողմի նկարին մէջ ձախեն Երրորդը՝ ես, եղբայրներ Ժիրայր եւ Լեւոն, Սքուք տիւ Լիպանի 2 հայ սկաուտներ (որոնք քանի մը օր միացան մեզի), Սուրեն Նազարեան, Արա Վարժապետեան, Միհրան Քսիկպաշեան, Յակոբ եւ Սքուք տիւ Լիպանէն Մալիքեան:**

եանն էր «Յուսաբեր»ի խմբագիրը, որ մեր կեցութեան ընթացքին, մեզի համար կարճ դասախօսութիւն մը տուաւ, չեմ յիշեր, թէ նիւթը ի՞նչ էր:

Չեմ գիտեր ինչու, յիշողութեանս մէջ դրական տպաւորութիւն մը դրոշմած է «Յուսաբերի պարտէզ»ին՝ տանիքի բացօթեայ ճաշարանին ազնիւ ու ծառայասէր մատուցողը, որ տարեց, սեւամորթի կերպարանքով, եգիպտական ճերմակ կալապիյէ (աւանդական զգեստ) հագած եւ գլխուն կարմիր ֆէսով նիհար ու բարձրահասակ անձ մըն էր, որուն պատրաստած մեծ գաւաթով համով թանր լաւ կը յիշեմ: Դրականը՝ հաւանաբար անոր անցեալին մասին դրուագներն էին:

Ուրախութիւնը ունեցայ 36 տարի ետք՝ Սեպտեմբեր 2000-ին կրկին այցելելու «Յուսաբեր»ի շէնքը եւ ծանօթանալու այժմու խմբագիր եղբ. Զաւէն Լիլլոզեանին եւ աւելի երէց սերունդէն՝ հանգուցեալ եղբ. Պետրոս Մխտիկեանին հետ, որ տպարանին թեքնիք եւ վարչական պատասխանատուն էր: Նոյն պաշտօնը 1927-1948 վարած է հօրս հօրեղբորդին՝ բանաստեղծ Գէորգ Զէքիճեանը: Այժմ Գահիրէի կեդրոնը գտնուող, «56 Թերաա Ալ Պուլաքիա» փողոցին վրայ, «Յուսաբեր»ի շէնքին շուրջը գերիւճողուած վայր մըն է, անհատնում ժողովուրդ կը վխտայ այդ շրջանին մէջ: Եգիպտոսի մէջ այժմ, օրական շուրջ 7000 մանուկ կը ծնի:

Վերադառնալով 1964, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» մասնաճիւղի Խմբապետը՝ եղբ. Սուրէն Նազարեան եւ քանի մը աստիճանաւորներ, որոնց մէջ եղբ. Միհրան Քսիկպաշեանը, մեզ առաջնորդեցին ու պտրտցուցին տեսարժան վայրեր, որոնց կարեւորագոյնն էր Գահիրէի աշխարհահռչակ թանգարանը: Հսկայական թանգարանը, որ քաղաքին կեդրոնական շրջանին մէջ կը գտնուի, կառուցուած է 1897-1902: Ունի հարիւրէ աւելի ցուցադրութեան սրահներ: Լման օր մը կը պահանջէ պարզապէս իւրաքանչիւր ցուցադրուած հնութեան առջեւն անցնիլը: Ցուցադրութեան սրահներուն մակերեսը կը համապատասխանէ ֆուլթպոլի 4 դաշտերու մակերեսին:

Թանգարանին հնամենի իրերը անհամար են (այժմ, աւելի

քան 120 հազար), Ռամսիսի 7 մեթր հսկայ արձանէն Թուֆան-խամոնի ոսկեայ դագաղը եւ ոսկիէ երեսի դիմակը, մոմիաները եւ բազմաթիւ հիանալի իրեր Բ.Ա. 2800 թուականէն սկսեալ: Արձաններ, նաւակներ, մարտակառքի մասեր, քանդակներ, պապիրոսի վրայ արձանագրութիւններ, որմնանկարներ եւ այլն:

Յաջորդ օրը պիտի անցընէինք յատուկ լողաւազանի մը մէջ, եթէ չեմ սխալիւր «Սփորթինկ քլապ»ն էր, սակայն յուսախաբ մնացինք: Գահիրէի նշանաւոր լողաւազաններէն մէկն էր այդ, լայն պողոտայի մը վրայ, որ հակառակ մեր յատուկ արտօնութեան եւ տոմսերուն՝ պահակները արգելեցին մեզի ներս մտնել: Տգեղ կացութիւն մը ստեղծուեցաւ, երբ մեզի ընկերակցող խմբապետը քանիցս փորձեց արգելքը շրջանցել: Փոխարէնը, այդ օրը Գահիրէի շուկան պտրտեցանք, ներառեալ եղբ. Նազարեանին կերպասի վաճառատունը, ուր կ'աշխատէր նաեւ եղբ. Միհրան Քսիկպաշեանը: Ես ալ յիշատակի գնում մը կատարեցի այնտեղէն:

Այնպէս ինչպէս «Յուսաբեր»ի տանիքի պարտէզին մէջ հիւրասիրուած էինք, երեկոյ մըն ալ ընթրիքի հրաւիրուեցանք Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը՝ Հելիոպոլիս, որ Գահիրէի «բարձր» դասակարգին արուարձանն էր: Ակումբին կողքին կար պասքէթի դաշտը, իսկ մոտքը՝ քանի մը աստիճան բարձրանալով, դաշտին երկայնքին նայող եւ զուգահեռ, ունէր երկար ու լայն նրբանցք մը, ուր պատրաստած էին երկար ճաշասեղան մը: Այնտեղ ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի եւ համայնքին երեւելիները: Մեր կռնակը դէպի դաշտ՝ այնպէս զուգադիպեցաւ, որ դիմացս նստած էր հօրս նմանող անձ մը: Երբ իւրաքանչիւրս ծանօթացման համար մեր անունը արտասանեցինք, դիմացս նստող անձը ուրախութեամբ հարցուց. «Գրիգորին տղա՞ն ես դուն»...: Հօրս հօրեղբորդին էր, բանաստեղծ Գէորգ Զէքիճեանը, որուն առաջին անգամ կը հանդիպէի:

Գահիրէի մէջ անմոռանալի ու պատմական օրերէ ետք, 12 Սեպտեմբեր 1964-ին գնացելով վերադարձանք Աղեքսանդրիա, ուր յաջորդ օրը մեզի բերող «Սուրիա» անունով նաւը բարձ-



**Չախից՝ ես, կեդրոնը՝ անփոփոխ դիմագիծով եղբայրներ Միրան Բեպկպաշեանը եւ Ժիրայր Սարգիսեանը, կրկին կը հանդիպինք 38 տարի ետք, 4 Օգոստոս 2002-ին, Բիւրակահի բանակավայրին մէջ:**

րացանք եւ 14 Սեպտեմբերին՝ Պէյրութի նաւահանգիստը ապահով վերադարձանք:

**ՍԿԱՌԻՏԱԿԱՆ, ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԻՆ ՈՒ ԱԻԵԼԻ ՆՈՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ 36 ԵՒ 38 ՏԱՐԻ ԵՏՔ**

Հայաստանի մէջ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական եօթներորդ բանակումին, 27 Յուլիսին 4 Օգոստոս 2002, Բիւրակահի էինք: Բանակումին վերջին օրը ընդհանուր տողանցք մը կազմակերպած էինք 17 երկիրներէ ժամանած 510 արի-արեւոյններուն համար: Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շեփորախումբին առաջնորդութեամբ տողանցքը սկսաւ Երեւանի մէջ կրթութեան եւ երիտասարդութեան նախարարութեան այն ժամանակուան շէնքին առջեւէն դէպի «Հանրապետութեան» հրապարակ:

Երբ հրապարակ հասանք, հոծ բազմութիւն մը հաւաքուած էր, մեծ մասը՝ սփիւռքահայեր: Հրապարակին մէջ դիտելով շուրջս, աշխարհի չորս ծագերէն եկած քանի մը ծանօթներ տեսայ ու զրուցեցի անոնց հետ: Ծանօթներու շարքին էին Թորոնթոյէն, վարժարանի տնօրէն Մարգար Շարապխանեանը եւ ուրիշներ: Սակայն, ուշադրութիւնս զրաւեց սկառտական տարազ հագած, դէմքը հինէն ծանօթ տարեց մը... Իսկոյն յիշեցի, որ 1964-ին, Գահիրէ մեր կեցութեան ընթացքին, մեզի ընկերակցող խմբապետներէն մէկն էր ան եւ անվարան անոր հարցուցի, թէ արդեօք ինք 1960-ական տարիներուն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտ աստիճանաւորներէն էր... զարմացած ու շուարած «այո՛» ըսաւ:

Այն ժամանակ, տակաւին դէմքեր յիշելու բացառիկ կարողութիւն ունէի, սակայն երբեք՝ անուններ: Հա-

մաարաբական բանակումի օրերուն, 1964-ին, մեզի ընկերակցող եղբ. Միհրանն էր ան, որ Աւստրալիա գաղթած եւ միութենական աշխոյժ աշխատանք տարած էր այնտեղ եւ այս բանակումին առիթով հայրենիք եկած էր, իբրեւ այցելու վեթերան խմբապետ:

Եղբ. Միհրան, իսկական եւ վաւերական սկառտ մը, 31 Յուլիս 2004-ին դրկած նամակին մէջ նշած էր՝ «Սկառտ ես, միշտ սկառտ կը մնաս»: Ան Սիտնիի մէջ նամակատան մէջ աշխատողի պաշտօնով, դրոշմաթուղթերու մասնագէտ մը դարձած էր եւ հայկական ազգային եւ միութենական ամեակներու առիթներով պատրաստած էր գրպանի օրացոյցներ, յատուկ դրոշմաթուղթեր եւ պահարաններ, որոնցմէ կը ներկայացնեմ Հ.Մ.Ը.Մ.ի նուիրուած նմոյշ մը:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական է. բանակումին առիթով, եղբ. Միհրան պատրաստած էր նամակի պահարան մը, որուն ճախին տպուած էին Աւստրալիոյ եւ Հայաստանի դրօշները, Հ.Մ.Ը.Մ.ի վահանով եւ սկառտական շուշանածաղիկով, տակը՝ հայերէն եւ անգլերէն բացատրութիւններ բանակումին մասին, իսկ աջին՝ Հ.Մ.Ը.Մ.ի երկու յիշատակի դրոշմաթուղթեր, վերինը «Հ.Մ.Ը.Մ. Աւստրալիա», իսկ վարինը՝ երկու լեզուով կը շնորհաւորէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական է. բանակումը:

Երկրորդ նմոյշը Հ.Մ.Ը.Մ.ի 85-ամեակին նուիրուած, 2003-ին, յատուկ նամակի պահարան մը, որուն վերը, աջին՝ Հ.Մ.Ը.Մ.ի 85-ամեակի դրոշմաթուղթը: Երրորդը Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ 35-րդ Նաւասարդեան մարզախաղերուն առիթով յատուկ նամակի պահարան եւ դրոշմաթուղթ: Վարձքդ կատարեց եղբ. Միհրան:

Եզրակացնելով, 2000-ին, հայկական երբեմնի աւագ գաղութ Եգիպտոս կատարած միութենական երկու այցելութիւններս թարմացուցին երկու քաղաքներուն մէջ 36 տարի առաջուան յուշերս: Արժանի է այստեղ նշել Հ.Մ.Ը.Մ.-«Կամբ»ի Աղեքսանդրիոյ ակումբին մէջ պահուած, հանգուցեալ եղբ. Վահան Գաւուքեանին կողմէ բժախնդիր կերպով պատրաստուած եւ դասաւորուած միութենական օրինակելի արխիւները:

Հ.Մ.Ը.Մ.ի բովէն անցածներս, աշխարհի չորս ծագերէն եկած, նոյնիսկ առանց նախապէս հանդիպած կամ ծանօթացած ըլլալու, անմիջապէս մտերիմներ կը դառնանք, մանաւանդ սկառտներս, բոլոր հարցերու շուրջ համախոհներս, լռեխայն՝ առանց ճիգի ու բացատրութեան, անտեսանելի ամուր կապով մը գիրար կը գտնենք: Այս է Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակութիւնը եւ հմայքը՝ հրապոյրը:



**Հ.Մ.Ը.Մ.ի 85-ամեակին նուիրուած (2003-ին) յատուկ պահարան եւ վերը ձախից՝ Հ.Մ.Ը.Մ.ի 85-ամեակի դրոշմաթուղթը:**

(Շար.2)



# ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՓԱՌՎԵՈՐ ԱՆՑԵԱԼԷՆ

«Մարզիկ»ի այս թիւով կը շարունակենք լոյս ընծայել Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկաի եւ Պէյրութի ֆութպոլի անցեալի «աստղ»երէն, մարզիչ, վարչական, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Ըորճիկ Ռասարկելէեանի յուշերը (Գ. մաս), որոնք իբրեւ հում արտադ իրնաւն մեծապէս օգտակար ըլլալ միութեան մարզական պատմութիւնը գրելու կոչուած ասպագայ պատմագիրին:

Յուշերը, մաս առ մաս, 19 բաժինով, առաջին անգամ հրատարակուած են Հայկաի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ: «Մարզիկ» զանոնք կը վերահրատարակէ միացեալ շարքով (երեք-չորս մաս միասնաբար) եւ համապատասխան պարզանկեցումներով:



«Մ.»

## 1964-1965 ԵՂԱՆԱԿԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ «ՄՈՒՄԹԱԶ» ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Սուրիոյ ֆութպոլի ֆետերասիոնին որոշումով, «Մումթազ» դասակարգի 1964-1965-ի ախոյեանութեան մրցաշարքը ընթացք առաւ նախապատրաստական աշխատանքներու աւարտէն եւ դասակարգային բաժանմունքներու դասաւորումէն ետք:

«Մումթազ» դասակարգի 11 խումբերը բաժնուեցան երկու բաժինի՝ հիւսիսային եւ հարաւային:-

Ա. Հիւսիսային բաժինը կը բաղկանար հետեւեալ հինգ խումբերէն.- Հ.Մ.Ը.Մ., Ահլի (Հալէպ), Ղազի (Տէր Զօր), Հասաքէ (Հասիէ), Ճալաա (Լաթաքիա):

Բ.- Հարաւային բաժինը կը բաղկանար հետեւեալ վեց

խումբերէն.- Բանակի խումբ, Ահլի, Քասիուն, Ճալաա (Դամասկոս), Սայէտ ալ Արապ (Համա) եւ Ֆիտաա (Հոմա):

Հիւսիսային բաժինի Հ.Մ.Ը.Մ.- Ահլի մրցումը շատ կարեւոր եւ վճռորոշ մրցում մըն էր: Յաղթական խումբը պիտի դառնար բաժինի ախոյեան եւ իրաւունք պիտի ունենար մասնակցելու ախոյեանութեան աւարտական մրցումին:

Այս մրցումը եղաւ չափազանց հետաքրքրական: Երկու խումբերն ալ պայքարեցան աւարտականի տոմսը ապահովելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, լուրջ գործակցութեամբ, ճիգ չինայեցին յաղթանակը ապահովելու եւ աւարտականին հասնելու: Անոնք տպաւորիչ խաղարկութեամբ եւ շարունակական կազմակերպուած յարձակումներով վտանգեցին Ահլիի բերդը եւ յաջողեցան երկրորդ կիսախաղի 15-րդ վայրկեանին, շնորհիւ եղբ. Ժորճիկի նշանակած կոլին, փայլուն յաղթանակ մը ապահովել եւ աւարտականի մասնակցութեան իրենց տոմսը ձեռք ձգել:

Հարաւային բաժինի առաջին դիրքը նուաճեց Սուրիոյ բանակի խառն խումբը, որ իր կարգին հասաւ աւարտական մրցակից ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի նպատակասլաց կազմը:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մրցումներուն արդիւնքը.-

1- Հ.Մ.Ը.Մ.-Լաթաքիա (3-0), Հալէպի մէջ՝ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի: Կոլերը նշանակեցին եղբայրներ Սամիր Ֆաքըա, Ժորճիկ Ռասարկելէեան եւ Անդրանիկ Մալեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի ֆութպոլի խումբը Իրաքի մէջ: Խումբի մարզիչ՝ եղբ. Արսէ Դանիէեան:

2- Հ.Մ.Ը.Մ.-Ղազի (2-0), Հալեպի մէջ՝  
ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.-ի: Կոլերը նշանակեց  
եղբ. Գէորգ Աւրանան:

3- Հ.Մ.Ը.Մ.- Հասաքէ (0-0), Հասիչէի  
մէջ:

4- Հ.Մ.Ը.Մ.- Ահլի (1-0): Կոլը նշանա-  
կեց եղբ. Ճորճիկ Ռաստկելէնեան:

Աւարտականի երթի մրցումը տեղի  
ունեցաւ Կիրակի, 14 Մարտ 1965-ին, Հա-  
լեպի քաղաքապետարանի դաշտին  
վրայ, իրաւարարութեամբ Ռաշատ Հա-  
ուասլիի: Մրցումը եղաւ սպառնիչ, բայց  
չափազանց հետաքրքրական: Պայքարը  
երկու խումբերուն միջեւ սուր եւ վճռա-  
կան էր: Հ.Մ.Ը.Մ.-ի տղաքը մրցումին  
առաջին վայրկեանէն անցան յարձակո-  
ղականի: Անոնք ճշգրիտ, արագ փոխան-  
ցումներով անակնկալի բերին Սուրիոյ  
բանակի զօրաւոր կազմը եւ զայն դժուար  
կացութեան մատ-  
նեցին: Հաւաքական աշխատանքը, բացարձակ  
գործակցու-  
թիւնը, մանաւանդ յառաջապահ գիծին ներդաշնակ  
եւ արագ  
փոխանցումները անել կացութեան մատնեցին  
հակառակորդ  
խումբին յետսապահ գիծի խաղացողները:

Ի վերջոյ շարունակական գրոհները արդիւնաւորուեցան,  
երբ եղբ. Ճորճիկ յաջողեցաւ խաղին 15-րդ վայրկեանին,  
անակնկալ հարուածով մը ցնցել բանակի խումբին  
բերդն ու բերդապահը եւ խաղին արդիւնքը դարձնել 1-0՝  
ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.-ի:

Բանակի խումբը փորձեց զանազան միջոցներով  
ձեռքի Հ.Մ.Ը.Մ.-ի յետսապահ պողպատեայ գիծը,  
սակայն ապար-  
դիւն: Յետսապահ գիծի տղաքը, գլխաւորութեամբ  
խմբա-  
պետ բերդապահ եղբ. Անդրանիկ Միլիքճեանի,  
յամառու-  
թեամբ պաշտպանեցին իրենց բերդը  
եւ բոլոր յարձակումնե-  
րը մատնեցին ձախողութեան: Անոնք  
կազմակերպուած յար-  
ձակումներով, արագ եւ ճշգրիտ  
փոխանցումներով անդա-  
դար մատակարարեցին յառաջապահ  
գիծի եղբայրները, որոնք  
իրենց կարգին մրցակիցը բերին  
անակնկալի:

Հ.Մ.Ը.Մ.-ի աննման տղաքը դաշտին  
տէրն ու տիրականը դարձան  
եւ մրցումին ամբողջ տեւողութեան  
բարձր մակար-  
դակի խաղ ցուցադրելով արժանացան  
ներկաներու ծափող-  
ջոյններուն եւ քաջալերանքին:

Կարեւորութեամբ նշենք, որ Հալեպի  
Ֆուլթայի սիրահար հասարակութիւնը  
եւս, Հ.Մ.Ը.Մ.-ի համակիրներու  
կողքին, մեծ խանդավառութեամբ  
հետեւեցաւ խաղին: Պատկերը  
չա-  
փացանց գեղեցիկ ու տպաւորիչ էր:

Այս անակնկալ կոլը եւ Հ.Մ.Ը.Մ.-ի  
ներդաշնակ խաղարկու-  
թիւնը անել կացութեան մատնեցին  
մրցակից խումբը, որ անձնատուր  
ըլլալու յստակ նշաններ ցոյց  
տուաւ: Հ.Մ.Ը.Մ.-ը նոյն  
թափով շարունակեց իր երթը,  
իսկ քիչ ետք վրայ հասաւ  
միջազգային իրաւարար Ռաշատ  
Հաուասլիի մրցումին աւարտը  
հաստատող սուլիչին ձայնը:

Մրցումը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.-ի 1-0  
յաղթանակով:

Այսպիսով Հ.Մ.Ը.Մ.-ի յաղթանակներու  
ճանապարհը հար-



Հ.Մ.Ը.Մ.-ի Հալեպի ֆուլթայի 1970-ականներու խումբը:

թուեցաւ եւ բոլորը բարձր տրամադրու-  
թեամբ հրաժեշտ տը-  
լին դաշտին:

### ՈՂՋՈՒՆԵԼԻ ՅԱՂԹԱՆԱԿ՝ ԿԻՊՐՈՍԻ ԱՐ ՀԵՍՏԱՎԱՐԺ ԽՈՒՄԲԻՆ ԴԷՄ

Հ.Մ.Ը.Մ.-ի պատմական նուաճումներուն  
փառաւոր երթը շարունակուեցաւ:

Դեկտեմբեր 1964-ին, Դամասկոսի մէջ,  
Սուրիոյ բանակի ֆուլթայի խումբը  
դժուար յաղթանակ մը արձանագրեց  
իրաւարարներու օժանդակութեամբ,  
3-1 արդիւնքով, Կիպրոսի ախոյեան  
«Աբոէլ» խումբին դէմ: Երկու օր  
ետք, Կիրակի, Հալեպի քաղաքապետարանի  
դաշտին վրայ պատահեցաւ անսպասելի  
եղբ. Հ.Մ.Ը.Մ.-ի խումբը ջախջախիչ  
արդիւնքով՝ 10-2, յաջողեցաւ պարտու-  
թեան մատնել նոյնինքն Կիպրոսի  
ախոյեան խումբը՝ պատմական  
նուաճում մը արձանագրե-  
լով:

Հ.Մ.Ը.Մ.-ի աննման եղբայրներուս  
հետ դաշտ ներկայացանք  
վճռակամ, ինքնավստահ,  
պատասխանատուութեան  
բարձր գիտակցութեամբ,  
որպէսզի Հ.Մ.Ը.Մ.-ի ֆուլթայի  
խումբին շքեղ երթը շարունակենք  
եւ խումբին ներկայութիւնը  
հաստատենք նաեւ միջազգային  
բեմի վրայ:

Երեք գիծերու՝ յետսապահ,  
միջնապահ եւ յառաջապահ,  
ներդաշնակ, մնայուն կապը,  
շղթայազերծուած վտանգաւոր  
յարձակումները, արագ, ճշգրիտ  
փոխանցումները գլխու պտոյտ  
պատճառեցին մրցակիցին: Ան  
անձնատուր ըլլալու նշաններ  
ցոյց տուաւ, երբ մանաւանդ Բ.  
Կիսախաղի 20-րդ վայրկեանին,  
Ա. Կիսախաղի 3-2 արդիւնքը  
յաջողեցանք 7-2-ի բարձրացնել:

Միջնապահ ու յառաջապահ  
գիծերու եղբայրներուս հետ,  
տեղատարափ հրթիռներ  
արձակեցինք հակառակորդի  
բերդին ուղղութեամբ,  
մրցումին վերջնական արդիւնքը  
հասցնելով 10-2-ի:

Անհաւատալի էր, բայց իրաւ:

Դաշտին վրայ գտնուողները,  
Հ.Մ.Ը.Մ.-ի համակիրներուն  
կողքին, իրենց քաջալերանքով,  
բացազանջութիւններով եւ





խանդավառ երգերով մեծապէս նպաստեցին այս շքեղ երթին յաջողութեան եւ ձեռք բերուած անմոռանալի արդիւնքին իրականացման:

Այս պատուաբեր մրցումին կողերը նշանակեցին եղբայրներ՝ ձորձիկ Ռաստիկէնեան (3 կոլ), Անդրանիկ Մալեան (3 կոլ), Գօգօ Քիլէճեան (2 կոլ) եւ Սամիր Ֆաբրս (2 կոլ):

Բոլորիս ուրախութիւնը չափ ու սահման չունէր: Չհաւատացինք պատահածին, որովհետեւ Կիպրոսի խումբը արհեստավարժ խումբ մըն էր, մարզիչը եւ չորս խաղացողներ անգլիացիներ էին, իսկ բանակին դէմ անոր կատարած մրցումը չափազանց սպաւորիչ ու հմայիչ էր:

Մրցումին աւարտին, հրաւիրեալ խումբին պատասխանատուներն ու մարզիկները մօտեցան մեզի եւ իրենց բարձր գնահատանքի խօսքերը արտայայտելով շնորհակարտեցին այս յաղթանակը, ապա հրաժեշտ տուինք իրարու՝ վերստին իրարու հանդիպելու յոյսով:

Հալէպի «Hotel Baron»ին մէջ, ընդառաջելով բանակի խումբի պատասխանատուներու ընթրիքի հրաւերին, հանդիպեցանք:

Ընթրիքին ընթացքին կրկին լսեցինք գնահատական խօսքեր, որոնք եկան մեր ուսերուն վրայ դրուած ծանր պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը շեշտելու, որպէսզի յաջողինք առաւել վճռակամութեամբ շարունակել մեր սրբազան երթը, միշտ հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի վեհ ու ազնիւ սկզբունքներուն եւ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի խոր իմաստին:

Փա՛ռք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ.ին:

Բիւր սէր, յարգանք եւ երախտագիտութիւն խումբի մարզիչին, խաղընկերներուս եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

**ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԱՐՔ ՄԸ**

Հ.Մ.Ը.Մ.ը, աւելի քան հարիւրամեայ կեանք ունեցող այս հսկայ միութիւնը, մարմնակրթական եւ սկստական հիմնական դպրոց ըլլալով հանդերձ, կը մնայ մարդկային ու ազգային իտէպլներու, բարոյական սկզբունքներու, ինչպէս նաեւ իր նշանաբանին: «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի խոր իմաս-

տին հաւատարիմ դարընոցը եւ կը շարունակէ իր սրբազան առաքելութիւնը՝ պատրաստելու իսկական մարդը, մանաւանդ գիտակից, յանձնառու հայ մարդը:

Այս հսկայ միութիւնը, իր 111 մասնաճիւղերով, այսօր առաւել քան երբեք, անխախտ հաւատքով կը կատարէ իր սրբազան առաքելութիւնը, վճռակամութեամբ, անսակարկ նուիրումով եւ կը ջանայ առաւելագոյն բծախնդ-

րութեամբ արդարացնել իր վրայ դրուած յոյսերն ու սպասումները, նպաստելով մեր ժողովուրդի անկատար տենչերու իրականացման սրբազան գործին:

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ,

Անցեալին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի Ֆութպոլի ներկայացուցչական խումբը՝ մարզիչ, յանձնախումբ եւ մարզիկներ, Շաբաթ երեկոյ մը, ըստ բարի սովորութեան, հաւաքուած էին քննարկելու խումբը յուզող զանազան հարցեր: Յանկարծ դուռը կը թակուի եւ ներս կը մտնէ Հ.Մ.Ը.Մ.ի վաստակաշատ ատենապետ եղբ. Ժողէֆ Պայրամեան, իր հետ ընկերակից ունենալով վարչական երկու եղբայրներ:

Աննախընթաց երեւոյթ մը կը պարզուէր, որովհետեւ երբեք չէր պատահած, որ վարչութիւնը մասնակից դառնար Ֆութպոլի խումբի հանդիպումներուն: Եղբ. ատենապետը իր սպաւորիչ ձայնով, Ժպիտը դէմքին վառ պահելով, ողջունելէ ետք ներկաները ըսաւ.-

«Սիրելի՛ եղբայրներ,

«Նախ կ'ուզեմ յայտնել, որ այս անակնկալ այցելութիւնը երկար պիտի չտեւէ: Ձեր ներողամտութիւնը կը խնդրենք, որ առանց նախապէս ձեզ տեղեակ պահելու կը կատարենք այս այցելութիւնը, որպէսզի վարչութեանս գնահատանքը փոխանցենք ձեզի:

«Վարչական բոլոր եղբայրներուս եւ իմ անունովս կը յայտնեմ մեր խորին երախտագիտութիւնը, բարձր գնահատանքը, Հ.Մ.Ը.Մ.ականի ձեր պատուաբեր կեցուածքին, գիտակցութեան, անսակարկ նուիրումին եւ արձանագրած փառաւոր արդիւնքներուն համար, որոնք կը հարստացնեն Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին բոլոր անդամներուն հոգիներն ու սրբտերը եւ անսահման ուրախութիւն, հպարտութիւն եւ պարծանք կ'առթեն բոլորիս:

«Մենք այսօր եկած ենք նաեւ ձեզի պարզելու յատկապէս այն անսահման ցնծութիւնն ու հոգեկան վեհ հպարտութիւնը, զոր ապրեցանք երէկ եւ մեզի հետ պատուոյ թրիպլինին վրայ գտնուող բոլոր օտար բարեկամները, հիրերը եւ մարդկան պատասխանատուները:

«Երէկուան մրցումին պարզուեցաւ այնպիսի երեւոյթ մը,

որ մարզական գեղեցիկ, օրինակելի եւ դաստիարակիչ պատկեր մըն էր, իւրայատուկ Հ.Մ.Լ.Մ.ին, մարդկային, ազգային ու մարզական սկզբունքներու եւ խոհալներու թարգմանը հանդիսացող այս աննման դարբնոցին:

«Խուճբին եղբայրներէն մէկը, երէկ, դաշտին վրայ Հ.Մ.Լ.Մ.ականի վայել ընթացքով, լաւագոյն թարգմանը հանդիսացաւ այն վեհ ու ազնիւ սկզբունքներուն, զորս այս հսկայ միութիւնը կը ջանայ սերմանել ու ծաղկեցնել բոլոր Հ.Մ.Լ.Մ.ականներու հոգիներուն եւ հոգեման մէջ: Այս եղբայրը, իր անհատական եսը, շահը, վարկը գոհեց, նոյնիսկ առանց ակնթարթ մը տատամսելու եւ միութեան ընդհանրական վարկը, համբաւը եւ յաղթանակը շատ աւելի վեր դասեց, քան իր անհատականը եւ արդարացուց իր վրայ դրուած յոյսերն ու սպասումները, մեծապէս նպաստելով Հ.Մ.Լ.Մ.ի վեհ ու ազնիւ նպատակներու պայծառացման եւ իրականացման: Ան դաշտը գտնուող բոլոր ներկաներուն հրամցուց հարազատ պատկերը Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութեան ու բարձր կոչումին: Իր այս գեղեցիկ արարքով անսահման ուրախութիւն պատճառեց բոլորին, մանաւանդ օտարներուն:

«Այս եղբայրը ֆուտպոլիստի իր մեծ հմտութեամբ եւ փորձառութեամբ յաջողեցաւ չորս կոլերու գեղեցիկ առիթներ ստեղծել:

«Ուստի, իմ եւ պաշտօնական բոլոր ներկաներու տպաւորութիւնը այն էր, որ եթէ այս եղբայրը իր ստեղծած առիթները շահագործելու փորձ կատարէր եւ գնդակը բերդին ուղարկէր, անպայման երեքը հարիւր տոկոսով պիտի յաջողէր նպատակին հասցնել: Այդպէս չըբաւ: Երբ արագօրէն նկատեց, որ իր խաղընկերները քիչ մը անդին աւելի ապահով դիրքի վրայ կը գտնուին, անմիջապէս գնդակները ոսկեայ ափսէի վրայ հրամցուց իր ընկերներուն, եւ անոնք առանց յաւելեալ ջանքի գնդակները հասցուցին թիրախին:

«Խաղին ներկաները, մանաւանդ պաշտօնական հիւրերը, մեծ խանդավառութեամբ եւ բուռն ծափահարութիւններով ողջունեցին մարզական այս գեղեցիկ արարքը, երբ տեսան որ մարզական ազնիւ ու վեհ ոգին կը սաւառնի դաշտին վերեւ, շնորհիւ այս գիտակից, վեհանձն Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկին:

«Բոլորը, առանց բացառութեան, ինծի ուղղելով իրենց գնահատական արտայայտութիւնները ըսին, Հ.Մ.Լ.Մ. յաջողած է իր առաքելութեան մէջ, փաստը՝ ահաւասիկ այս գեղեցիկ պատկերն է, որ հրամցրուեցաւ մեզի: Խուճբին մէջ ընդհանրականը անհատականէն վեր դասելու այս բարձր գիտակցութիւնը կը տիրէ:

«Հաւատացէ՛ք եղբայրներ, հոգիս ուրախութեանն է ինտովցած, թեւեր առաւ եւ հպարտութեամբ սկսաւ սաւառնիլ, որովհետեւ երկարամեայ այս հսկայ միութիւնը՝ Հ.Մ.Լ.Մ.ը, բարոյական արժէքներու այս սրբազան հնոցը, յաջողած



**1965. Սուրիոյ ֆուտպոլի առաջին պիտայանութեան կերտիչներն եղբայրներ Գօգօ Քիլէճեան, Գեորգ Աւրնեան, Վահէ Պետրոսեան, Սամիր Ֆակըս եւ Սուրեն Երեցեան:**

է կրկին փաստել, որ վեհ ու ազնիւ այս առաքելութիւնը ուղիղ, առողջ եւ արդիւնաբեր ընթացքի մէջ կը գտնուի:

«Փառք ու պատիւ Հ.Մ.Լ.Մ.ին: Բի՛ւր յարգանք, երախտագիտութիւն ձեզի նման մարզիկներուն եւ նորանոր յաջողութիւններ բոլորիդ:

«Այս է, սիրելի՛ եղբայրներ, այսօրուան մեր այցելութեան հիմնական ու միակ նպատակը ու պատգամը:

«Նախքան մեր մեկնիլը, պիտի խնդրեմ գիտակից այս եղբորմէն, որ ինծի մօտենայ եւ մենք յոտնկայս ծափահարութեամբ մեր սիրելի եղբօր յայտնենք մեր երախտագիտութիւնն ու գնահատանքը, եւ բոլոր ներկաներուն կողմէ, եղբայրական սիրոյ համբոյրը դրոշմենք անոր ճակատին»:

Հոգեպարար, դաստիարակիչ այս պահը մեզի հրամցնելէ ետք, անոնք բարձր տրամադրութեամբ մեկնեցան:

Հողը թեթեւ թող ըլլայ վրադ, Հ.Մ.Լ.Մ.ական սիրելի՛, բազմավաստակ ատենապետ եղբ. Ժողէֆ Պայրամեան:

Ջերմօրէն կը խնդրեմ Աստուծոմէ, որ ձեզի նման հաւատարիմ ու վաստակաշատ Հ.Մ.Լ.Մ.ականները երկինքի արքայութեան արժանացնէ եւ հոն ձեր Հօր դրախտային աշխարհին մէջ հանգիստ, խաղաղ եւ ուրախ ննջէք:

Կը խնդրեմ Տիրոջմէս, որ ուժ, կարողութիւն, համբերութիւն եւ եռանդ պարգեւէ բոլոր անոնց, որոնք Հ.Մ.Լ.Մ.ի ջահը վառ պահելով կը քալեն դէպի յառաջ, անսասան ու անվեհեր, հաստատ հաւատքով, աննկուն կամքով եւ անշահախնդիր մօտեցումով, ի խնդիր Հ.Մ.Լ.Մ.ի գոյատեւման եւ վերելքին:



**1965. Մ.Ս.Ը.Մ.ի Հալէպի ֆուտպոլի պիտայան խումբի աստղերն եղբայրներ Անդրանիկ Մալեան, Ճորձիկ Ռասպէլեան եւ Սորիս Ֆակըս:**

(Շար.3)



# ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ՔԷՕՇԿԵՐԵԱՆ (ՆԵԿՐՕ)



**Ծործիկ  
Ռաստկելէնեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ**

**Ֆ**ուլթայոյի անգու-  
գական աստղ,  
Հ.Մ.Ը.Մ.ական եղ-  
բայր Սարգիս Քէօշկերեան  
(Նեկրօ) օգտակար յայտնու-  
թիւն մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի եւ  
Սուրբոյ Ֆուլթայոյի կեանքէն  
ներս, երբ 1950-ական տարի-  
ներու կիսուն, Հալէպի Նոր  
Գիւղի «Նաւասարդեան» դաշ-

տին վրայ, հունգարացի միջազգային մարզիչը, որ մարզա-  
կան յատուկ առաքելութեամբ մը Սուրբա հրաւիրուած էր,  
դաշտին վրայ նշմարեց բարձրահասակ, գորշ գոյնով, աշ-  
խոյժ, կայտառ, Ֆուլթայոյիստի բացառիկ յատկութիւններով  
օժտուած մարզիկ մը: Անմիջապէս այդ մարզիկը իր հոգածու-  
թեան տակ առաւ եւ իր անհրաժեշտ ցուցմունքներով, Ֆուլթ-  
այոյի բացառիկ խաղացող մը ըլլալու գիտելիքներ փոխանցե-  
լով եւ իր ամէնօրեայ ուշադրութեան առարկան դարձնելով,  
յաջողեցաւ կարճ ժամանակի ընթացքին պատրաստել եւ  
Հ.Մ.Ը.Մ.ին հրամցնել կատարեալ Ֆուլթայոյիստ մը՝ եղբ-  
Սարգիս Քէօշկերեանը, զայն անուանելով «Նեկրօ», նկատի  
ունենալով իր մորթին գորշ գոյնը:

«Նեկրօ»ն եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Սուրբոյ Ֆուլթայոյի միջնա-  
պահ գիծին աննման աստղ-խաղացողը, որ բարձր գիտակցու-  
թեամբ, բծախնդրութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ականի վայել նա-  
խանձախնդրութեամբ, գործադրեց իրեն վստահուած բոլոր  
պարտականութիւններն ու պար-  
տաւորութիւնները, արդարացնելով  
իր վրայ դրուած յոյսերն ու սպա-  
սումները, տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի  
մը նման, միշտ հաւատարիմ մնալով  
Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական սկզբունք-  
ներուն եւ հաւատամքին, միութեան  
«Բարձրացիր-բարձրացուր» վեհ ու  
ազնիւ նշանաբանին: Իբրեւ այդպի-  
սին ան արժանացաւ բոլորին սիրոյն,  
յարգանքին եւ գնահատանքին:

1956-ին, երբ Քառէն Եփփէ Ճե-  
մարանի միջնակարգի ուսանող  
եղայ (գիշերօթիկի բաժին), իբրեւ  
համակիր, թրիպիւններէն ծանօթա-

ցայ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին՝ եղբ Նեկրոյին, մանաւանդ  
դաշտին վրայ ցուցաբերած անոր մարզական բացառիկ ոգի-  
ին, որ աստղ մը ըլլալու առաջնահերթ նախապայմանն է: Ան  
բացարձակ կարգապահութիւն, օրինապահութիւն եւ լրջու-  
թիւն կը ցուցաբերէր իր կատարած բոլոր մրցումներուն ըն-  
թացքին եւ կատարեալ յարգանք եւ հնազանդութիւն ունէր  
իրաւարարներու սուլիչներուն: Առանց դժգոհանքի, առար-  
կութեան եւ տրտունջի կը գործադրէր անոնց որոշումները,  
միշտ Հ.Մ.Ը.Մ.ի վարկն ու համբաւը բարձր պահելու ազնիւ  
ջանքով ու վեհ կեցուածքով: Հետեւաբար, ան կ'արժանանար  
նոյնիսկ օտար խումբերու համակիրներու բարձր գնահա-  
տանքին եւ ծափահարութիւններուն:

1963-ի ամրան սկիզբը, երբ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ախոյեան  
խումբին միացայ, ինծի համար մեծ բախտաւորութիւն եւ  
հպարտութիւն էր մօտէն ծանօթանալ եղբ. Նեկրոյին եւ փայ-  
լուն Ֆուլթայոյիստի անոր առողջ ու լուսաւոր միտքին, վար-  
պետութեան շնորհներուն եւ աստղ Ֆուլթայոյիստի հմտու-  
թեան: Մանաւանդ Հալէպ հաստատուելէ ետք, նոյն շաբաթ  
մասնակցեցայ բամպակի մրցաշարքի աւարտական մրցու-  
մին, Նեկրոյի կողքին, միջնապահ դիրքին վրայ, եւ յաջողե-  
ցանք փառաւոր յաղթանակ մը արձանագրել Հալէպի ԱՏԻ  
խումբին դէմ՝ 3-2 արդիւնքով եւ տիրանալ բաժակին, շնոր-  
հիւ եղբայրներ Գրիգոր Սեւտալեանի (2) եւ Գօգօ Քիլէճեանի  
(1) նշանակած գեղեցիկ կոլերուն:

Այդ մրցումին առաւել տպաւորուեցայ այս աստղ մարզի-  
կով: Միշտ արթուն, պատրաստ, անձնագոհ ու արի, ան  
արագ, աշխոյժ վագրի մը նման կը պաշտպանէր Հ.Մ.Ը.Մ.ի  
բերդը եւ ճշգրիտ, արագ փոխանցումներով կը մատակարա-  
րէր յառաջապահ գիծը: Մէկ խօսքով կրնամ բացարձակ հա-  
մոզումով եւ խիղճի հանգստութեամբ ըսել, որ եղբ. Նեկրօն  
արդիւնաբեր գործի մարդ էր եւ  
ոչ խօսքի: Սակաւախօս, միշտ ուշի-  
ուշով մտիկ կ'ընէր բոլոր պատաս-  
խանատուներու խօսքերն ու ար-  
տայայտութիւնները եւ բոլորին  
թեղադրանքները կը գործադրէր  
ամենայն ճշգրտութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ը եղբ Նեկրոյին հա-  
մար սրբութիւն էր, իսկ ակումբը՝  
սրբավայր մը: Ան երբ Հ.Մ.Ը.Մ.ի  
սահմաններէն ներս մտնէր, տար-  
բեր կերպարանք մը կը ստանար:  
Հակառակ իր ունեցած համեստ  
ուսման եւ ապրած կեանքին, Հ.Մ.-  
Ը.Մ.ի ծիրէն ներս երկիւղածու-



**Սարգիս Քէօշկերեան («Նեկրօ»)  
եւ Սուրեն Երեցեան:**

Թեամբ, բացարձակ յարգանքով եւ լրջութեամբ կ'անցրնէր իր ժամանակը:

Սիրելի Նեկրօն ախոյեան խումբի իր անզուգական եղբայրներուն հետ փառաւոր նուաճումներ արձանագրեց եւ առաւել հարստացուց Հ.Մ.Լ.Մ.ի պատմութեան լուսաւոր էջերը: Այդ նուաճումներէն եւ պանծալի յաղթանակներէն կը ներկայացնենք նշանակալից կարգ մը իրագործումներ:

1. 1962-ին, Սուրիոյ նախագահական բաժակի պատուաբեր յաղթանակին կերտման մէջ եղբ. Նեկրօն կը նկատուի օրուան մրցումին կարեւոր աստղերէն մէկը:

2. 1964-1965-ին, Սուրիոյ ֆուտպոլի առաջին ախոյեանութեան «մումթազ» դասակարգի բաժակին տիրանալու անմոռանալի յաղթանակին, Նեկրօն դարձեալ ունեցաւ իր գնահատելի ներդրումը:

3. 1963-ի ամրան սկիզբը, քառանդամ մրցաշարքին, Պէյրութի մէջ, մասնակցութեամբ Լիբանանի եւ Սուրիոյ զօրաւորագոյն կազմերուն, Ռասինկ եւ Հ.Մ.Լ.Մ. Լիբանանէն, Ահլի եւ Հ.Մ.Լ.Մ. Հալէպէն: Մրցաշարքը վերջ գտաւ Հ.Մ.Լ.Մ.ի Հալէպի խումբին տպաւորիչ յաղթանակով:

4. Նեկրոյին գործօն ու դրական ներդրումը Հ.Մ.Լ.Մ.- «Աբէէլ» Կիպրոսի ախոյեան մրցումին, որ վերջ գտաւ անհաւատալի պատմական յաղթանակով՝ 10-2 ի նպաստ Հ.Մ.Լ.Մ.ի:

5. Խորհրդային Միութեան ողիմպիականի խումբին դէմ Հ.Մ.Լ.Մ.ի արձանագրած բացառիկ արդիւնքը՝ 0-0: Հ.Մ.Լ.Մ.ի խումբը եղաւ այն միակ խումբը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, որ յաղողեցաւ արձանագրել այս պատուաբեր արդիւնքը: Խումբը իր կատարած բոլոր մրցումները աւարտեց ջախջախիչ արդիւնքներով:

6. Բանակի հրաւերով Դանիայէն ժամանած առաջնակարգ խումբը, երկու մրցում կատարելու համար բանակի եւ Հ.Մ.Լ.Մ.ի խումբերուն դէմ, իր երկրորդ մրցումին, Հալէպի



մէջ, Հ.Մ.Լ.Մ.ի ախոյեան խումբին դէմ խոնարհեցաւ եւ 2-1 արդիւնքով պարտուեցաւ: Հոս եւս եղբ. Նեկրոյին ներկայութիւնը եւ դերակատարութիւնը զգալի էր:

7. Յորդանանէն Հ.Մ.Լ.Մ.ի հրաւերով Հալէպ ժամանած ախոյեան «Ֆայսալի» եւ փոխ ախոյեան «ժազիրա» խումբերը մեծ պարտութիւն կրեցին՝ 4-1 արդիւնքով: Հ.Մ.Լ.Մ.ի խումբը ինքզինք գերազանցեց, բարձր մակարդակի խաղ կիրարկեց եւ գեղեցիկ արդիւնքներ ձեռք բերաւ Յորդանանի ախոյեաններուն դէմ: Եղբ. Նեկրօն դարձեալ ունեցաւ կարեւոր նպաստ:

Համեստ, հաւատաւոր, կարգապահ, անձնուրաց, չափազանց զգայուն, բարի ու զիտակից Հ.Մ.Լ.Մ.ական մըն էր եղբ. Սարգիս Քէօշկերեանը՝ սիրելի Նեկրօն:

Փոխան ծաղկեփունջի, սիրտի հարազատ խօսքերս եւ զգացումներս կը յայտնեմ անմասն, հաւատաւոր Հ.Մ.Լ.Մ.ական եղբօրս՝ Նեկրոյին, որ 27 Նոյեմբեր 2022-ին իր մահկանացուն կնքեց Յրանսայի Վալանս քաղաքին մէջ, խնդրելով Տիրոջմէ, որ երկիրքի արքայութեան արժանացնէ այս բացառիկ, տիպար Հ.Մ.Լ.Մ.ականը, եւ հոն, դրախտային անդաստանին մէջ, ախոյեան խումբի ինը եղբայրներու կողքին, հանգիստ ու խաղաղ ննջէ ան:

Սիրելիներ, բոլորդ միշտ կը մնաք միտքիս, հոգիիս եւ յիշատակներուս առաջնահերթ տեղը գրաւող անմոռանալի եղբայրներ:

Ոտքի, ձախէն երրորդը՝  
եղբ. Սարգիս Քէօշկերեան («Նեկրօ»):



**«ՄԱՐՁԻԿ»ԻՆ  
ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

● Եղբ. Պետիկ Տէր Վարդանեան (Պոսքըն) 600 \$





## ԾԱՂԿԵՄԱՏՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱԲԱՐՇ ՔՐԻՍԵԱՆԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻՆ

Հայոց Ցեղասպանութեան 108-ամեակին առիթով, 25 Ապրիլ 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Օշին Փիրումեան, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան, ատենադպիր եղբ. Արթիւր Մկրտչեան եւ Հայաստանի մարմնակրթութեան եւ մարմնամարզի պետական հիմնարկի (ՖԿՄՊԻ)՝ ֆիզիքական Կուլտուրայի եւ Սպորտի Պետական Ինստիտուտ) արտաքին կապերու եւ ռազմավարական ծրար

գիրներու փոխ տնօրէն Անժելա Նուշիկեան ծաղիկներ զետեղեցին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր Շաւարշ Քրիսեանի յուշակոթոնին: Շաւարշ Քրիսեան եղած է մարզական գործիչ, գրող, հրապարակախօս, «Մարմնամարզ» մարզական թերթի խմբագիր: Ան Հայոց Ցեղասպանութեան զոհերէն է: Քրիսեանի կիսանդրին տեղադրուած է մարմնամարզի պետական հիմնարկի գլխաւոր մասնաշէնքի շքամուտքին մօտ:

## ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 108-ԱՄԵԱԿԻ ՀՍԿՈՒՄ ԵՒ ՖԻԼՄԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութիւն ԳԱՀԻՐԷ

Հայոց Ցեղասպանութեան 108-ամեակին առիթով, Գահիրէի տական Խորհուրդն ու խմբապետական կազմը հսկում մը կազմակերպեցին Կի-

րակի, 23 Ապրիլ 2023-ի երեկոյեան ժամը 8-ին, Հեթիոպոլոյ «Յուսաբեր» ակումբին մէջ, ներկայութեամբ թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանի, Քահանայ Հօր, ինչպէս նաեւ համայնքի եւ շրջանի միութիւններու ներկայացուցիչներու եւ համակիրներու:

Ներկաները Արեւմտեան Հայաստանի քարտէսին վրայ նշեցին եւ դրոշմեցին իրենց նախնիներուն արմատները, ուրկէ տեղահանուած են Ցեղասպանութեան օրերուն: Ապա տեղի ունեցաւ մոմավառութիւն:

Սկսուտները ընթերցեցին վերապրողներու ժառանգորդներու պատումներ՝ Գէորգ Աբէլեանի «Յկեանս նահատակութիւն» գիրքէն:

Պատուի վրայ ցուցադրուեցաւ



Սիւզան Խարտայեանի «Grandma's Tattoos» վաւերագրական տեսերիզը, որմէ ետք Շուէտէն ուղիղ եթերով ներկաները գրուցեցին հեղինակին հետ: Աւարտին, Առաջնորդ Սրբազանը ներկաներուն փոխանցեց օրուան պատգամը:







## Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԻ ՀԻՆԳ ՄԱՄՆԱՃԻԻՂԵՐԸ ՈԳԵԿՈՉԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 108-ԱՄԵԱԿԸ

### Թղթակից ՀԱԼԷՊ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ շրջանի հինգ մասնաճիւղերը պատշաճ կերպով ոգեկոչեցին Հայոց Ցեղասպանութեան 108-ամեակը եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին:

ԳԱՄԻՇԼԻԻ մասնաճիւղին սկաուտները եւ շեփորախումբը, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, ժողովուրդին ընկերակցութեամբ, ուղղուեցան Ս. Յակոբ Եկեղեցի, ուր կատարեցին ծաղկեմատոյց:

ԴԱՄԱՍԿՈՍԻ մասնաճիւղին սկաուտներն ու շեփորախումբը 24 Ապրիլ 2023-ին այցելեցին Դամասկոսի գերեզմանատուն, ուր Ապրիլեան նահատակներու յուշարձանին առջեւ ծաղկեպսակ զետեղեցին եւ վերանորոգեցին պահանջատիրութեան իրենց ուխտը:

ՀԱԼԷՊԻ մասնաճիւղին սկաուտները, շեփորախումբին ընկերակցութեամբ, Կիրակի, 23 Ապրիլ 2023-ին, մասնակցեցան Հայոց Ցեղասպանութեան 108-ամեակին առիթով Հ.Յ.Դ.ՍԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած ժողովրդային ջահերթին, որ սկիզբ առաւ Ազգային Քառէն Եփփէ Ճեմարանէն դէպի Ազգային գերեզմանատուն:

24 Ապրիլ 2023-ին, առաւօտեան 9.30-ին, սկաուտները ներկայ գտնուեցան

Ազգային գերեզմանատուն, ուր յետ Ս. եւ Անմահ Պատարագի, Հայոց Ցեղասպանութեան սրբադասուած նահատակներու յուշակոթողին դիմաց տեղի ունեցաւ ծաղկեմատոյց՝ ի յիշատակ մեր անմեղ զոհերուն:

Սկաուտները նաեւ ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին եկեղեցի, ուր տեղի ունեցաւ արեան տուչութիւն:

ԼԱԹԱՔԻՈՅ մասնաճիւղին սկաուտներն ու շեփորախումբը, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ ոգեկոչեցին Ապրիլեան զոհերուն յիշատակը եւ ծաղկեմատոյց կատարեցին:

ՔԵՍԱՊԻ մասնաճիւղի գայլիկները, սկաուտներն ու շեփորախումբը, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, Քեսապի մէջ տողանցեցին եւ Մեծ Եղեռնի յուշակոթողին դիմաց ծաղկեմատոյց կատարեցին:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՆՇԵՅ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 108-ԱՄԵԱԿԸ



Ը.Մ.ականի սրբազան ուխտն ու հաւատամքը վերանորոգելու, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ տրուած երգումին տէր ըլլալու, ազգային ու մարդկային արժէքներով ապրելու, Հայ Դատի աշխատանքներուն մասնակից դառնալու, մեր ինքնութեան եւ արժանապատուութեան հաւատարիմ մնալու, հայու տեսակին կառչելու, Արեւմտահայաստանին ու Արցախին վերատիրանալու երազը հետապնդելու կոչ: «Իբրեւ Ցեղասպանութեան ենթարկուած ազգի մը ժառանգորդներ, պարտաւոր ենք անհատական թէ հաւաքական կեանքի մէջ ցոյց տալու Հ.Մ.՝

Ը.Մ.ականի գաղափարական աշխարհին վայել գործ ու նուիրում, ինչպէս նաեւ՝ հայօրէն ապրելու եւ նուիրուելու յանձնառութիւն», շեշտեց քոյր Պիլալեան:

Այս առիթով պատգամ մը ուղղեց Դպրեվանքի տեսուչ Պարոյր Վրդ. Շէրնեգեան եւ ըսաւ. «Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ, դուք երբ ձեր աջ ձեռքը վեր կը բարձրացնէք իբրեւ պատւի եւ յարգանքի արտայայտութիւն, այդ ձեռքը մնայուն կեր-

## Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

**Հ**այոց Ցեղասպանութեան 108-ամեակին առիթով, Շաբաթ, 23 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկառտական խմբապետական կազմերը եւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը համախմբուեցան Պրեքայայի Ս. Աստուածածին վանքին շրջափակը, ուր կատարուեցաւ մեր մէկուկէս միլիոն սրբադասուած նահատակներու յիշատակին աղօթք:

Ապա, ներկաները ուղղուեցան յուշակոթող եւ ծաղկեպրասակներ զետեղեցին Նահատակաց յուշարձանին առջեւ՝ առ ի յարգանք նահատակներու անթառամ յիշատակին: Շրջանային Սկառտական Խորհուրդի եւ խմբապետութեան անունով խօսք առաւ քոյր Լոուի Պիլալեան: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի համար ականգութեան վերածուած այս հաւաքը առիթ է խոնարհելու Հայոց Ցեղասպանութեան զոհ դարձած մեր նախնիներու կրած տառապանքին, անասելի ցաւին, ապրած դժոխային կեանքին, հայու իսկական կերտուածքին, քրիստոնէական հաւատքին, համոզումին եւ հայրենասէրի ոգիին առջեւ: Ան շեշտեց, որ այս արարողութիւնը մէկ կողմէ՝ դաստիարակութեան արտայայտութիւն է, միւս կողմէ՝ հաշուետուութեան եւ ինքնագիտակցութեան պահ է, Հ.Մ.՝







պով բարձր պահեցէք, որովհետեւ այդ բազուկը թէեւ մերն է, սակայն արիւնը՝ մեր սուրբ նահատակներունն է: Մեր երակներէն մեր նահատակներուն արիւնը կը հոսի, ուստի մեզի արտօնելի չէ, որ մեր բազուկները գետին ձգենք ու խոնարհինք: Սիրելի՛ Հ.Մ.-Ը.Մ.ականներ, թշնամին կ'ուզէ մեզ տեսնել յուսահատած, պառակտուած, յանձնուած, սակայն մեզի չի վայելեր յանձնուելի, յուսահատիլ, ըսել, թէ Հայ Դատը վերջացած է», ըսաւ հայր Պարոյր՝ շեշտելով, որ Հայ Դատը ամէնօրեայ դրուածքով կը վերանորոգուի եւ մեզ ազգովին կը հրաւիրէ նոր մարտահրաւէրները նոր ձեւով ու յաւելեալ կորովով դիմագրաւելու, որպէսզի թուրքն ու ագերին լաւապէս գիտնան, որ

յարութիւն առած հայութեան զաւակները տակաւին յանձնառու են իրենց դատին եւ իրաւունքներուն հետապնդման: Տեսուչ վարդապետին պատգամէն, «Յառաջ նահատակ» քայլերգի եւ «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութենէն ետք, ներկաները մոմեր վառեցին եւ վերանորոգեցին իրենց ուխտը՝ միշտ վառ պահելու Հայոց Յեղասպանութեան զոհերուն յիշատակը եւ հաւատարիմ մնալու նահատակներու կտակին:



**ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՄԱՃԻՒՂԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ՏՈՂԱՆՅԲԸ**  
Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի բոլոր խումբերը, ծնողներն ու բարեկամները մասնակցեցան մասնաճիւղին աւանդութիւն դարձած պահանջատիրական տողանցքին: Քայլարշաւը ընթացք առաւ Հայաչէնի Ժողովրդային Տունէն, անցնելով «Ազատամարտ» ակումբէն, հասնելով Հայ Կաթողիկէ Պատրիարքարան, ուր տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղում՝ Ապրիլեան յուշակոթողին առջեւ, Յեղասպանութեան 1.5 միլիոն նահատակներու յիշատակին: Քայլարշաւէն ետք, մասնաճիւղին անդամները ուղղուեցան Անթիլիասի Մայրավանք, ուր մասնակցեցան Հայոց Յեղասպանութեան 108-ամեակին նուիրուած ձեռնարկին:





## ՀԱՅՈՅ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԴԱՍՈՒԲԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՌԳԵԿՈՉՈՒՄ ԱՌՆՀԵՄԻ ՄԷՁ

### Թղթակից ԱՌՆՅԵՄ

Հովանավորությամբ Արևմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Նախագահ Արք. Պարսամեանի, կազմակերպությամբ Առնհեմի Հայ Առաքելական եկեղեցւոյ, «Նոր Այգ» կիրակնօրեայ դպրոցի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Առնհեմի Մեկուսի վարչութեան, Կիրակի, 23 Ապրիլ 2023-ի յետմիջօրէի ժամը 2:30-ին, Առնհեմի «Nieuwe kerk» եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան սրբադասուած նահատակներու յիշատակին ոգեկոչական ձեռնարկ, յուշ-երեկոյ, որուն ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէութեան, Հ.Յ.Դ. «Գարեգին Նժդեհ» Երիտասարդական Միութեան, ՀՕՄ-ի տեղւոյն մասնաձիւղի, Արմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վարչութեան ներ-

կայացուցիչներ, հիւրեր, Հ.Մ.Ը.Մ-ական քոյրեր եւ եղբայրներ, ինչպէս նաեւ մեծ թիւով համակիրներ:

Յուշ-երեկոյն սկիզբ առաւ Առաջնորդ Սրբազանին կողմէ Յեղասպանութեան նահատակներու յիշատակին մա-

տուցուած հոգեհանգստեան պաշտօնով: Ապա, ներկաները մէկ վայրկեան յոտնկայ լուսթեամբ յարգեցին բոլոր նահատակներու յիշատակը:

Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները խմբերգեցին Հայաստանի քայլերգ «Մեր հայրե-







նիք»ը, որմէ ետք օր-  
լան հանդիսավար Մկր-  
տիչ Ամրոյեան բեմ  
հրաւիրեց Առնհեմի  
Մեկուսի մասնաճիւղի  
վարչութեան ատենա-  
պետ եղբ. Բաֆֆի Փո-  
լոյեանը՝ ձեռնարկին  
բացման խօսքը արտա-  
սանելու:

Ապա, սկսուաները  
ներկայացուցին կեն-  
դանի պատկեր մը՝  
«Ձեռք մոռնար, պիտի  
պահանջենք եւ օր մը տէր դառնանք մեր  
խլուած հողերուն» բնաբանով:

Սկսուաներու կենդանի պատկերէն  
ետք, Առնհեմի Հայ Առաքելական եկե-  
ղեցւոյ դպրոց դասը կատարեց «Լէպլէ-  
պիճի» երգը: Քոյրեր Գաղի Մանասեր-  
եան եւ Նայիրի Ստեփանեան ասմունքե-  
ցին «Իմ հողն ուրիշ է» քերթուածը:

Առնհեմի «Նոր Այգ» կիրակնօրեայ  
դպրոցի սաները հայկական գեղեցիկ

տարագներով կա-  
տարեցին շարք մը  
արտասանութիւն-  
ներ եւ երգեր: Դրպ-  
րաց դասը ներկա-  
յացուց նաեւ այլ  
երգ մը՝ «Արաքս,  
իմ բախտի երազ»:  
Յաջորդեց աս-  
մունք մը. Դալար  
Լազարեան արտա-  
սանեց Համօ Սահ-  
եանի «Ասում են  
հին եւ այնքան, որքան որ կրակն է հին»  
բանաստեղծութիւնը:

Յայտագիրի վերջին մասով Հ.Մ.Ը.Մ.ի  
սկսուաները երգեցին «Ատանայի ողբը»:  
Փակման խօսքը արտասանեց ձեռնար-  
կի հովանաւոր Խաժակ Արք. Պարսամ-  
եան: Ան ըսաւ, որ «Երբ նման երիտասար-  
դութիւն Սփիւռքի մէջ կը գործէ, ուրեմն  
պահանջատիրութեան երթը կը շարունա-  
կուի»: Այս առիթով ան իր շնորհակալու-  
թեան խօսքը ուղղեց ներկաներուն եւ



կազմակերպիչ յանձնախումբին:  
Յուշ-երեկոյի աւարտին, ներկաները  
խմբուեցան եկեղեցւոյ բակը, Հ.Մ.Ը.Մ.ի  
Առնհեմի Մեկուսի շրջանի խմբապետա-  
կան կազմը պատրաստած էր Հայոց Յե-  
ղասպանութեան յուշահամալիրին ման-  
րակերտը, որուն շուրջ կատարուած  
աղօթքով եւ ծաղկեմատոյցով Սրբազան  
հայրը եւ ներկաները յարգանքի իրենց  
սուրբ մատուցեցին մեր մէկուկէս միլ-  
իոն սրբացած նահատակներուն:







# ՀԱՅՈՑ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 108-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ ՇՈՒՄՏԻ ՄԷՋ



## Թղթակից ՍՈՏԵՐԹԵԼԻԱ

**Հ**ՄԸՄ-ի Շուկաի չորս մասնաճյուղերը՝ Վեսթերոս, Օրէպու, Սթոքհոլմ եւ Սոտերթելիա արժանավայել կերպով նշեցին Հայոց Յեղասպանութեան 108-ամեակը: Ստորեւ՝ ամփոփ տեղեկատուութիւն չորս մասնաճյուղերու ոգեկոչական ձեռնարկներուն մասին:

### ՎԵՍԹԵՐՈՍԻ ՄԷՋ

ՀՄԸՄ-ի Վեսթերոսի Մեկուսի շրջանի վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 22 Ապրիլ 2023-ի կէսօ-

րէ ետք ժամը 5.30-ին, Վեսթերոս քաղաքի «Տ:Տ Eliyo Syrisk Ortodoxa Kyrkan» եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 108-ամեակին նուիրուած հսկում-ոգեկոչման ձեռնարկ:

Ձեռնարկը սկիզբ առաւ եկեղեցւոյ բակին մէջ դեղարուեստական պատկերով մը՝ կատարողութեամբ սկսուտներու, որոնք ներկայացուցին 1915-ի Եղեռնը եւ Յեղասպանութենէն մազապուրծ փրկուած եւ հալածանքներու ենթարկուած հայ ժողովուրդը: Ներկայացումին աւարտին, սկսուտները խմբովին մօտեցան ձեռալին աշխատանքով պատրաստուած Ծիծեռնակաբերդի յուշարձանի մանրակերտին եւ մոմերով վառեցին անմար կրակը՝ խորհրդանշելով մահուան ո՛չ ըսած եւ մոխիրներու տակէն յառնած եւ պահանջատէր ազգ դարձած հայ ժողովուրդի պատմութիւնը:

Գեղարուեստական պատկերին յաջորդեց երգեցողութիւնահնչեցին «Տէր ողորմեա»ն եւ «Գնա կռունկ»ը, որմէ ետք ներկաները անցան եկեղեցւոյ սրահ, ուր սկսուտները ծաղիկներ տեղադրեցին Ծիծեռնակաբերդի մանրակերտին շուրջ:

Տեղի ունեցաւ տեսերիզի ցուցադրութիւն, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան





յոտնկայս լուսթեամբ յարգեցին Հայոց Յեղասպանութեան նահատակներուն յիշատակը: Ապա, խօսք անելով, քոյր Նարինէ Տէկէրմենճեան ներկաներուն փոխանցեց օրւան պատգամը: Քոյր Նարինէ շեշտը դրաւ Հայ ժողովուրդի հաւաքական կամքին եւ միասնակամ ըլլալու կարեւորութեան վրայ, ինչպէս նաեւ Հայ Դատի գծով Հ.Մ.Ը.Մ-ի ունեցած դերակատարութեան եւ պահանջատէր երիտասարդութիւնն պատրաստելու կարեւորութեան վրայ: Քոյրը իր խօսքը աւարտեց մէջբերելով Եղիշէ Չարենցի «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է» պատգամը:



Տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր: Շրջանի սկաուտները ունեցան անհատական եւ խմբային զանազան ելոյթներ, Ապրիլ 24-ի նուիրուած ամսունքներ արտասանեցին եւ ազգային երգեր երգեցին ու նուագեցին:

Երեկոյեան ժամը 7-ին ձեռնարկը աւարտեցաւ, բայց ոչ՝ պաշարի միտքն ու ոգին: Վեսթերոսի հայութիւնը հրակում-ձեռնարկին մասնակցելով վերանորոգեց իր ուխտը՝ մնալու ջահակիրը Հայ Դատին, միշտ յիշելու Հայոց Յեղասպանութիւնը եւ պահանջելու անոր ճանաչումն ու արդար հատուցումը:

**ՕՐԷՊՐՈՒԻ ՄԷՋ**

Օրէպրուի մէջ, 108-ամեակի ոգեկոչումը տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան յուշակոթողին մօտ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Օրէպրուի մասնաճիւղին, «Արարատ» միութեան եւ Օրէպրուի հայ եկեղեցական խորհուրդին: Յայտագիրը սկսաւ հին ու նոր գոհերու յիշատակին մէկ վայրկեան յոտընկայս լուսթեամբ: Հնչեց Հայաստանի Հանրապետութեան քայլերգը: Ապա, միութիւններու ատենապետները եւ երեսփոխան Մուրատ Արթին փոխանցեցին իրենց սրտի խօսքերը:

Յայտագիրը շարունակուեցաւ աղօթքով, ծաղկեմատոյցով, խմբերգներով եւ ասմունքով:

**ՍԹՈՔ ՀՈՒՄԻ ԵՒ ՍՈՏԵՐԹԵԼԻՈՅ ՄԷՋ**

Սթոքհոլմի եւ Սոտերթելիոյ մասնաճիւղերու սկաուտները եւ անդամները, Շաբաթ, 22 Ապրիլ 2023-ի երեկոյեան

ժամը 6:30-ին, իրենց մասնակցութիւնը բերին Հայոց Յեղասպանութեան 108-ամեակը ոգեկոչող եւ Արցախի շրջափակումը դատապարտող ջահերթին, որ ընթացք առաւ Սթոքհոլմի թրքական դեսպանատունէն եւ ուղղուեցաւ դէպի Kungstradgarden:



**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 108-ԱՄԵԱԿԸ ԵՐՈՒՄԱՂԷՄԻ ՄԷՋ**

Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, Հայոց Յեղասպանութեան նուիրուած Երուսաղէմի յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ պաշտօնական արարողութիւն, որուն մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները:





# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՇՐՋԱՆԷ ՇՐՋԱՆ



Երուսաղեմ



Վիեննա



Ալմեյո



Հարավային Ամերիկա



Ամման



Արեւմտեան  
Մ. Նահանգներ



Լոնտոն



Փարիզ



Աւստրալիա





ՀԱԿԱՌԱԿ ՇՐՋԱՔԱԿՄԱՆ ԴԺՈՒԱՐԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ՝

## ԱՐՑԱՆԻ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՐ ԱՇԽՈՅԺ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

### Թղթակից ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Հակառակ 12 Գեկտեմբեր 2022-էն ի վեր պարտադրուած շրջափակման դժուարին պայմաններուն, Արցախի Մեկուսի շրջանը կը շարունակէ միութենական իր աշխոյժ գործունէութիւնը՝ ներքին ու արտաքին զանազան ձեռնարկներով, որոնց մէկ մասին անդրադարձած էինք «Մարզիկ»-ի մեր նախորդ թիւով (թիւ 428, էջ 9-11): Ստորեւ՝ լրացուցիչ ակնարկ մը վերջին շրջանի աշխատանքներուն մասին:

### ՀԱՒԱՔ՝ ՆՌԵՆՆԻ ՄԷՋ

13 Մայիսին, սկառուտական հերթական հաւաքը տեղի ունեցաւ Նռենիի մէջ: Սկառուտները սորվեցան կապի նոր տեսակներ, քննարկեցին իրենց յառաջիկայ ծրագրերները եւ ճաշեցին միասին: Հաւաքին ներկայ գտնուեցաւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեան:



### «ԹՈՒՄՕ» ԿԵԴՐՈՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

6 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Մեկուսի մասնաճիւղի սկառուտները այցելեցին «Թումօ» ստեղծարար արհեստագիտութեան կեդրոն: Անոնք ծանօթացան կեդրոնին մէջ գործող բաժանմունքներուն եւ կազմեցին ապագայ գործակցութեան ընդհանուր տեսլական:

### ՈՒՂԵԿԻՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ

7 Ապրիլին, Հ.Յ.Դ. Արցախի կառույցի ուղեկից միաւորները՝ Արցախի Հայ Օգնութեան Միութիւնը, Հ.Յ.Դ. Արցախի Երիտասարդական Միութիւնը, Հ.Յ.Դ. Արցախի Պատանեկան Միութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղը կազմակերպեցին միացեալ ձեռնարկ մը, նուիրուած՝ մայրութեան եւ զեղեցկու-





թեան, Ս. Աստուածածինի Աւետման տօնին:

Զեռնարկին ներկայ գտնուեցան Արցախեան բոլոր պատերազմներուն զոհուած դաշնակցականներու կիներ, մայրեր, նահատակուած հերոսներու ընտանեկան պարագաներ, որոնք մաս կը կազմեն ՀՕՄ-ի շարքերուն:

Օրհնութեան խօսքով ձեռնարկին բացումը կատարեց Անդրէաս Քհնյ.

Թաւադեան: Զոհուած հերոսներու հարգատներուն ուղղուած յարգանքի խօսք ուղղեց Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթիւր Մոսիեան:

Մայրերուն եւ մայր հայրենիքի նւիրուած ելոյթներով հանդէս եկան Հ.Յ.Դ. Արցախի Երիտասարդական Միութեան, Հ.Յ.Դ. Արցախի Պատանեկան Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները,

«Մենք ենք մեր սարերը» երգի ու պարի պետական համոյթը, երգչուհիներ Տաթևիկ Բալայեան, Լիլիթ Աւանեսեան եւ Հատրութի մանկապատանեկան ըստեղծագործական կեդրոնը:

Զեռնարկը հովանաւորեց ՀՕՄ-ի Արեւմտեան շրջանի Շրջանային Վարչութիւնը:

## Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-Ի «ՀԱՅ ՄԿԱՌԻՏԻ ՕՐ»Ը «ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԲԱՆԱԿԱՎԱՅՐ»ԻՆ ՄԷՋ


Մարտ Քեչիշեան ԵՐԵՒԱՆ

Հ.Մ.Ը.Մ-ը հայրենիքի մէջ վերընծիւղուեցաւ 1 Դեկտեմբեր 1989-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Երեւանի մասնաճիւղով, իսկ միջազգային ճանաչում ստացաւ 18 Ապրիլ 1997-ին, որուն համար Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ղեկավարութիւնը 18 Ապրիլը հռչակած է «Սկաուտի Օրը» (նաեւ, 18 Ապրիլ 1920-ին Հայաստանի մէջ տեղի ունեցած է սկաուտական առաջին տողանցքը) եւ ամէն տարի զանազան նախաձեռնութիւններով ու մեծ շուքով կը նշէ զայն:

Այս ուրախ առիթով, Կիրակի, 16 Ապրիլ 2023-ին, արտասովոր եռուզեռի մէջ էր Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի «Հայի Յովսէփեան բանակավայր»ը:

Աւելի քան 100 արի-արեւոյշներէ անկախ, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի բարեկամներ փութացած էին հոն, մասնակից դառնալու «Սկաուտի Օր»ուան տօնախմբութեան եւ իրենց երախտագիտութիւնը յայտնելու այն կազմակերպութեան, որ 105 տարիներէ ի վեր կը գործէ հայկական գանազան գաղութներէ ներս, իր շուրջ համախմբելով հայ ժողովուրդի երիտասարդ սերունդները եւ կերտելով անոնց ազգային նկարագիրը:

Բանակավայր եկած էին նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեանը, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւոր Արթիւր Խաչատրեանը եւ բազմաթիւ հիւրեր:







Ուրախութեամբ կ'արձանագրենք, որ այս տարի, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի վարչութիւնը, իր ղեկավարած կազմակերպութեան շրջապատը աւելի ընդարձակելու հեռանկարով, կազմած է «Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի բարեկամներ»-ու խումբ մը, որ աշխուժութեամբ աշխատանքի սկսած է եւ կը փորձէ կազմակերպութեան շուրջ համախմբել Սփիւռքի զանազան երկիրներէ հայրենիք հաստատած Հ.Մ.Ը.Մ.-ականները:

Նորաստեղծ այս խումբին առաջին նախաձեռնութիւնը «Սկաուտի Օր»-ու առիթով կազմակերպած դաշտահանդէսն էր, որուն գալլիկ-արծուիկներէն, արի-արենոյճներէն եւ Հ.Մ.Ը.Մ.-ականներէն անկախ մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի բազմաթիւ բարեկամներ, ինչ որ մեծապէս քաջալերելի է:

Դաշտահանդէսը սկիզբ առաւ առաւօտեան ժամը 10.30-ին, դրօշակի տպաւորիչ արարողութեամբ: Մեծ խորհրդաւորութեամբ վեր բարձրացան Արցախի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի դրօշները, մինչ տարազաւոր Հ.Մ.Ը.Մ.-ականները ինքնավստահութեամբ խմբերգեցին Հ.Մ.Ը.Մ.-ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը: Հ.Մ.Ը.Մ.-ի քայլերգը, ապա սկաուտական խանդավառ երգերն ու կանչերը աւետեցին

«Սկաուտի Օր»-ու ան բացումը եւ այնուհետեւ ընդարձակ բանակավայրի տարածքին վրայ իրականացուցին օրուան հաճելի աշխատանքները:

Միւս կողմէ, բանակավայր այցելեցին մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.-ականներ, ծնողներ ու բարեկամներ, որոնք ուրախութեամբ դիմաւորուեցան Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի վարչութեան եւ դաշտահանդէսի կազմակերպիչ «Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի բարեկամներ»-ուն կողմէ: Ուրախ էր մթնոլորտը, հին ու նոր միութենականներ զիրար ողջունեցին, երկար զրուցեցին, հին յուշեր ապրեցան եւ իրարու կարօտ առին:

Բնական ու հաճելի էր շրջապատը: Մասնակիցները մեծ գոհունակութեամբ ճաշակեցին հրամցուող խորովածն ու իւրապատուկ տոլման: Տեղի ու-

նեցաւ վիճակահանութիւն, շատեր բախտաւորուեցան գեղեցիկ նուէրներով: Հետաքրքրական էր նաեւ նարտիի մրցաշարքը, որ բաւական խանդավառութիւն ստեղծեց մասնակիցներուն եւ անոնց հետեւող ներկաներուն մօտ:

Սկաուտներուն ուրախ երգերն ու կանչերը ներկաները համախմբեցին իրենց շուրջ: Յետմիջօրէին տեղի ունեցաւ սկաուտներու այնքան սիրած խաղը՝ կահահանդէսը, որ նաեւ յուշեց օրուան հաճելի դաշտահանդէսին եզրափակումը: Մեր հնարամիտ արի-արենոյճներն ու գալլիկ-արծուիկները հրամցուցին գեղեցիկ յայտագիր մը. երգ, կանչ, թատրոն, պար եւ զուարճալի խաղեր, բացառապէս իրենց թաքուն ճիրքերը:

Երեկոյան, ժամը 6-ին, դանդաղօրէն վար իջան բանակավայրը հարլուտացնող Արցախի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի դրօշները: Այնուհետեւ, մէկ ժամուան մէջ մաքրուեցաւ բանակավայրը, ամալացաւ եւ ամէն ինչ վերադարձաւ իր բնականոն կեանքին: Դաշտահանդէսին մասնակիցները մեծ գոհունակութեամբ մեկնեցան տուն, դարձեալ տեսնուելու եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ին զօրակցելու հաստատակամութեամբ:

«Ցտեսութիւն մըն է եղբայրք, միայն ցտեսութիւն»:





# ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՃԷՔ ԵՒ ԶԱՐԻԿ ԵՈՒՐԷՃԵԱՆՆԵՐ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ

**Հ**ՄԸՄ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ Նաւասարդեան 46-րդ մարզախաղերը եւ փառատօնը այս տարի կը կազմակերպուին շնորհիւ Նաւասարդեան 46-րդ մարզախաղերու հովանաւոր պատուոյ նախագահներ՝ տէր եւ տիկին Ճէք եւ Զարիկ Եուրէճեաններուն, անգամ մը եւս ոգեւորելով համայնքին մարզիկները, սկաուտները, երիտասարդները եւ անդամները:



դանոցի խորհուրդներուն մէջ, նաեւ հինգ տարիներ եղած է Glendale Memorial հիւանդանոցի խորհուրդին ատենապետը:

Զարիկ Յարութիւնեան-Եուրէճեան ծնած է Լաոնաքա, Կիպրոս եւ յաճախած է Կիպրոսի ամերիկեան դպրոցը: 1963-ին ծնողքին հետ կը փոխադրուի Լոնտոն, Անգլիա, ուր կը շարունակէ իր ուսումը, որմէ ետք կը հետեւի նորաձեւութեան ճիւղին: Զարիկ Միացեալ

Ճէք Եուրէճեան ծնած է Երուսաղէմ, համեստ, ազգասէր եւ անձնուէր ընտանեկան յարկի մը տակ: Ան զաւակն է Յովհաննէս եւ Մարկրիթ Եուրէճեաններուն: Փոքր տարիքէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի մասնաճիւղին, ուր եղած է գայլիկ, ապա՝ սկաուտ: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ: 1965-ին կը փոխադրուի Լիբանան եւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն (AUB) կը ստանայ դեղագործութեան վկայական: 1970-ին կը մեկնի Լոս Անճելէս՝ այցելելու համար ծնողքին: Ան իր բարձրագոյն ուսումը կը շարունակէ Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանին (USC) մէջ՝ ստանալով դեղագործութեան դոկտորի տիտղոս:

Նահանգներ հաստատուած իր քրոջ այցելութեան կու դայ, երբ Ճէք պատահամբ կը հանդիպի իրեն: 1973-ին Ճէք եւ Զարիկ կ'ամուսնանան՝ կազմելով իրենց ընտանեկան բոյնը:

Եուրէճեան ամուր բախտաւորուած է երկու զաւակով, մանչը՝ Հայկ եւ դուստրը՝ Ռընէ, որոնք կազմած են իրենց ընտանեկան օճախները եւ չորս թոռներով բախտաւորած են մեծ հայրը եւ մեծ մայրը: Հայկը տնօրէնն է Western Drug Medical Supply հաստատութեան, իսկ Ռընէն ունի իր անձնական գործը:

Ճէք Եուրէճեան կը նետուի կեանքի ասպարէզ եւ հինգ տարի կ'աշխատի Փասատինայի Huntington Memorial հիւանդանոցին մէջ: 1977-ին կը բանայ իր առաջին անձնական դեղարանը, որմէ ետք, շնորհիւ իր աշխատասիրութեան եւ պարտաճանաչութեան, դեղարանները կը բազմապատկուին եւ ան կ'արձանագրէ մեծ յաջողութիւններ՝ կեդրոնանալով բժշկական իրերու (medical supplies) մատակարարման գործին մէջ: Ան յաջողակ գործարար մըն է եւ սեփականատէրն է Western Drug Medical Supply հաստատութեան, 8 մասնաճիւղերով՝ Սաքրամենթոյն մինչեւ Սան Պեռնանտինո:

Զարիկը միշտ նեցուկ կանգնած է իր ամուսնոյն եւ միշտ համբերութեամբ, յաղթահարած են ամէն տեսակ դժուարութիւն եւ յաջողութեամբ կերտած են իրենց ապագան: Քոյրը քաջ կը հաւատայ Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) մարդասիրական եւ բարեսիրական գործի վսեմ առաքելութեան: Ան ՀՕՄ-ի Սանթրա Մոնիթրինգի «Կարս» մասնաճիւղի նուիրեալ անդամուհի եղած է եւ իր գործօն ներկայութեամբ տարիներ շարունակ նիւթաբարոյական իր ներդրումը ունեցած է:

Յատուկ յիշատակութեան արժանի են Ճէքի աշխատանքին սկզբնական տարիները: Ան գործած է Քենիոյ մէջ, Ափրիկէ, ուր ան աշխատած է մասսայի ցեղին հետ, հիմնելով բազմաթիւ բժշկական կեդրոններ եւ դեղարաններ:

Պէտք է ընդգծել, որ Եուրէճեան ամուրի ազգային նիւթաբարոյական նուիրումը երախտաշատ ժառանգ մըն է, որ արմատացած է իրենց մէջ շնորհիւ անձնագոհ կերպարին՝ Ճէքի հանգուցեալ մօր Մարկրիթ Եուրէճեանի, որուն նուիրեալ առաքելութիւնը իր մնայուն դրոշմը ձգած է ընտանիքի անդամներուն եւ շրջապատին վրայ: Ան իր ամբողջ կեանքը նուիրած է ուրիշներու օգնութեան եւ մարդասիրական ծառայութեան: Կիւմրիի մէջ ան հիմնած է բարեսիրական կեդրոն մը եւ իր կեանքին վերջին 10 տարիները նուիրումով աշխատած է ի սպաս անոր:

Հակառակ իր գերզբաղութեան, եղբայր գործօն մասնակցութիւն բերած է զանազան յանձնախումբերու գործունէութեան: Ան տարիներ ծառայած է ամերիկեան սկաուտութեան (Boys Scouts of America) եւ Glendale Adventist հիւանդ-

Եղբայր Ճէք միշտ խոնարհութեամբ կ'ընդգծէ, թէ ան եկած է համեստ ընտանիքէ եւ իր դպրոցական տարիներուն կարգ մը կազմակերպութիւններէ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնէն եւ «Գալուստ Կիւլպէնկեան»





Հիմնարկէն կրթաթոշակներ ստացած է: Այդ իսկ պատճառով, իր բարեսիրական աշխատանքները կը նպատակադրեն աջակցել երիտասարդութեան կրթական եւ ընկերային զարգացման ծրագիրներու: Ան որոշած է երիտասարդութեան սատար հանդիսանալ եւ բարեխաւել անոր կեանքը:

Վերջին չորս տարիներուն, եղբոր նախաձեռնած բարեսիրական մեծագոյն ծրագիրը հոգեկան մեծ դոնէտներու կրթաթոշակները: 2019-ին Հայաստան այցելելով ան կը հիմնէ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի՝ COAF-ի կրթաթոշակի հիմնադրամը, 350 կրթաթոշակներ յատկացնելով Հայաստանի գիւղաբնակ երիտասարդներու բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակին՝ Երեւանի Ամերիկեան, Երեւանի պետական եւ Վանաձորի համալսարաններուն մէջ:

Յատկանշական է նաեւ Արցախի պատերազմին մասնակցած 40 զինուորներու կրթաթոշակներու բաշխումը: Ան ոչ միայն նիւթապէս, այլեւ բարոյապէս իր գործօն մասնակցութիւնը կ'ունենայ տարին 4-5 անգամ Հայաստան այցելելով եւ աշակերտներուն հետ անձնապէս հանդիպելով ու անոնց հայրական խրատներ տալով՝ աշակերտները միշտ տպաւորած են զինք իրենց իմաստութեամբ եւ բացառիկ տաղանդներով:

«Ետընկերներ» հիմնարկը իր գործունէութիւնը կը շարունակէ ծաւալել հայրենիքի մէջ: Հիմնարկը ներկայիս աշխատանք կը տանի հիմնելու ընտանեկան եւ մանուկներու յատուկ կեդրոններ կիւմրիի, Արմաւիրի եւ Սիւնիքի մէջ:

Ազգանուէր Ետընկերներ գոյգը իր յաջողութիւններուն բաժնեկից դարձուցած է հայ ազգը եւ հայրենիքը: Անոնք շարունակ աշխոյժ մասնակցութիւն բերած են Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան մարզախաղերուն եւ փառատօնին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանին, Հայ Օգնութեան Միութեան, Հայ-Ամերիկեան թանգարանին, Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց վարժարանին եւ այլն: Անոնց ներդրումը մեծ է ամերիկեան բարեսիրական բազմաթիւ նախաձեռնութիւններու օժանդակութեան մէջ, ինչպէս՝ Union Rescue Mission եւ այլն:

Ետընկերներ ամուսին համար Հ.Մ.Ը.Մ-ի նուիրական գործունէութիւնը քաջալերելի եւ յուսադրիչ է, յատկապէս ներկայ արդիականացած ժամանակին, երբ մեր նորահաս սերունդը հասակ կը նետէ դժուար պայմաններու մէջ, երբ ընկերային ցանցերու եւ առցանց խաղերու յարումը եւ մոլորեցընող վտանգներու շեղող հոսանքը զօրաւոր է: Սակայն Հ.Մ.Ը.Մ-ը փրկարար դեր կը կատարէ, մեր պատանիներն ու երիտասարդները համախմբելով մաքուր եւ առողջ մարզական եւ սկստական շարքերու մէջ, ուր անոնք կը սորվին հայրենասիրութիւն, ընկերասիրութիւն, կարգապահութիւն, մարզական ոգի եւ ձեռք կը բերեն կեանքի լայն փորձառութիւններ՝ գիտակցելով «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին:

Անոնք իրենց երախտագիտական ջերմ բարեմաղթութիւն-



ները կը յայտնեն Հ.Մ.Ը.Մ-ի կամաւոր մեծ բանակին, որուն շնորհիւ կ'իրագործուին Նաւասարդեան մարզախաղերը եւ բոլոր նախաձեռնութիւնները:

Տէր եւ տիկ. Ճէք եւ Զարիկ Ետընկերները, հաւատարմով Հ.Մ.Ը.Մ-ի պատմական եւ կենսական առաքելութեան, ինչպէս նաեւ հետապնդած նպատակներուն՝ պատուոյ նախադասութիւնը ստանձնելով, Նաւասարդեան 46-րդ մար-

զախաղերուն ջահը վառ պիտի պահեն:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ այս տարուան 46-րդ Նաւասարդեան մարզախաղերու «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ի տիտղոսը կը շնորհէ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Մանուէլ Մարսէլեանին, նկատի ունենալով տասնամեակներու վրայ երկարող անոր նուիրումը այս մեծ կազմակերպութեան:

Եղբ. Մանուէլ Մարսէլեան ծնած է Հալէպ, Սուրիա, ազգանուէր, ընտանեկան ջերմ յարկի մը տակ: Ան երրորդ գաւակն է իր ծնողքին, որոնք ծանօթացած եւ ամուսնացած են Հ.Մ.Ը.Մ-ի միջոցով: Եղբայրը ընտանիքին հետ գաղթած է Լիբանան եւ ապա՝ Թեհրան:

Եղբ. Մանուէլ միշտ յատուկ սէր ունեցած է մարզական կեանքին, յատկապէս Ֆութպոլի նկատմամբ: Եղբոր մարզական գործունէութիւնը սկսած է Քուշէշ-Մարիամեան հայկական վարժարանին մէջ, ապա շարունակուած է Թեհրանի միջազգային դպրոցին եւ Զարմահալ մշակութային կազմակերպութեան մէջ:

1979-ին երկրորդական դպրոցը աւարտելէ ետք, բարձրագոյն կրթութիւնը շարունակելու համար ան կը տեղափոխուի Միացեալ Նահանգներու Քալիֆորնիա նահանգի Սան Տիէկո քաղաքը՝ միանալու իր եղբայրներուն:

Եղբ. Մարսէլեան մաս կը կազմէ հայկական բազմաթիւ երիտասարդական կազմակերպութիւններու, ինչպէս՝ Սան Տիէկոյի «Արմէնզ» Ֆութպոլի խումբին: 1982-ին, առաջին անգամ ըլլալով, իրեւ մարզիկ ան կը մասնակցի Նաւասարդեան մարզախաղերուն, Լոս Անձելըսի մէջ:

1983-ին կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ-ի Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղը, որմէ ետք եղբոր կեանքը բոլորովին կը փոխուի եւ Հ.Մ.Ը.Մ-ը կը դառնայ իր էութեան մէկ մասնիկը:

Հ.Մ.Ը.Մ-ի յարկին տակ, ան կը հանդիպի իր կողակիցին՝ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղի գործունեայ անդամներէն քոյր Սիրան Պոստոյանին եւ 1998-ին միասին կը կազմեն Հ.Մ.Ը.Մ-ասէր ընտանեկան ջերմ բոյն մը: Կը բախտաւորուին երկուորեակ դուստրերով՝ Մեղրի եւ Ալիք, որոնք մինչեւ օրս աշխոյժ մասնակցութիւն կը բերեն Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան:



# ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ»Ը՝ ԵՂԲ. ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐՍԷԼԵԱՆ



Եղբայրը իր նուիրեալ գործունէութեան եւ պարտականութեան բարձր գիտակցութեան շնորհիւ ստանձնած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ. եղած է մարզիկ, մարզիչ, Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղի հիմնադիր եւ վարչական անդամ, Շրջանային Մարզական Խորհուրդի անդամ եւ ատենապետ, վեց երկամեակ ընտրուած է Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եւ ատենապետ, մէկ քառամեակ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ, ինչպէս նաեւ անդամ այլ յանձնախումբերու, ուր ձեռնհասօրէն կատարած է իրեն վստահուած պարտականութիւնները:



Եղբ. Մարսելեանի ներդրումը մեծ է ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին, այլ նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի համաշխարհային աշխատանքներու յաջողութեան մէջ:

Եղբայրը մեծ դեր ունեցած է եւ կը շարունակէ ունենալ Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղի մարզախաղերուն, շրջանի «Հրաշք» բաժանմունքին, Հայաստանի եւ այլ շրջաններու մէջ «Հրաշք» հիմնելու աշխատանքներուն մէջ: Եղբ. Մարսելեան ատենապետութիւնը ստանձնած է համա-Հ.Մ.Ը.Մ-ական վերջին երեք մարզախաղերուն՝ 2013-ին, 2017-ին եւ 2022-ին, որոնք յաջողութեամբ կազմակերպուած են մայր հայրենիքի մէջ:

Հարկ է յիշել, որ եղբ. Մարսելեանի դերը մեծ եղած է

Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի «Հայկ Յովսէփեան» բանակավայրի կառուցման աշխատանքներուն մէջ, որուն համար եղբայրը պարգևատրուած է Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի «Ոսկեայ Շուշանածաղիկ» շքանշանով:

Եղբ. Մարսելեան միշտ հպարտ է իր կողքին ունենալու նուիրեալ Հ.Մ.Ը.Մ-ական քոյրեր եւ եղբայրներ, որոնց հետ միասնաբար աշխատելով՝ շրջանի Հ.Մ.Ը.Մ-ը հասցուցած է նախանձեղի մակարդակի:

Եղբայրը իր երախտագիտութիւնը կը յայտնէ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, որմէ ան ժառանգած է տիպար Հ.Մ.Ը.Մ-ականի պարկեշտ նկարագիրը եւ վսեմ արժանիքները՝ իբրեւ ղեկավար, հաղորդակցող, ժողովական եւ այս բոլորէն աւելի դարձած է հայ եւ Հ.Մ.Ը.Մ-ական եղբայր:

Հ.Մ.Ը.Մ-ի մէջ ան ծանօթացած է հմուտ ղեկավարներու եւ անփոխարինելի ընկերներու, որոնք դժուար կը գտնուին այլ կազմակերպութիւններու մէջ:

Եղբ. Մանուէլ Մարսելեանի կեանքը սերտօրէն կապուած է Հ.Մ.Ը.Մ-ին եւ Հ.Մ.Ը.Մ-ը դարձած է եւ կը մնայ իր միակ եւ սրբազան ընտանիքը:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կը շնորհաւորէ եղբ. Մանուէլ Մարսելեանը եւ կը մաղթէ, որ իր բարի օրինակը եւ նուիրումը վարակիչ դառնան բոլորին ու յատկապէս մեր պատանիներուն եւ երիտասարդներուն:





# ՔԱՀԱՄ-Ի 37-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԵԶՐԱՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԲ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՄՆ

**Թղթակից  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ**

**Հ**Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան Մարզական Խորհուրդը, գեղեցիկ աւանդութեան մը համաձայն, ամէն տարի Նոյեմբերէն մինչեւ յաջորդ տարուան Մարտ ամիսը կը կազմակերպէ Քալիֆորնիոյ Հայ Աշա-

կերտական Մարզախաղերը (ՔԱՀԱՄ)՝ պատրաստութեամբ, Ֆուտբոլի (Ֆուտբոլ, սաքքըր), փինկ-փոնկի, վոլեյբոլի, թեթեւ ատլետիկայի եւ ճատրակի մարզաձեւերով:  
ՔԱՀԱՄ-ը իբրեւ գլխաւոր նպատակ կը հետապնդէ հայկական վարժարաններու աշակերտութեան մէջ արմատացնել մրցակցութեան ոգին: Միաժամանակ, այս մրցումներուն մասնակցող Հայ աշակերտութիւնը կը ծանօթանայ

Հ.Մ.Ը.Մ-ին եւ անոր առաքելութեան:

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ ԵՒ ՆԵՐԿԱՆՆԵՐԸ

Երկար ամիսներու մրցակցութեամբ շրջանը ոգեւորելէ ետք, Կիրակի, 7 Մայիսին, «Պըրմինկհեմ Հայ Սքուլ»-ի գլխաւոր մարզադաշտին վրայ, յատուկ հանդիսութեամբ եզրափակուեցան ՔԱՀԱՄ-ի 37-րդ մարզախաղերը՝ բազմաթիւ ծնողներու, աշակերտներու եւ համակիրներու ներկայութեամբ:

ՔԱՀԱՄ-ի մարզախաղերու փակման հանդիսութեամբ պաշտօնապէս բացումը կատարուեցաւ Նաւասարդեան 46-րդ մարզախաղերուն եւ հանրութեան ներկայացուցեցան մարզախաղերու պատուոյ նախադասութիւնը ստանձնած՝ հանրածանօթ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ տէր եւ տիկ. Ժէք եւ Զարիկ Եուրէճեանները եւ 2023-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ը՝ եղբ. Մանուէլ Մարաշեանը:

Օրուան հանդիսավարն էր Փասատի-նայի «Ազատամարտ» մասնաճիւղի միաւորի խմբապետուհի քոյր Ալիք Մար-





սելեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Թորգոմ Եպս. Տօնոյեանի ներկայացուցիչ Մովսէս Քհնյ. Շաննաքեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտ Գիլիճեան, Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահ եղբ. Վիգէն Աբէլեան, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Գօգօ Պալեան, Ազգային վարժարաններու խնամակալ մարմինի ներկայացուցիչ Արմինէ Ալեքսան Փափազեան, ինչպէս նաեւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ՔԱՀԱՄ-ի մասնակից վարժարաններու տնօրէններ, ուսուցիչ-ուսուցչուհիներ, բազմաթիւ ծնողներ, մարզասէր համակիրներ եւ Հ.Մ.Ը.Մ-ականներ:

**ԴՐՕՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ**

Հանդիսութիւնը սկիզբ առաւ դրօշակի արարողութեամբ. մարզադաշտ ներկայացաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը, որ իր ազգայնաշունչ եղանակներով մեծ ոգեւորութիւն ստեղծեց ներկաներուն մօտ: Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Շարլին Կէօզալեանսի գլխավորութեամբ, դրօշակի տպաւորիչ արարողութիւնը կատարեցին Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան շրջանի արի-արենոյճները, որոնք ներկայացուցին Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները եւս նուազեց Հ.Մ.Ը.Մ-ի նուագախումբը:

Ապա ներկաները ունկնդրեցին Փաստինայի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ դպրաց դասի երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Երուանդ Սրկ. Քէշիշեանի:

**ՅԱՆՈՒՆ ՏՆՕՐԷՆՆԵՐՈՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԽՕՍԲԸ**

Յանուն ՔԱՀԱՄ-ի մասնակցող վարժարաններու տնօրէններուն՝ խօսք առաւ Արի Կիրակոս Մինասեան Ազգ. վարժարանի տնօրէնուհի Անի Սարգիսեան, որ շնորհակալեց ՔԱՀԱՄ-ի 37-րդ մարզախաղերը եւ շնորհակալութիւն



յայտնեց ծնողներուն, որոնք իրենց գաւակները կը վստահին հայկական դըպրոցներուն եւ կազմակերպութիւններուն:

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻԶԻՆ ԽՕՍԲԸ**

Առաջնորդ Թորգոմ Եպս. Տօնոյեանի հայրական բարեմաղթանքներն ու օրհնութիւնները փոխանցեց Կլեմտէյի

Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Մովսէս Քհնյ. Շաննաքեան, որ շնորհակալեց ՔԱՀԱՄ-ի մասնակիցները եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻԶԻՆ ՊԱՏԳԱՄԸ**

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց Վարչութեան ներկայացու-





ցիչ քոյր Միւզի Օհանեան, որ բացատրելով ՔԱՀԱՄ-ի կազմակերպման նպատակը՝ ըսաւ. «37 տարիներ շարունակ, բոլորս հպարտանքը ապրեցանք եւ պիտի շարունակենք ապրիլ, ի տես շրջանի հայ աշակերտութեան արձանագրած մարզական յաղթանակներուն: Յաղթանակներ, որոնք ո՞վ գիտէ ի՞նչ հանձարներու ծնունդ պիտի տան եւ պիտի

ծաղկեցնեն հայրենակարօտ մեր սրտերը: Ամէն տարի, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուող Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերը, բոլորիս ծանօթ՝ ՔԱՀԱՄ-ը, նպատակ ունին շրջանի հայ աշակերտութիւնը համախմբելու, անոնց համար մարզական մաքուր մթնոլորտ

մը ստեղծելու եւ ինչո՞ւ է, նաեւ անոնց ծանօթացնելու Հ.Մ.Ը.Մ-ը, որուն դռները միշտ բաց են բոլորին առջեւ»: Քոյր Օհանեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց վարժարաններու մարզիչներուն, իրաւարարներուն եւ յատկապէս ծնողներուն, որոնց տրամադրած անասան ժամանակին եւ քաջալերանքին շնորհիւ, իրականացան աշակերտական այս մարզախաղերը: Նաեւ, ան բարձր գնահատեց մեր սերունդները հայօրէն դաստիարակող եւ հայութիւնը պահպանող կրթական բոլոր օժանդակները, անոնց տնօրէններն ու ուսուցչական կազմերը եւ վստահեցուց, որ Հ.Մ.Ը.Մ-ը անոնց թիկունքին կը մնայ:

Այնուհետեւ, քոյր Միւզի Օհանեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 46-րդ մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնող ազգանուէր զոյգը՝ տէր եւ տիկ. Ճէք եւ Զարիկ Եուրէճեանները, եւ հրաւիրեց Ճէք Եուրէճեանը կատարելու պաշտօնական բացումը: Այսպէս, շեփորախումբի թրմբուկներու ոգեւորիչ հարուածներուն ներքեւ վեր բարձրացաւ Նաւասարդեանի խորհրդանիշը, իսկ Ճէք Եուրէճեան բացուած յայտարարեց Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 46-րդ մարզախաղերը՝ խլելով ներկաներուն երկարաշունչ ծափոցը: Ան նաեւ ուրախութեամբ յայտարարեց, որ Նաւասարդեան 46-րդ մարզախաղերու «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» տիտղոսին արժանացած է վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Մանուէլ Մարսէլեան, նկատի ունենալով տասնամեակներու վրայ երկարող անոր նուիրումը՝ այս մեծ կազմակերպութեան (պատուոյ Գախազահին եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»-ին առանձնաբար ծագորանալ էջ 51 եւ 52):

**ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՇՔԵՐԹԸ**

Հանդիսութեան վերջին բաժինով տեղի ունեցաւ անհամբերութեամբ սպասուած աշակերտական շքերթը, որ անկեղծ արտայայտութիւնն էր ամիսներու վրայ երկարած անոնց մարզական առողջ մրցակցութեան:

Գեղեցիկ երեսոյթ էր տեսնել վարժարաններու տնօրէններու տողանցքը՝ իրենց աշակերտներուն հետ, որոնք հպարտանքով ստանձնեցին ֆուլթայլի,





վոլբալոլի, փինկ-փոնկի եւ թեթեւ աթլետի մարզաճիւղերուն մէջ իրենց նուաճած յաղթանակի բաժակները:

**ՄԱՄՆԱԿՅԱԾ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ**

Հ.Մ.Ը.Մ-ի ՔԱՀԱՄ-ի այս տարուան մարզախաղերը յաջողութեամբ իրենց աւարտին հասան մասնակցութեամբ՝ Ազգ. Ռոզ եւ Ալէք Փիլիպոս, Հայ Քոյրերու, Հ.Բ.Ը.Մ-ի Մարի Մանուկեան-Տէմիրճեան, Սրբոց Նահատակաց Ազգ. Ֆերահեան եւ Մարի Գապայեան, Հայ Աւետարանական Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան, Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան, Ազգ. Վահան եւ Անոյշ Շամլեան, Սահակ Մեսրոպ, Ազգ. Արի Կիրակոս Մինասեան եւ Ազգ. Մեսրոպեան վարժարաններուն:

Նշեալ վարժարանները մասնակցե-

ցան պասքեթպոլի 113, Փուլպոլի 46 եւ վոլբալոլի 34 խումբերով: Աթլետիզմին մասնակցեցան 420 մարզիկ աշակերտներ, իսկ փինկ-փոնկին՝ 37 աշակերտներ:

Վերջնական արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.-

**ՊԱՔԵԹՊՈԼ.-** առաջին՝ Շամլեան, երկրորդ՝ Ֆերահեան-Գապայեան, երրորդ՝ Ալէք Փիլիպոս:

**ՖՈՒԹՊՈԼ.-** առաջին՝ Ֆերահեան-Գապայեան, երկրորդ՝ Շամլեան, երրորդ՝ Ալէք Փիլիպոս:

**ՎՈԼԵՊՈԼ.-** առաջին՝ Ալէք Փիլիպոս, երկրորդ՝ Շամլեան, երրորդ՝ Ֆերահեան-Գապայեան:

**ԱԹԼԵԹԻԶՄ.-** առաջին՝ Ֆերահեան-Գապայեան, երկրորդ՝ Շամլեան, երրորդ՝ Մանուկեան-Տէմիրճեան:

**ՓԻՆԿ-ՓՈՆԿ.-** առաջին՝ Շամլեան,

երկրորդ՝ Ալէք Փիլիպոս, երրորդ՝ Ֆերահեան-Գապայեան:

«ԴՊՐՈՅԱԿԱՆ ՈԳԻԻ ԲԱԺԱԿ»ին (Spirit Trophy) արժանացաւ՝ Ալէք Փիլիպոս:

«ՄԱՐԶԱԿԱՆ ՈԳԻԻ ԲԱԺԱԿ»ին (Sportsmanship Trophy) արժանացաւ՝ Ֆերահեան-Գապայեան:

«ՆՈՒԱՃՄԱՆ ԲԱԺԱԿ»ին (Achievement Trophy) արժանացաւ՝ Շամլեան:







# ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՅ ՄԱՅԻՍ 28-Ի ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԹԻՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄՆԱԼՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՄԸ

## Թղթակից ՊՈՒՐԵ ՅԱՍՈՒՏ

Նովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեանի եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Կիրակի, 28 Մայիս 2023-ին, կէսօրէ ետք ժամը 5-ին, Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան 105-ամեակին նուիրուած Մայիսեան փառատօն:

Մայիսեան փառատօնը ընթացք առաւ Լիբանանի, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշներուն ծածանումով՝ Հ.Մ.Ը.Մ.ի ղեփորախումբին կողմէ հնչած Լիբանանի, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներով:

### ԲԱՑՄԱՆ ԽՕՍԲԸ

Փառատօնին բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենադպիր քոյր Սոնա Պողոսեան: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին՝ նշելով, թէ 28 Մայիսին

կերտուած անկախութեամբ Մայիսը դարձաւ յաղթանակի ամիս, տօն հայտնութեան համար, որ գիտէ ծառայել միայն հաւաքական շահերուն եւ իր հայրենիքին, կը գործէ ի խնդիր Հայաստանի պետականութեան հզօրացման՝ միշտ







ձգտելով ազատ, անկախ ու միացեալ Հայաստանին, որ միակ հաւաքավայրը պիտի ըլլայ ամբողջ հայութեան:

Քոյր Պօղոսեան նշեց, որ 105 տարիներ առաջ ծնունդ առած Հ.Մ.Լ.Մ-ը իր գոյութեան ամբողջ ընթացքին, աշխարհի չորս ծագերուն եղաւ հայութեան ազգային ինքնութիւն փոխանցող մեծ ամբողջ, օտար ափերուն հայկական կեանքի ծառայութեան ու վերակենդանացման ի ինդիր գործող կառուցը: «105 տարիներ շարունակ, Մայիս 28-ի ոգիով, Հ.Մ.Լ.Մ-ը եղաւ այն ազգային դրպրոցը, որ բռնազրաւուած մեր հայրենիքին ու Արցախին բուրմունքը բերաւ, հանդիսացաւ հայկական բանակը՝ իր Մայիսեան փառատօներով, տղանցքներով ու շքերթներով», ըսաւ ան՝ շեշտելով, որ Մայիս 28-ը առիթ պէտք է ըլլայ հպարտանալու Հ.Մ.Լ.Մ-ով, անոր արձանագրած յաջողութիւններով եւ խորիստ քայլերով առաջնորդուելու դէպի ապագայ:



Քոյր Սոնա Պօղոսեան առիթը յարմար նկատեց ո՛չ միայն միասնաբար գնահատելու 105-ամեայ Մայիսեան յաղթանակի ոգին, այլ նաեւ սնանելու անոր կենսունակութեամբ եւ հայ ազգային ու գաղափարական կեանքի դրօշը փոխանցելու նոր սերունդին, որուն ներկայացուցիչներուն ուղղելով իր խօսքը ան ըսաւ. «Քայեցէ՛ք վճռական ու հաստատաբայլ, քայեցէ՛ք հայութիւնը ունենալով ձեր աչքին առջեւ եւ

հոգիներուն խորը, ձեր երթը ըլլայ յաղթական, մինչեւ հայ ժողովուրդի ամբողջական յաղթանակը, ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի կերտումը»:

**ԼԵՎԱՄ-Ի ՎԱՀԱՆԻՆ  
ՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՏՈՂԱՆՑՔԸ**

Ապա, Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբայր Հայկ Թապազեանի, Շրջանային Վար-





չուլթեան ԼԵՎԱՄ-ի եւ աթլէթի ներկայացուցիչ քոյր Մարիա Գէորգեանի եւ ԼԵՎԱՄ-ի յանձնախումբի ատենապետ քոյր Դալար Պէպէճեանի ձեռամբ ԼԵՎԱՄ-ի մրցումներուն մասնակցող աշակերտներէն «Լաւագոյն մարզիկ»ի եւ «Լաւագոյն մարզիկուհի»ի բաժակներ յանձնուեցան Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանէն Աւետիս Օտապաշեանին եւ Ռիթա Մումջօղլեանին, իսկ «Լաւագոյն արդիւնքներով դպրոց»ի ԼԵՎԱՄ-ի վահանը ստացաւ Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանը:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Այնճարի մասնաճիւղի գոյգ շեփորախումբերուն հնչեցուցած երաժշտութեան կշռոյթներով խրոխտ, հպարտ եւ հաստատ քայլերով, պահանջատէր ու ինքնավստահ հայու դոփիւնով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը, Շրջանային խմբապետութիւնը, վեթերան խմբապետները, Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան անդամները, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական եւ մասնաճիւղերու մարզական խումբերը, որոնք իրենց վճռականութեամբ հաստատեցին, որ իրենք տէրն են Մալիսեան աւանդին ու յողթանակին, հպարտ են 105 տարիներ շարունակ հայապահպանման եւ հայեցի դիմազիծով սերունդներու կերտման սրբազան առաքելութեան լծուած Հ.Մ.Ը.Մ-ով եւ շարունակողն են հայրենիքի ու հայութեան համար իրենց անձը գոհաբերած հերոսներու երթին:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏՆԵԱՊԵՏԻՆ ԽՕՍԲԸ**

Փառատօնին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց Վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Թապազեան: Ան ըսաւ, որ համախմբուած ենք նշելու Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 105-ամեակը: Շեշտը դնելով 105 տարիներու Հ.Մ.Ը.Մ-ի երթին վրայ՝ եղբ. Թապազեան նշեց, որ սարսափի ու պատերազմի արհաւիրքներուն մէջ ծնունդ առած այս միութիւնը իր գոյութեան ընթացքին հայ մանուկին, պատանիին ու երիտասարդին սորվեցուց հայրենիքէն հեռու ըլլալով հանդերձ հայրենիք սիրել, հայօրէն ապրիլ եւ գոյատեւել: 105 տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ-ը ֆիզիքական, իմացական եւ բարոյական դաստիարակութեամբ բարձր պահեց Եռագոյնը, տէր կանգնեցաւ հայապահպանման գործընթացին,

իր 111-է աւելի մասնաճիւղերով ծառայութեան դաշտը ընդարձակեց՝ Լիբանանէն մինչեւ Աւստրալիա, Յունաստանէն մինչեւ Գանատա եւ Մ. Նահանգներ:

«1918-էն ի վեր «Կամաւոր բանակ»ի ծննդավայր Հ.Մ.Ը.Մ-ը եղաւ գեղեցկագոյն մանկապարտէզ ու լաւագոյն համալսարան:

«Հազարաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ հաւատարիմ մնալով «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, վկայուեցան այս մարմնակրթական կառոյցէն եւ ջահը փոխանցեցին սերունդէ սերունդ:

«Երէկուան մարզիկներն ու սկաուտները դարձան պատասխանատուներ եւ Հ.Մ.Ը.Մ-էն ստացած իրենց դաստիարակութիւնը ծառայեցուցին նոր սերունդներ պատրաստելու աշխատանքին: Սորվեցան, ապա սորվեցուցին», շեշտեց ան:







Լուսարձակի տակ առնելով Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքին գործունէութիւնը՝ եղբ. Թապազեան ըսաւ. «Լիբանանի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ-ը իր 10 մասնաճիւղերով կը շարունակէ գործել, հակառակ բազմաթիւ դժուարութիւններու: ...Տարիներու վրայ երկարող քաղաքական վերիվայրումները, քորոնան, Պէյրութի նաւահանգիստի պայթումն ու տնտեսական տագնապները ապրեցանք ու կ'ապրինք, անշուշտ դժուարութիւններ ունեցանք բոլոր լիբանանցիներուն պէս, սակայն իրերայաջորդ պատասխանատուներու թափած ճիւղերով, Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը չդադրեցաւ ու բարձր մնաց միութեան դրօշը:

«Մեր կարողութիւններուն ներած չափերով մասնակցութիւն բերինք Լիբանանի մարզական կեանքի բոլոր մարզերուն, մասնաճիւղերը ունեցան սկստական բեղուն գործունէութիւն, եւ ուրախ ենք յայտարարելու, որ մասնաճիւղերու Սկստական Խորհուրդները արդէն իսկ ճշգրտ են յառաջիկայ ամրան իրենց բանակումներուն թուականները»:

Եղբ. Թապազեան դիտել տուաւ, որ տողանցքին մասնակցող սկստներուն, մարզիկներուն, աշակերտներուն, պատանիներուն եւ երիտասարդներուն բոցավառ աչքերն ու խանդավառ ոգին կը հաստատեն, որ անոնք ամուր պիտի պահեն իրենց հայեցի դիմագիծը, պիտի գօտեպնդուին հայրենի, որպէսզի ապագային դառնան օրինակելի ու տիպար հայեր: Ան առիթը յարմար նկատեց խոնարհելու Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան գաղափարը յղացած հիմնադիրներու յիշատակին առջեւ, նաեւ անոնց, որոնք ծառայեցին ու կը շարունակեն ծառայել այս միութեան գոյատեւման եւ բարգաւաճման:

Իր խօսքին եզրափակիչ բաժինով

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետը հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը մարզական ակումբ է, տարբեր մարզաձեւեր կիրարկող միութիւն է, այլ սփիւռքահայութեան մարմնակրթութեան նախարարութիւնն է, որ հայ պատանին ու երիտասարդը կը գինէ մարզական ոգիով՝ ըլլալու արի ու շարքաշ տիպար քաղաքացիներ, գործելու բարիք մը ամէն օր: «Հ.Մ.Ը.Մ-ը այն կառույցն է, որ կը հնչեցնէ «հսկայ նուիրման տորմիլ հրաթեւ, կամաւոր բանակ» քայլերով», ըսաւ եղբ. Թապազեան՝ ողջունելով այս միութեան վաստակին իրենց ներդրումը ունեցածները, բոլոր կամաւորները՝ հաստատելով, որ «Բարձրացիր-բարձրացուր»ին հաւատքով, կամքով ու նուիրումով Հ.Մ.Ը.Մ-ի երթը պիտի շարունակուի:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ**

Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, որ յայտնեց, թէ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» կարգախօսով Հ.Մ.Ը.Մ-ը հինգ տարիէ թեւակոխած է իր երկրորդ հարիւրամեակի երթը՝ իւրաքանչիւր Մայիս 28-ին նշելով հայոց նորագոյն պատմութեան մեծագոյն յաղթանակը, որ պայծառ փարոսը կը հանդիսանայ մեր պատմութեան յաջորդող յաղթանակներուն եւ բարոյական կողմնացոյցը հայ ժողովուրդի ապագայի երթին: Եղբ. Նաճարեան ըսաւ, որ Հ.Մ.-















Ը.Մ.ը՝ ըլլալով Մայիս 28-ի արժէքներուն դրօշակակիրը եւ Եռագոյնին պաշտպանը, նման փառատօներ կը կազմակերպէ ո՛չ թէ նշելու անցեալի յիշատակ մը, այլ վերահաստատելու Մայիս 28-ի պատգամը եւ մեր ժողովուրդին համար ըլլալու վերածնունդի, յոյսի եւ ուժի աղբիւր մը՝ դէպի յաղթական եւ պատուաբեր ապագայ, նման իր որդեգրած կարգախօսին:

«Շատերու համար ո՛չ միայն անցեալին, այլեւ ներկայիս, Մայիս 28 տօնելը անհասկնալի եւ խորթ կրնայ թուիլ. շատեր ազգային արժէքներու եւ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի տեսլականին կառչիլը անհեթեթ ու անիմաստ կը գտնեն, ինչպէս որ էր պարագան Եռագոյն դրօշակի նկատմամբ, մինչեւ Հայաստանի վերանկախանալը, երբ 70 տարի Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ Եռագոյն դրօշին եւ Մայիս 28-ին պահպանը եւ նման փառատօներով տեւաբար բոլորին յիշեցուց մեր նախորդներուն կտակը, պատգամը եւ յարատեւ պայքարի կամքը:

«Առանց ազգային միացեալ գիտակցութեան եւ ամբողջական Հայաստանի տեսլականին, որ կը մարմնաւորուի Մայիս 28-ով, կարելի չէ հզօր ու ամբողջական Հայաստան ունենալ, եւ կարելի չէ հայրենիքի տեսլական ունենալ, առանց վերականգնող Արցախ ունենալու», հաստատեց եղբ. Նաճարեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը դիտել տուաւ, որ այս փառատօնը կը կատարուի համաշխարհային քաղաքական, ընկերային-տնտեսական բարդ պայմաններու մէջ,

եւ մանաւանդ Միջին Արեւելքի մէջ ստեղծուած անկայունութեամբ՝ սկսելով Լիբանանի շրջանէն, որ կը կազմէ միութեան սիրտը եւ 100-ամեակի ժառանգը: ... Մայիսեան այս տողանցքը վկայ,- սակայն աւելցուց ան,- հակառակ երկրի չափազանց ծանր պայմաններուն, ինչքան գործ կը կատարուի, ինչքան նուիրում եւ զոհողութիւն կայ այստեղ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը կանգուն պահելու, մեր ժողովուրդին ազգային խանդավառութիւն եւ հպարտութիւն տալու համար:

«Այս օրերուն մանաւանդ, երբ մարզական միութիւնները եւ պատանի-երիտասարդ սերունդի դաստիարակութեան աշխատանքով զբաղող կազմակերպութիւնները վերածուած են տնտեսական եւ քաղաքական նպատակ հետապնդող հաստատութիւններու, Հ.Մ.Ը.Մ. հիմնուելով իր կամաւոր բանակին վրայ կը շարունակէ պահել իր 105 տա-

րուան ժառանգութիւնը, որ ներկայ դարուս հրաշքի համագոր է, ոչ միայն պահելով մարզական եւ սկաուտական աշխատանքները, այլ նաեւ յառաջդիմելով թիւով եւ որակով», նշեց ան՝ վստահեցնելով, որ այսօր այլ միութիւնը կը շարունակէ հիմնադիրներուն կամաւոր սկզբունքին կառչածութիւնը՝ պատրաստելու տիպար ու ազգային գիտակցութեան տէր հայեր, հայրենիքին ու հայութեան նուիրեալ զինուորներ:

«Հ.Մ.Ը.Մ. 105 տարուան իր հրաշքը գլխաւորապէս կը պարտի մեր ժողովուրդին, որ վստահած է այս միութեան՝ հաւատարմով, որ ան եղած է ու կը մնայ մեր մատղաշ սերունդի առողջ միջավայրը, սերունդներ կերտելու հայրենիքէն հեռու բայց հայրենիքի շունչով, մարզական առողջ միջավայրի մէջ, սկաուտական ազնիւ սկզբունքներով, իբրեւ համագաղութային եւ համահայկական մէկ մեծ ընտանիքի անդամներ:







«Այս հաստատ համոզումներով կ'ողջունենք Մայիսեան այս տողանցքը՝ խոստանալով միշտ բարձր պահել այն դրօշը, որ աւանդ ձգուեցաւ մեզի. կը խոստանանք նաեւ, որ մեր ժողովուրդի ծոցէն ծնած այս միութիւնը պիտի շարունակէ տալ ախոյեաններ, ղեկավարներ, կամաւոր բանակ եւ մանաւանդ՝ երբ տայ զանգը, ահազանգը, առաջինը ըլլալու պատնէշին վրայ», իր խօսքը եզրափակեց եղբ. Նաճարեան:

**ՅԱՐՈՒԹ ՓԱՄՊՈՒՔՃԵԱՆԻ  
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ**

Օրուան անակնկալը եղաւ հիւրաբար Լիբանան գտնուող, սիրուած երգիչ Յարութ Փամպուքճեանը, որ փունջ մը ժողովրդային եւ ազգային-հայրենասիրական երգերով մեծ խանդավառութիւն ստեղծեց թէ՛ դաշտին մէջ եւ թէ՛ ժողովուրդին մօտ:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՊԱՏԳԱՄԸ**

Փառատօսին փակման խօսքը արտասանեց եւ հայրական իր պատգամը ուղղեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան: Ան յայտնեց, որ «Այսօր, ազատ եւ անկախ Հայաստանի տեսլականով մեր կեանքը շարունակելու ուխտով, խունկի բուրմունքով օժեցինք մեր ազգի ազատութեան եւ անկախութեան խորհրդանիշ Եռագոյն դրօշը եւ մաղթեցինք, որ մեր ազգին ազատութեան բազինին զոհուած հերոսները իրենց օրինակին հետեւող շառաւիղներ ունենան նաեւ այսօրուան մեր կեանքին մէջ, որպէսզի մեր ազգը աճի եւ իւր քաջ

որդւոց բազուկով ու սուրբ արեամբ իր վեհութեան բարձրակէտին հասնի»:

Շահէ Արք. Փանոսեան լուսարձակի տակ առաւ այն, որ այս տարի Մայիսեան անկախութիւնը կը նշենք այսօրուան անորոշութիւններուն ու վաղուան անխուսափելի ողբերգութիւններուն մասին մտածելով:

«Դժբախտաբար, միայն ակնթարթ մը ռեբելորուեցանք ազատ Արցախի յաղթանակով: Իսկ այսօր, ոչ միայն խոռված հոգիով կը հետեւինք հայութեան կեանքին մէջ պարզուող յուսալքումի ու անձնատուութեան տեսարաններուն, այլեւ սարսափով կը դիտենք, թէ ինչպէս Արցախի վերջին մնացորդացն ալ կը յանձնուի թշնամիին:

«Այո՛, անասելի ողբերգութիւն մը կ'ապրինք: Արդարեւ, փոխանակ աշխարհասփիւռ մեր ժողովուրդի զաւակները համախմբելով հայրենիքի աներեր դիրքերը ամրացնելու, մեր հայրենի իշխանութիւնները, քաղաքական տիրուբուն մէջ խրած, յուսահատ վախճանի կ'առաջնորդեն Արցախը, մեր ժողովուրդին պատիւը կը դնեն հայրենի հողը պղծող թշնամիի ոտքերուն տակ եւ այդպիսով, անզուսպ աղէտներու թատերաբեմ կը դարձնեն հայութեան կեանքը:

«Կը փորձեն մեզ զրկել մեր անմահ հերոսներուն յիշատակը ռեկոնստրուէրու գիտակցութեան, հայրենական ժառանգութիւնը պահպանելու եւ շէնցնելու պարկեշտ ձգտումէն, դարաւոր պայքարով կերտուած ազատութիւնն ու անկախութիւնը պահպանելու իրաւունքէն:

«Պէտք է առիթ տանք, որ ներկայ մշուշոտ պայմանները խափանեն մեր

ժողովուրդին պայծառատեսութիւնը: Պէտք է փուլ գայ հայրենիքի պաշտպանութեան պարիսպը եւ մեր նահատակներուն կտակը պէտք է անարգուի: Պէտք է սթափինք, որպէսզի մեր ունեցած երազներն ու տեսիլքները չկրնն ու չցնդին:

«Մենք ոչ միայն կ'ուզենք առնչուած ըլլալ մեր հայրենիքին, այլեւ մասնակից դառնալ Հայաստանի կեանքին: Մեր ժողովուրդը չի վախնար ռազմադաշտէն եւ ո՛չ ալ արեան հեղեղներէն, այլ պարզապէս կը սոսկայ հայրենիքը վաճառքի հանող դաւադիր ու ամօթալի արարքներէն:

«Այսօր, Արցախը՝ իր պատեանին մէջ կծկուած, կը շարունակէ դիմադրել մինչեւ վերջին շունչ: Ան կրնայ տակաւին տոկայ, ապրիլ եւ նաեւ կրկին ծաղկիլ ու ընդարձակուիլ, եթէ անգոր աչքերով հեռուէն դիտելու փոխարէն, հայութիւնը բռունցք դառնայ եւ ապրի իր հօրութեան տեսիլքը:

«Փորձութիւններով լեցուն այս ժամանակները կը պահանջեն, որ ամէն հայ իր հայրենիքին հանդէպ իր դիրքը ճշդէ: Ժամանակն է, որ վեր նայինք: Մեր ազգի երազներուն փարած մնալու ու մեր ցեղին պատիւն ու իրաւունքները պաշտպանելու յանձնառութեամբ, նայինք մեր նախնիներու օրինակին, որպէսզի նոր արշալոյս ծագի հայութեան կեանքին մէջ եւ հայ ժողովուրդը իր քայլերը ուղղէ դէպի նոր բարձունքներ ու հասնի իր անկատար տենչերուն ու երազներուն», եզրափակեց Առաջնորդ Սրբազանը:

Հուսկ, փառատօսը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





# ՎԱՍՏԱԿԱԲՈՐ ԵՒ ՆՈՒԻՐԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ «ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԲԱՏՐՈՒՄ

## Թղթակից ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

**Հ.**Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Երեքշաբթի, 13 Յունիս 2023-ի երեկոյեան ժամը 7.30-ին, «Ազդակ»ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ վաստակաւոր եւ նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու պարգեւատրում, ներկայութեամբ Հ.Յ.Դ.Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի եւ Կեդրոնական Վարչութեան դիւանի անդամներու, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ Հայկական Երեսփոխանական Պրօքի ներկայացուցիչ՝ Երեսփոխան Յակոբ Բագրատունիի, նախկին նախարար քոյր Վարդինէ Օհանեան-Գէորգեանի, Այնճարի քաղաքապետ Վարդգէս Խօջեանի, Պուրճ

Համուտի փոխ քաղաքապետ Մարտիկ Արսլանեանի, Շրջանային Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու ու հիւրերու:

Զեռնարկը սկսաւ Լիբանանի, Հայաստանի եւ Արցախի քայլերգներու ունկնդրութեամբ, ապա բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ պիր քոյր Սոնա Պօղոսեան: Ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը եղակի է իր ծնունդով, իր առաքելութեամբ եւ աշխատանքով: Արդարեւ, ան լոկ մարզական կամ սկաուտական միութիւն մը չէ, այլ՝ մարդակերտման եւ հայակերտման նուիրուած գաղափարական շարժում մըն է: «Այս բարոյական գիտաբանութիւնը, գործունէութեան ու նուիրումի լայն եւ գեղեցիկ դաշտ մը ունի իր առջեւ», ըսաւ քոյրը՝ յայտնելով, որ ձեռնարկը կազմակերպուած է երախտագիտութիւն եւ զնահատանք յայտնելու անոնց, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մէջ իրենց անհասանելի աշխատանքով ու նուիրումով տուին իրենց կարելին՝ քաջ գիտնալով իրենց ստանձնած պարտականութեան գիտակցութիւնը:

## ՔՈՅՐ ՎԱՐԳԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ-ԳԵՈՐԳԵԱՆ



Քոյր Վարդինէ Օհանեան-Գէորգեան կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի 105-ամեայ պատմութեան առաջին եւ ցարդ միակ քոյրը, որ արժանացած է երկրի մը երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան պաշտօնին: Քոյր Վարդինէ Օհանեան-Գէորգեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղին: Նախարարութեան իր երկամեայ շրջանին (2020-2021) քոյր ճիգ չէ խնայած օժանդակելու Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր ճամբով լիբանանահայութեան ընդհանրապէս եւ երիտասարդութեան յատկապէս:

Այս առիթով խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Թապազեան: Եղբայրը լուսարձակի տակ առաւ 105 տարիներ առաջ խումբ մը նուիրեալ հայորդիներու կողմէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադրութիւնը՝ հաստատելով, որ անոնց սկսած աշխատանքը նոյն թափով եւ ոգիով շարունակուեցաւ աշխարհի չորս կողմը: Եղբ. Թապազեան դիտել տուաւ, որ



Հայ պատանիին եւ պարմանուհիին նկարագիրի կերտման եւ ազգային դաստիարակութեան ջամբումին մէջ մեծ դեր կատարած է եւ կը կատարէ Հ.Մ.Ը.Մ.ը, մասնաճիւղի սկաուտական շարժումի դաստիարակութեամբ, աւելցնելով, որ ան մասնաճիւղաբար կը կեդրոնանայ ազգասիրութեան, հայրենասիրութեան, չարճաշուտեան եւ արիւնքեան յատկանիշներուն վրայ:



**ՃԱՆՉՆԱՆՔ ՊԱՐԳԵԻԱՏՐԵԱՆԵՐԸ**


**ԵՂՔ. ԳԱԼՈՒՍ ԳՈՉՈՒՆԵԱՆ**

Եղբ. Գալուստ Գոչունեան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ ունեցած է աւելի քան 60 տարուան ծառայութիւն: Ան մաս կազմած է միութեան սկաուտական շարքերուն եւ եղած է Շրջանային Սկաուտ. Խորհուրդի մբերանոցի պատասխանատու: Աշխատած է բարեխղճութեամբ եւ մեծ նուիրումով: Իր ներդրումը եւ ազնիւ ծառայութիւնը ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի ամառնային բանակումներուն:



Եղբ. Գալուստ, համեստ ու խոնարհ, նպաստած է Հ.Մ.Ը.Մ.ի բազմաթիւ ծրագիրներու եւ ձեռնարկներու իրականացման: Ան գործած է միջազգային սկաուտութեան կարգախօսով՝ «Միշտ պատրաստ» եւ սիրով ընդառաջած է ամէն տեսակ աշխատանքի հրաւերի: Եղած է «սեւ աշխատանք»ի մարդ, առանց երեւելու: Գործած է քուլիսներու ետին, լուռ ու մունջ, առանց աղմուկի եւ դժգոհութեան:

**ԵՂՔ. ՊԵՏԻԿ ԼՈՃԻԿԵԱՆ**



Եղբ. Պետիկ Լոճիկեանի միութեան սկաուտական ծառայութիւնը կ'երկարի 60 տարուան վրայ: Ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի սկաուտական շարքերուն եւ հասած է երեք խմբապետի պաշտօնին:

Իբրեւ պատրաստակաւ, եղբ. Պետիկ Լոճիկեան մաս կազմած է Պէյրութի «Կամք» եւ «Շանք» խումբերուն: Շրջան մը եղած է նաեւ «Կամք»ի օգնական մարզիչ:

Երկար տարիներ ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի անդամ, վարչական անդամ եւ ատենապետ: Քառամեակ մը մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի վարչական կազմին:

Եղբ. Պետիկ Լոճիկեան քանի մը շրջան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, իբրեւ պատրաստակաւ, հեծելարշաւի եւ թրէաթլոնի յանձնախումբերու մօտ ներկայացուցիչ:

Շրջան մը, յատուկ դասաւորումով, ան ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.ի Պաուշիէի մասնաճիւղին ատենապետութիւնը:

Եղբ. Պետիկ Լոճիկեան Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացուցած է Լիբանանի պատրաստակաւ ֆետերասիոնին մօտ:






**ՃԱՆՉՆԱՆՔ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱՆԵՐԸ**

Եղած է երկրորդ փոխ առենապետ, աղջկանց ազգային խումբի պատասխանատու եւ 18 տարիքէն վար տղոց պատասխանատու: Ան մաս կազմած է նաեւ Լիբանանի թրէաթրոնի ֆետերասիոնին, իբրեւ գանձապահ:

Չորս շրջանէ ի վեր, եղբ. Պետիկ Լոնիկեան մաս կը կազմէ Միշէլ Մըր մարզական համալիրի վարչական կազմին:

**ՔՈՅՐ ՄԱՐՕ ԹԱԶԵԱՆ**

Փոքր հասակէն քոյր Մարօ Թազեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի սկաուտական շարքերուն, հասնելով մինչեւ Աքելլայի աստիճան: Եղած է մասնաճիւղի պատրաստողի աղջկանց խումբի անդամ: Աւելի ուշ, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղին: Եղած է Սկաուտ. Խորհուրդի անդամ՝ առենապետի պաշտօնով: Եղած է մասնաճիւղի վարչական եւ վարած է առենադպրութեան պաշտօն:



Քոյր Մարօ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին եւ ապա, երկու շրջան, Շրջանային Վարչութեան, վարելով առենադպրութեան պաշտօն: Ան մաս կազմած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան միութեան 100-ամեակի քարոզչական յանձնախումբին:

Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական 7-րդ ժողովին (Փարիզ, 2009) եւ միութեան 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին (Ծաղկածոր, 2011):

**ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ԼԱԳԻՍԵԱՆ**

Եղբ. Յարութ Լագիսեան ծնած է Այնճար, 1961-ին: Հինգ տարեկանին, իբրեւ գայլիկ, անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ին: Ապա, անցած է սկաուտական շարքեր: Մաս կազմած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի ֆուբպոլի խումբին:

10 տարի եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի վարչական, վարելով նաեւ առենապետի պաշտօն:

Մասնակցած է աւելի քան 10 Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովին, Հայաստան, 2019:



Շարունակելով, եղբայրը նչեց, որ միութեան «Բարձրագիւր-բարձրացուր» նշանաբանը կը պահանջէ բարձրանալ միշտ աննահանջ, յարատեւ ճիգերով եւ անշահախնդիր զոհողութեամբ նուաճել բարձունքներ՝ առանց ընկրկումի, անխախտ կամքով եւ անսասան հաւատքով: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.-ը հարթեց իր ճամբուն վրայ ցցուած խոչընդոտները, իր քայլերը ուղղեց դէպի լաւն ու բարին՝ յոյս եւ ինքնավստահութիւն ներշնչելով կեանքին իմաստը նոր հասկնալ փորձող եւ խարխափումի մէջ եղող սերունդին:

«Այսօր Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան համար երախտագիտութեան օր մըն է, որովհետեւ ի պատիւ իր անցեալի եւ ներկայի ղեկավարներուն, սկաուտական եւ մարզական շարքերուն եւ մանաւանդ գաղութի գորակցութեան, քաջալերանքին եւ գործակցութեան, ան կարողացաւ գոյատեւել՝ հակառակ իր դէմ ցցուած բոլոր տեսակի դժուարութիւններուն եւ փորձութիւններուն:

«Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գործէ «Առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ» սկզբունքով, մեր ազգային ժառանգութիւնները նորահաս սերունդներուն փոխանցելու պարտականութեամբ եւ հայ պատանին ու երիտա-





սարդը օտարրոտի ազդեցութիւններէ զերծ պահելու նախանձախնդրութեամբ:

«Ամբողջ 105 տարիներ Հ.Մ.Ը.Մ. Եռագոյն դրօշին առաջնորդութեամբ հայութեան ենթագիտակցութեան մէջ վառ պահեց հզօր, անկախ, ազատ ու միացեալ հայրենիքի տեսլականը, եւ երբ պահը հասաւ, մեծ հպարտութեամբ, այս անգամ հայրենիքի մէջ խիտ շարքերով դիմաւորեց Եռագոյնը: Ու զարմանալի չէ, որ այս հզօր միութիւնը պատուէ իր վաստակաշատ անդամները, որոնք տարիներ շարունակ ճիգ չխնայեցին մեր կազմակերպութեան զոյատեւման եւ յարատեւ վերելքին», ըսաւ եղբ. Հայկ Թապազեան:

Ապա, քոյր Մոնա Պօղոսեան հրաւիրեց նախկին նախարար քոյր Վարդենի Օհանեան-Գէորգեանը՝ ստանձնելու համար Շրջանային Վարչութեան երախտագիտութեան յուշանուէրը՝ իբրեւ առաջին կին Հ.Մ.Ը.Մ.ականը, որ ստանձնած է Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութիւնը:

Այնուհետեւ, յաջորդաբար բեմ հրաւիրուեցան վաստակաւոր նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ եղբայրներ Գալուստ Գոչունեան, Պետրիկ Լոճիկեան, Յարութ Լազիսեան, Բաֆֆի



ՃԱՆՉՆԱՔ ՊԱՐԳԵԻԱՏՐԵԱՆԵՐԸ

Եղբ. Յարութ Լազիսեան իր կարեւոր ներդրումը ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի շինարարական եւ կազմակերպական բազմաթիւ ծրագիրներուն: Ան աշխոյժ մէկ անդամը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի նորակառոյց մարզահամալիրի շինարարական մարմինին, ճիգ չխնայելով տասնամեակներու երազի մը իրականացման:

ԵՂԲ. ԲԱՖՖԻ ՄՈՒՄՉՕՂԼԵԱՆ

Եղբ. Բաֆֆի Մումջօղլեան 52 տարիէ ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին: Ան փինկ-փոնկի Լիբանանի անհատական եւ խառն զոյգի ախոյեան հանդիսացած է 1974-1992: Եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի Մարզական Խորհուրդի ատենապետ, ապա երկար տարիներ՝ վարչական:



Եղբ. Բաֆֆի Մումջօղլեան 10 շրջան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, երկու շրջան վարելով ատենապետի պաշտօն: Ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական երկու Ընդհանուր Ժողովի:

2007-էն ի վեր եղբ. Բաֆֆի Մումջօղլեան Լիբանանի փինկ-փոնկի ֆետերասիոնի փոխ նախագահն է: Իբրեւ Լիբանանի երկար տարիներու ախոյեան, ան երկիրը պատուով ներկայացուցած է աւելի քան 20 երկիրներու միջազգային մրցաշարքներուն: Եղած է Լիբանանի փինկ-փոնկի ազգային խումբի մարզիչ իր հետ խումբը չորս անգամ խլած է արաբական երկիրներու ախոյեանութեան տիտղոսը:

2012-ին, Լոնտոնի ողիմպիականին, ան եղած է փինկ-փոնկի Լիբանանի ազգային խումբին մարզիչը:

Եղբ. Բաֆֆի Մումջօղլեան մաս կը կազմէ Լիբանանի Ողիմպիական Կոմիտէին:

Մումջօղլեան եւ քոյր Մարօ Թապեան, որոնք Շրջանային Վարչութեան ատենապետին ձեռամբ ստացան Հ.Մ.Ը.Մ.ի «Մառայութեան» շքանշան՝ միութեան մէջ եւ անոր ի խնդիր իրենց նուիրումին եւ ցուցաբերած անշահախնդիր աշխատանքին համար:

Ձեռնարկը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Աւարտին, պարզեւտրեալները ընդունեցին շնորհաւորութիւններ:





## ԼԵՎԱՄ-Ի 2022-2023 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ



*Թղթակից  
ԴԵՅՐՈՒԹ*

**Ե**րեք տարուան ականայ դադարէ ետք, կրթական անցնող տարեշրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի Լիբանանահայ Երկսեռ Վարժարաններու Աշակերտական Մարզախաղերը՝ ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերը իրականացան մեծ յաջողութեամբ: Ընդհինի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄ-ի յանձնախումբին հետեւողական եւ ժրաջան աշխատանքին, ամիսներ շարունակ, լիբանանահայ վարժարաններու աշակերտներ ազնիւ մրցակցութեան մթնոլորտի մէջ, ջանացին մետալներ եւ օրհնական տիտղոսներ շահիլ հինգ մարզաձեւերու մէջ.- ճատրակ, փինկ-փոնկ, արլեթիզմ, մինի-ֆութպոլ եւ պասքեթպոլ:

Ստորեւ՝ ընդհանուր ակնարկ մը մրցումներուն եւ մրցանակակիրներուն մասին:





**ՃԱՏՐԱԿ**

ԼԵՎԱՄ-ի 2022-2023 տարեշրջանի մրցումները սկսան ճատրակի մրցաշարքով, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուժի ակումբին մէջ, մասնակցութեամբ 76 աշակերտներու, որոնք կը ներկայացնէին հետեւեալ վարժարանները.- Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան, Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան, Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան վարժարան, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարան, Հայ Կաթողիկէ Սուրբ Խաչ-Հարպոյեան վարժարան, Ազգային Գալուստ Կիւլպէնկեան-Յառաջ վարժարան, Ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճ, Ազգային Միացեալ վարժարան եւ Սրբոց Հռիփսիմեանց վարժարան:

Մրցաշարքը ընթացք առաւ ճատրակի Լիբանանի նախկին ախոյեան քոյր Սիւզան Մուրատեանի ներկայութեամբ: Քոյրը կատարեց մրցաշարքին առաջին

քայլը, 12-էն վար տարիքային բաժանմունքին հետ: Քոյր Սիւզան Մուրատեան Լիբանանի ճատրակի ախոյեան հանդիսացած է վեց անգամ եւ Լիբանանը ներկայացուցած է միջազգային բազմաթիւ մրցաշարքներու:

Մրցումներուն ընթացքին, մասնակիցներուն այցելեցին ճատրակի Լիբանանի ֆետերասիոնի նախագահ Ժառուտաթ Շաքէր, ատենադպիր Ռաուատ Համմուտ եւ այլ անդամներ, ինչպէս նաեւ՝ ֆետերասիոնի անդամ եղբ. էլի Հուլիշեան:

Մրցումները կատարուեցան տարիքային չորս բաժանումով՝ 12 տարեկան վար, 14 տարեկանէն վար, 16 տարեկանէն վար եւ 20 տարեկանէն վար:

Սօսաւորապէս 6 ժամ տեւած մրցաշարքի աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եւ Լիբանանի աթլէթի ֆետերասիոնի գանձապահ քոյր Մարիա Գէորգեան կատարեց մրցանակաբաշխութիւնը:

Ստորեւ անհատական մրցումներուն արդիւնքները.-

**12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Մարիա Մարտիկեան (Ճեմարան)
2. Ալիք Գրիգորեան (Եղիշէ)
3. Վիգի Հաւաթեան (Յառաջ)

**12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

1. Մարք Մարտիկեան (Ճեմարան)
2. Նարեկ Բակլայեան (Ճեմարան)
3. Քրիստ Արամալի (Հռիփսիմեանց)

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Քրիստինա Կոբարեան (ԿԲՎ)
2. Վանտա Ռիթա Պոյաճեան (Ս. Խաչ)
3. Նայրի Առնեւեան (Մեսրոպեան)

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

1. Մարտիկ Մարտիկեան (Ճեմարան)
2. Արա Ատոմ Մանճիկեան (Եղիշէ)
3. Յարութիւն Երանճեան (ԿԲՎ)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Փերլա Աւետիսեան (Ս. Խաչ)
2. Լիլի Գապագեան (Յառաջ)
3. Մարիանա Չարըբեան (Ս. Խաչ)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

1. Աւօ Միքայէլեան (Ճեմարան)
2. Մարք էլ Հաժ (ԿԲՎ)
3. Կի Գալուստ (Մեսրոպեան)

**20 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Լիւսի Հերկեւեան (Յառաջ)
2. Քրիստին Շաղոյեան (Միացեալ)
3. Մարի Խոխագլեան (Միացեալ)

**20 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

1. էլի Թոփոխանեան (Ս. Խաչ)
2. Մարք Կիւլիլիւսեան (Մեսրոպեան)
3. Գլակ Մարտիրոսեան (Եղիշէ)

**ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ**

**ԸՆԴՀ. ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

1. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան
2. Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարան







3. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան

**ՓԻՆԿ-ՓՈՆԿ**

Ճատրակին յաջորդեցին փինկ-փոնկի մրցումները, որոնք տեղի ունեցան «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» մարզամշակութային կեդրոնի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ, մասնակցութեամբ 41 աշակերտ-աշակերտուհիներու, որոնք կը ներկայացնէին հետեւեալ վարժարանները.- Համագգայինի Մեյլանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան, Սրբոց Հռիփսիմեանց վարժարան, Հայ Աւետարանական քոլէճ, Հայ Կաթողիկէ Սուրբ Խաչ-Հարպոյեան վարժարան, Ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճ, Ազգային Միացեալ վարժարան եւ Հայ

Կաթողիկէ Մեսրոպեան վարժարան:

Մրցումները դարձեալ կատարուեցան տարիքային 4 բաժանումով՝ 12 տարեկանէն վար, 14 տարեկանէն վար, 16 տարեկանէն վար եւ 16 տարեկանէն վեր:

Սօսաւորապէս 3 ժամ տեւած մրցաշարքին ներկայ գտնուեցան Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի անդամ, Լիբանանի փինկ-փոնկի Ֆետերասիոնի փոխ նախագահ եւ 18 տարի Լիբանանի խոյեան հռչակուած եղբ. Բաֆֆի Մուսալիան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Թապազեան եւ Լիբանանի աթլէթի ֆետերասիոնի գանձապահ եւ ԼԵՎԱՄ-ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ քոյր Մարիա Գէորգեան:

Ստորեւ կը ներկայացնենք մրցումներուն անհատական արդիւնքները.-

12 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ

- 1. Ռիթա Մուսալիան (ճեմարան)
- 2. Վանա Մանուկեան (ճեմարան)
- 3. Կրէյս Քէօսաօղլի (Հռիփսիմեանց)

12 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ՏՂԱՔ

- 1. Քրիստ Արամալի (Հռիփսիմեանց)
- 2. Ալեքսանտր Ժալըֆեան (ճեմարան)
- 3. Ալէք Գրիգորեան (ճեմարան)

14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ

- 1. Լորէն ճեմարեան (ճեմարան)
- 2. Ճէնի Յակոբեան (ճեմարան)

14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ՏՂԱՔ

- 1. Վեհ Քրիստ Հարպոյեան (ճեմարան)
- 2. Անթոնի Նիւրբէթլեան (ճեմարան)
- 3. Փիթըր Սալորեան (Եղիշէ)

16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ

- 1. Գարինա Վասիլեան (ճեմարան)
- 2. Գլէա Արապաղեան (ճեմարան)
- 3. Քրիստէլ Ղանէմ (Հռիփսիմեանց)

16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ՏՂԱՔ

- 1. Հրակ Գէորգեան (ճեմարան)
- 2. Քրիստոֆըր Ազէզեան (Հռիփսիմեանց)
- 3. Ալէքս Թովաքեան (Հռիփսիմեանց)

16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ - ԱՂԶԻԿՆԵՐ

- 1. Արազ Խտրրեան (ճեմարան)
- 2. Արին Հանէշեան (ճեմարան)
- 3. Կալինա Զէյթունլեան (Հռիփսիմեանց)







**16 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ ՎԵՐ - ՏՂԱՔ**

1. Հրակ Դրո Կիւրիւնյեան (Ճեմարան)
2. Գէորգ Արապաղեան (Ճեմարան)
3. Ակսէլ Իւրնէշլեան (Հոփսիսիմեանց)



**14 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԱՐ**

1. Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարան
2. Ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճ
3. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան

**Վիզէն Տէմիրեան (ԿԻՎ) 3**

**15 տարեկան եւ վեր**

- Մարտո խաչատուրեան (Ս. խաչ) 7  
Նարեկ Վարդանեան (Ճեմարան) 7  
Փօլ Գաթոյեան (Մեսրոպեան) 7

**ՄԻՆԻ ՅՈՒԹՊՈՒ**

Մինի Ֆուտպոլը եղաւ ԼԵՎԱՄ-ի այս տարուան երրորդ մարզախաղը: Մըրցումները կատարուեցան Հ.Մ.Ը.Մ-ի «Պօղոս Արիս» դաշտին վրայ, մասնակցութեամբ 10 վարժարաններու, որոնք մրցեցան տարիքային երկու բաժանումով՝ 14 տարեկան եւ վար, 15 տարեկան եւ վեր:

Մրցումներու ընդհանուր դասակարգումը պարզեց հետեւեալ պատկերը-

**15 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԵՐ**

1. Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան
2. Հայ Կաթողիկէ Ս. խաչ-Հարպոյեան վարժարան
3. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան

**ԱՌԱԻԵԼԱԳՈՅՆ ԹԻՒՌՈՎ ԿՈՒՆԵՐ ՆՇԱՆԱԿՈՂՆԵՐ**

- 14 տարեկան եւ վար**  
Ճօ Այնթապի (Մեսրոպեան) 3  
Սարի Արապեան (Եղիշէ) 3

**ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԸՆԴՀ. ԴԱՍԱԻՈՐՈՒՄ**

1. Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան
2. Սրբոց Հոփսիսիմեանց վարժարան
3. Ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճ

**ԱԹԼԵԹԻՉՄ**

Աթլետիզմի մրցումները կատարուեցան Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզադաշտին վրայ, աւելի քան 250 աշակերտներու մասնակցութեամբ եւ տարիքային երեք բաժանումով՝ 12 տարեկանէն վար, 14 տարեկանէն եւ 16 տարեկանէն վար:

Աւարտին տեղի ունեցաւ մետալներու բաշխում, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Մհեր Քէնտիրճեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եւ Լիբանանի աթլետի ֆետերասիոնի գանձապահ քոյր Մարիա Գէորգեանի:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները-







**Մէկ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ**

**12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Քլոէ Աղտամբեան (Ս. Խաչ)
- 2. Ռիթա Մուսխոյիեան (Ճեմարան)
- 3. Գլարա Սամսաթեան (Ս. Խաչ)

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Լորէն Ճերմակեան (Ճեմարան)
- 2. Կլորիա Փիա Պաղտասարեան (Ս. Խաչ)
- 3. Լիմ Քէնտիրճեան (Ճեմարան)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Ալիք Քէշիշեան (Ճեմարան)
- 2. Գարինա Վասիլեան (Ճեմարան)
- 3. Պեռնատէթ Պալեան (ԿԲՎ)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԵՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Նանար Պազարպաշեան (Ճեմարան)
- 2. Արեւիկ Պողոսեան (Հովհիսիմեանց)

**3. Վանա Ռիթա Հալլաճեան (Մերոպեան)**

**12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Ռաֆայէլ Այանեան (ԿԲՎ)
- 2. Սերուժ Թոփճեան (Մերոպեան)
- 3. Բիւզանդ Սապունճեան (Յառաջ)

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Քեվրն Ճըրթիտեան (Ս. Խաչ)
- 2. Պերճ Պաստաճեան (Ճեմարան)
- 3. Վեհ Քրիստ Հարպոյեան (Ճեմարան)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Սերժի Թուլթիկեան (Ս. Խաչ)
- 2. Հրակ Օհանեան (ԿԲՎ)
- 3. Ճիւան Սթամպուլեան (Ս. Խաչ)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԵՐ - ՏՂԱՔ**

- 1. Սերուժ Գուլյումճեան (Շամբեան)
- 2. Մհեր Աշգարեան (Յառաջ)

**3. Ճօ Պշարա (ԿԲՎ)**

**ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ**

**12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Մարիլին Ապաճեան (Յառաջ)
- 2. Նանոր Միսեան (Ճեմարան)
- 3. Բալենի Աւագեան (Ճեմարան)

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Գարէն Յովակիմեան (ԿԲՎ)
- 2. Սելին Տուտազեան (Յառաջ)
- 3. Լորէն Տէմիրճեան (Ճեմարան)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Լուիս Աւետիս (Ճեմարան)
- 2. Ժուլիանա Թրթրուեան (Ճեմարան)
- 3. Լիւսի Գասէմճեան (Մերոպեան)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԵՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Սերենա Սարաֆեան (ԿԲՎ)
- 2. Արինա Աբրահամեան (Յառաջ)
- 3. Մեղրի Ապտալեան (Եղիշէ)

**12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Կարօտ Կիրակոսեան (Ճեմարան)
- 2. Սերուժ Ազնաւուր (Ճեմարան)
- 3. Կրէկ Քարտաշեան (Մերոպեան)

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Արեգ Թրթրուեան (Ճեմարան)
- 2. Արա Ասոմ Մանճիկեան (Եղիշէ)
- 3. Միհրէ Տէր Ղուկասեան (Ճեմարան)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Քրիստոֆ Մահտեսեան (Ճեմարան)
- 2. Ժան Փիէր Վարդանեան (Մերոպեան)







**3. Վահագն Հաշտօրեան (Ճեմարան)**

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ - ՏՂԱՔ**

1. Նարեկ Վարդանեան (Ճեմարան)
2. Ակսել Իւրնէշլեան (Հռիփսիմեանց)

**3. Արէն Պապիկեան (Ճեմարան)**

**50 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**12 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Թէա Մարիա Բարսեղեան (ԿԲՎ)
2. Քլոէ Աղտամբեան (Ս. Խաչ)
3. Վանա Տատուշեան (Յառաջ)

**60 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Մարիթա Զաքարեան (Մեսրոպեան)
2. Սեւան Թահահան (Եղիշէ)
3. Հեղնար Պրոնսուգեան (Հռիփսիմեանց)

**80 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Ալեակ Գուլյումճեան (Ս. Խաչ)
2. Լուի Աւետիս (Ճեմարան)
3. Աստղիկ Կիրակոսեան (ԿԲՎ)

**100 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Արինա Աբրահամեան (Յառաջ)
2. Ալինա Վասիլեան (Ճեմարան)
3. Ալին Սարաֆեան (ԿԲՎ)

**50 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**12 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

1. Նարեկ Բակլայեան (Ճեմարան)
2. Քրիս Պապիկեան (Ս. Խաչ)

**3. Սարո Ղազարեան (Շամլեան)**

**60 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

1. Աւօ Օտապաշեան (Ճեմարան)
2. Անդրանիկ Ղուկասեան (ԿԲՎ)
3. Թովմաս Բանոյեան (Ս. Խաչ)

**80 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

1. Կի Գալուստ (Մեսրոպեան)
2. Սերժիօ Թուլթիկեան (Ս. Խաչ)
3. Կարէն Կարօտ Հաննէշեան (Ճեմարան)

**100 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ - ՏՂԱՔ**

1. Արէն Պապիկեան (Ճեմարան)
2. Ճօ Պշարա (ԿԲՎ)
3. Լէոնարտօ Խայրաթ (Միացեալ)

**600 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**12 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Ռիթա Մուսխոյլեան (Ճեմարան)
2. Սերլի Ապաճեան (Մեսրոպեան)
3. Թէա Մարիա Բարսեղեան (ԿԲՎ)

**800 ՄԵԹՐ ՎԱԶՔ**

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Անժելինա Աշգարեան (Յառաջ)
2. Սեւան Թահահան (Եղիշէ)
3. Լէա Տիրչէքէնեան (Մեսրոպեան)

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Գլէա Արապաղեան (Ճեմարան)
2. Վանա Աւետիսեան (Միացեալ)
3. Ալեակ Գուլյումճեան (Յառաջ)

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ - ԱՂԶԻԿՆԵՐ**

1. Սառա Խօշաֆեան (Ճեմարան)
2. Մաթիլտա Քէօճիլեան (Յառաջ)
3. Ալինա Վասիլեան (Ճեմարան)







**600 ՄԵԹՐ ՎԱՋՔ**

**12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Լեւոն Փարթամեան (Եղիշէ)
- 2. Բիւզանդ Սապունճեան (Յառաջ)
- 3. Ժողէֆ Բարսեղեան (ԿԲՎ)

**800 ՄԵԹՐ ՎԱՋՔ**

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Աւօ Օտապաշեան (Ճեմարան)
- 2. Նարեկ Պետրոսեան (Միացեալ)
- 3. Արմէն Միսնեան (Ճեմարան)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Կի Խանճեան (Ճեմարան)
- 2. Օլիվեր Ճիրիշեան (Շամլեան)
- 3. Նարեկ Տէր Սարգիսեան (Միացեալ)  
Ռուբէն Թէնքէրեան (Մետրոպեան)

**16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԵՐ - ՏՂԱՔ**

- 1. Սերոբ Պէպէճեան (Շամլեան)
- 2. Քրիստ Պոսնոյեան (Հռիփսիմեանց)
- 3. Անտրէա Մինասեան (Ս. Խաչ)

**ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԸՆԴՀ. ԴԱՍԱՒՈՐՈՒՄ**

- 1. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան
- 2. Ազգային Գարուստ Կիւլպէնկեան-Յառաջ վարժարան
- 3. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան

**ՊԱՍՔԵԹՊՈԼ**

Պասքեթպոլի մրցումները մեծ խանդավառութիւն ստեղծեցին իրենց շուրջ: Մրցումներուն մասնակցեցան 250 աշակերտ-աշակերտուհիներ՝ տարիքային երկու բաժանումով՝ 14 տարեկան եւ վար, 15 տարեկան եւ վեր:

Մրցումները նախաձեռնեց ղրութեամբ տեղի ունեցան «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» մարզամշակութային կեդրոնի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» դաշտին վրայ:

Ստորեւ՝ մրցումներուն ընդհանուր արդիւնքները:-

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ԵՒ ՎԱՐ - ՏՂԱՔ**

- 1. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան



- 2. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան
- 3. Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարան

**14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ԵՒ ՎԱՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան
- 2. Հայ Կաթողիկէ Մետրոպեան վարժարան
- 3. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան

**15 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ԵՒ ՎԵՐ - ՏՂԱՔ**

- 1. Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարան
- 2. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան
- 3. Ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճ

**15 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ԵՒ ՎԵՐ - ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճ
- 2. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան
- 3. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան

**ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒՆ ՓԱԿՈՒՄԸ**

Կրթական 2022-2023 տարեշրջանի ԼԵՎԱՄ-ի մարզախաղերուն փակումը տեղի ունեցաւ 14 Մայիս 2023-ին, «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» մարզամշակութային կեդրոնի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» դաշտին վրայ կատարուած պասքեթպոլի աւարտական մրցումներով եւ մրցանակաբաշխութեամբ: Մրցանակներ ըստացան ճատրակի, փինկ-փոնկի, աթլետիկայի խմբային դասաւորման եւ պասքեթպոլի առաջին երեք դիրքերը զբաղակալ վարժարաններն ու աշակերտ-աշակերտուհիները:

Հարկ է նշել, որ խաղերու ընդմիջումներուն տեղի ունեցաւ անակնկալ մրցում մը՝ դաշտին կէսէն հարուածել («Mid-Court shot»), որուն մասնակցեցան բազմաթիւ աշակերտներ եւ Թէա Մարիա Բարսեղեան (Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանէն) յաջողեցաւ նշանակել եւ յատուկ մետալ մը շահիլ:

Խաղերու աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄ-ի յանձնախումբի ատենապետ քոյր Դալար Պէպէճեան յայտարարեց 2022-2023 տարեշրջանի մրցումներուն



աւարտը: Քոյրը շնորհաւորեց բոլոր վարժարաններու եւ աշակերտներու մասնակցութիւնը եւ անոնց արձանագրած յաղթանակները: Ան նշեց ամիսներու տեւողութեամբ մարզական պատասխանատուներու եւ ուսուցիչներու հետեւողական աշխատանքը՝ մաղթելով որ ԼԵՎԱՄ-ի մարզախաղերը բոլոր մասնակցողներուն առիթը կ'ընծայեն զարգացնելու իրենց մարզական ոգին եւ մարմնակրթական ձիրքերն ու գիտելիքները: Ի վերջոյ, քոյրը շնորհակալութիւն յայտնեց բոլոր վարժարաններուն, անհատներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, որոնք նեցուկ կանգնեցան ԼԵՎԱՄ-ի յանձնախումբին՝ յաջողցնելու այս տարուան մարզախաղերը:

Փակման հանդիսութեան ներկայ էին եւ խաղերուն մօտէն կը հետեւէին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Վիգէն Աւագեան,



Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եւ Լիբանանի պաշտօնակրթական ֆետերասիոնի անդամ եղբ. Հայկ Թապագեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Բաֆֆի Խիւտավերտեան եւ

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եւ Լիբանանի ակթիվի ֆետերասիոնի գանձապահ քոյր Մարիա Գէորգեան, որոնք կատարեցին վերոնշեալ մրցանակաբաշխութիւնները:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԼԷԹՆԵՐՈՒՄՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՐԴԻԲՆՔՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԹԼԵԹԻԶՄԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՄՆ

### Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

**20** եւ 21 Մայիս 2023-ին, Լիբանանի ակթիվիզմի ֆետերասիոնին կազմակերպութեամբ, Պէյրութի «Քամիլ Շամուն» մարզաւանին մէջ տեղի ունեցան Լիբանանի ակթիվիզմի տարիքային ախոյեանութեան մրցումները, որոնց Հ.Մ.Ը.Մ-ի ակթիվիզմները ապահովեցին 1 ոսկի, 1 արծաթ եւ 7 պրոնզ մետալներ:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ական ակթիվիզմներուն պատուաբեր արդիւնքները.-

#### ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

- Փաթիլ Ասատուրեան 200

մ. վազբ

#### ԵՐԿՐՈՐԴՈՒԹԻՒՆ

- Փաթիլ Ասատուրեան 800

մ. վազբ

#### ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

- Վանեսա Զիֆթճեան սկաւառակ արձակել  
- Ճէովանի Տօնէրեան բարձրութիւն ցատկել

- Զուլայ Պէզճեան Նիզակ նետել
- Ճէովանի Տօնէրեան դրօշարշաւ
- Կարօտ Պետիրեան դրօշարշաւ
- Վարազ Պալապանեան դրօշարշաւ
- Ճոյի Թէքէրեան դրօշարշաւ







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՄԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՅԻՍԵԱՆ ԱՇԽՈՅԺ ԱՌՕՐԵԱՆ

Թղթակից  
ԼԻՔԱՆԱՆ

**Մ**այիս 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկաուտները մասնակից դարձան գաղութին մէջ կազմակերպուած մեծաթիւ նախաձեռնութիւններու եւ ունեցան իրենց ներքին աշխատանքները: Ստորեւ՝ հրապարակային նախաձեռնութիւններէն հիմնականները:

### ՔԱՅԼԱՐՇԱԻ՝ ԼԻՔԱՆԱՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

6 Մայիս 2023-ի կէսօրէ ետք, Լիբանանի նահատակաց սօսին առիթով տեղի ունեցաւ քայլարշաւ մը՝ «Շաղգոյեան» կեդրոնէն մինչեւ Պէյրութի նահատակաց հրապարակ: Քայլարշաւը առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը: Քայլարշաւին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները:



### ՊԱՐՄԱՆՈՒՀԻ ՃԻՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՅՆՃԱՐԻ Մէջ

Նոյն օրը, Շաբաթ, 6 Մայիսին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Խմբապետութեան պարմանուհի ճիւղին աշխատանքը, Այնճարի մէջ:

Առաւօտեան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Ժըտէյտէի եւ Անթիլիասի մասնաճիւղներու պարմանուհիները մեկնեցան Այնճար՝ միանալու Այնճարի մասնաճիւղի իրենց քոյրերուն: Բացման արարողութենէն ետք մասնակիցները բաժնուեցան տասնեակներու, ընտրեցին իրենց տասնապետները, եւ նշանակուեցան փոխ տասնապետները: Ապա, անդամները ունեցան ծանօթացման խաղ եւ դասախօսութիւն՝ հետազօտական արշաւ-բանակումի եւ քարտէսագիտութեան մասին: Անկէ ետք, իբրեւ գործնական աշխատանք, սկիզբ առաւ քարտէսի գործածութեամբ ունեցած փնտրութիւնը, որուն միջոցով անդամները ծանօթացան Այնճարին՝ այցելելով յատկանշական վայրեր եւ ունենալով հետախուզական արշաւ, հեծելարշաւ, լեռնարշաւ:

Աւարտին, «Սօսէ Մայրիկ» տասնեակը ստացաւ «Լաւագոյն տասնեակ»ի վկայագիր:

### ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐ

Պատրաստուելու համար Յուլիսին տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի պատուիրակութեան անդամներուն համար տեղի ունեցաւ սեմինար մը, Կիրակի, 7 Մայիսին, Պէյրութի ակումբին մէջ, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Խմբապետութեան:





Դրօշակի արարողութենէն ետք, Շրջանային Սկստուական Խորհուրդի ատենապետ եղբ. Յակոբ Չպլաքեան բացատրեց բանակումին կարեւորութիւնը, պատուիրակութեան անդամներու ուսերուն դրուած պարտաւորութիւնը, ինչպէս նաեւ յաջողութիւն մաղթեց անոնց՝ լաւագոյնս ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկստուակութիւնը՝ զանազան շրջաններէ համախմբուած Հ.Մ.Ը.Մ-ականներու մօտ:

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վար-



չութեան ատենապետ եղբ. Հայկ Թապազեան, որ քաջալերական խօսքեր ուղղեց եւ յաջողութիւն մաղթեց պատուիրակութեան:

Ապա, Շրջանային խմբապետ քոյր Լուսի Պիլալեան մասնակիցները բաժնեց խմբաւորումներու եւ յանձնախումբերու, որոնք սկսան աշխատանքի: Ճաշէն ետք կատարուեցաւ գոյքերու ստուգում եւ այլն:

Սեմինարը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՄ Ի ՊԱՏԻ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութիւն ԳԱՅԻՐԷ

Կիրակի, 30 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.- «Արարատ»ի «Շուշի» սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ի

պատիւ Հայաստանի Հանրապետութեան գեղարվեստական մարմնամարզի (Artistic Gymnastics) ազգային հաւաքակաճի ախոյեան մարզիկներուն, որոնք մասնակցեցան աշխարհի ախոյեանութեան չորրորդ հանգրուանի մրցումներուն, 27-30 Ապրիլ 2023-ին, Գահիրէի միջազգային համալիրի գլխաւոր դահլիճին մէջ:

Ընդունելութեան սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի Մեկուսի վարչութեան ատենապետ եղբ. Լեւոն Դեւրիեան ողջունեց հայրենի մարզիկները եւ յանուն միութեան շնորհաւորեց զանոնք՝ իրենց նուաճած արդիւնքներուն համար եւ յաջողութիւն մաղթեց



իրենց յառաջիկայ մրցումներուն:

Ապա, վարչութիւնը յիշատակի մետալներ յանձնեց ախոյեաններուն եւ իրենց մարզիչներուն:

Յայտնենք, որ հայրենի ախոյեանները արժանացած էին հետեւեալ մետալներուն.- Արթուր Դաւթեան՝ ոսկի, Գագիկ Խաչիկեան՝ արծաթ, Արթուր Աւետիսեան՝ պրոնզ եւ Յարութիւն Մերախեան՝ պրոնզ:

Գահիրէի հայրութիւնը մրցումներու չորս օրերուն ախոյեանութեան դահլիճին մէջ զգալի ներկայութիւն էր Եռագոյններով եւ բոլոր քաջալերանքով:







# ԱՐՇԱԲ-ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍԻ ԼԵՌԵԻ ՀԱՐԱԲԱՅԻՆ ՄԻՆԱՅԻ Ս. ԳԱԹՐԻՆ ՎԱՆՔ

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութիւն  
ԳԱՅԻՐԷ

Հինգշաբթի, 11 եւ Ուրբաթ, 12 Մայիս 2023-ին, կազմակերպութեամբ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի Սկստակական Խորհուրդին եւ խմբապետական կազմին, տեղի ունեցաւ արշաւ-ուխտագնացութիւն դէպի հարաւային Սինայի Ս. Գաթրին քաղաք, մասնակցութեամբ

12 սկստակներու, առաջնորդութեամբ իրենց խմբապետին, ինչպէս նաեւ՝ Սկստակ-Խորհուրդին անդամներու:  
Կէս գիշերը անց, խումբը 5 ժամուան լեռնագնացութեամբ բարձրացաւ Մովսէսի լեռան գագաթը (2285 մեթր բարձրութեամբ), ուր դիմաւորեց եւ վայելեց լուսաբացը: Խումբը երկու ժամ ետք դէպի ստորոտ ճամբան բռնելով հասաւ Ս. Գաթրին վանքը, ուր կատարեալ դարձաւ սկստակներուն ուխտագնացութիւնը:

## ԵՐՈՒՄԱՂԷՄԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ԵՒ...ՏՈՂԱՆՑՔԸ

16 Ապրիլ 2023-ին, «Պուրջուրծի» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի Մեկուսի շրջանին Ս. Զատիկուան տարեկան պարահանդէսը, որուն՝ շքանշանի անդամներու կողքին մասնակցեցան հայ ուխտաւորներ

Գանատայէն, Մ. Նահանգներէն, Ֆրանսայէն եւ Պոլիսէն: Գանատայի ուխտաւորներու շարքին էր Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարգէն Արք. Զարեան:  
Այս առիթով, մասնաճիւղի ատենապետ եղբ. Յարութ Պաղամեան արտասանեց բարի գալուստի խօսք: Իրենց երգով ու երաժշտութեամբ ուրախ եւ ճոխ մթնոլորտ ստեղծեցին Ֆրանսահայ արուեստագէտներ Պերճօ Պէքարեան եւ Սաբօ Նահապետեան:



...ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ  
Օր մը առաջ, Շաբաթ, 15 Ապրիլ 2023-ին տեղի ունեցաւ մասնաճիւղին աւանդական տողանցքը՝ ճրագալոյցի առիթով (Երուսաղէմի մէջ Ս. Ծնունդն ու Զատիկը կը նշուին Յուլեան տոմարով-«Մ.»): Կէսօրէ առաջ ժամը 11.30-ին, Հ.Մ.Ը.Մ-ի սկստակական շեփորախումբ-





բը եւ սկաուտները առաջնորդեցին Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամներուն երթը դէպի Ս. Յարութեան Տաճար, ուր նոյն օրը կէսօրէ ետք ժամը 3-ին, Քրիստոսի գերեզմանէն դուրս բերուեցաւ Ս. կրակը, աւետելով Քրիստոսի յաղթական Յարութիւնը:

Ժամը 4-ին Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները տողանցքով առաջնորդեցին Հայոց Պատրիարքութեան թափօրը Ս. Յարութեան տաճարէն մինչեւ Հայոց Սրբոց Յակոբեանց վանք, ուր մեծ բակին եւ ապա փոքր բակին մէջ տողանցքը իր աւարտին հասաւ «Մեր հայրենիք» եւ «Յառաջ նահատակ» քայլերգներու երգեցողութեամբ:



### Հ.Յ.Գ. ԲԻԲՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՅՅԵԼԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Երեք աբբի, 18 Ապրիլ 2023-ի երեկոյեան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան Հ.Մ.Ը.Մ.ի գրասենեակին մէջ հիւրընկալեց Հ.Յ.Գ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը, ընկերակցութեամբ Սուրիոյ պատկան մարմնի Ներկայացուցիչ Վրէժ Եագուպեանի եւ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քեօշկերեանի:



Մտերմիկ հանդիպումի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան բարի գալուստ մաղթեց Յակոբ Տէր Խաչատուրեանին եւ անդրադարձ կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի գործունէութեան եւ դիմագրաւած մարտահրաւերներուն:

Շրջանային Վարչութեան անդամները իրենց հիւրը իրազեկ դարձուցին մարզական եւ սկաուտական կեանքին մէջ Սուրիոյ մասնաճիւղերուն արձանագրած յաջողութիւններուն:

Այցելութեան աւարտին, Շրջանային Վարչութիւնը Հ.Յ.Գ. Բիւրոյի ներկայացուցիչին նուիրեց միութեան 100-ամեակին առիթով հրատարակուած գիրքերէն:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

### Թղթակից ՀԱԼԷՊ

**4** Ապրիլ 2023-ի երեկոյան, Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղը տարեկան անդամական իր ընդհանուր ժողովը գումարեց «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ:

Ժողովին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօզկերեան, պատկան մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիչեան, ինչպէս նաև Հ.Մ.Ը.Մ-ական քոյրեր ու եղբայրներ:

Ժողովը սկիզբ առաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, ապա ընթերցուեցաւ վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Կատարուեցան լուսաբանութիւններ, քննարկումներ եւ արծարծուեցան միութենական մտահոգութիւններ: Այնուհետեւ ժողովը ընտրեց Հալէպի մասնաճիւղի նոր վարչութիւնը՝ հետեւեալ կազմով՝ եղբայրներ Արամ Աւետիսեան, Յարութ Խաչատուրեան, Տիգ-

րան Պարպանեան, Մայք Հալլաճեան, Կարօ Պարմաքուրզեան, Յովիկ Փամբարեան, քոյրեր Նորա Գրաճեան, Մարիա Մարգէեան եւ Նուշիկ Սիւլիւքճեան:

Աւարտին, Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետը շնորհակտրեց նորընտիր վարչութիւնը եւ բեղուն գործունէութիւն մաղթեց անոր:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

### ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ


Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղը անդամական ընդհանուր ժողովը կատարեց 3 Փետրուար 2023-ին, շրջանի «Կարպուշեան» սրահին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յարութ Գաբրիէլեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերու եւ եղբայրներու (Գամասկոսի, Գամիշլիի եւ Քեսապի մասնաճիւղերու անդամական ընդհանուր ժողովներուն մասին տեսնել «Մարզիկ» ի նախորդ թիւը, էջ 37-38- «Մ.»):

## ՆՈՐ ՄԿԱՌԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱՊԵՏԻ ԴՐՕՇԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

### Թղթակից ՀԱԼԷՊ

**Հ**ովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտ-Խորհուրդին եւ խմբապետութեան, Կի-

րակի, 7 Մայիս 2023-ին, Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղի նորանշանակ Սկաուտ-Խորհուրդի յայտարարութիւն եւ մասնաճիւղի խմբապետի դրօշի փոխանցում: Վարչութեան Սկաուտ-Խորհուրդի ներկայացուցիչ եղբ. Յովհաննէս Փամփալեան ներկայացուց կազմը, որ կը բաղկանայ հետեւեալներէն.- քոյրեր Թալին Յով-





հաննէսեան, Լալա Չաքարեան, Հուրի Ներսէսեան, Թամար Կիլոյեան, Սեւան Իսրայէլեան, եղբայրներ Յարութ Փաթանեան, Կարօ Մարքէեան, Երուանդ Պալապանեան, Կարօ Տիչչէքէնեան եւ Վաչէ Փայասեան: Մասնաճիւղի խմբապետ յայտարարուեցաւ եղբ. Յովիկ Հապէշեան:

Եղբ. Փամփալեան շնորհակալութեան խօսք ուղղեց ընթացակարտ Սկա-

ուտ. Խորհուրդին եւ յաջողութիւն մաղթեց նորանշանակ Խորհուրդին, ապա ան հրաւիրեց մասնաճիւղին ընթացակարտ խմբապետը փոխանցելու մասնաճիւղին դրօշը: Մասնաճիւղին խմբապետը իր կարգին հրաւիրեց Սուրիոյ Շրջանային Խմբապետն ու Խմբապետուհին՝ հովանաւորելու մասնաճիւղի խմբապետին փոխանցման արարարողութիւնը: Մասնաճիւղի նորանշանակ

խմբապետը ստանձնեց մասնաճիւղին դրօշը եւ խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղի ընթացակարտ խմբապետին եւ բարի երթ մաղթեց մասնաճիւղին քոյրերուն եւ եղբայրներուն:

Հանդիպումը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

## «ՄՈԿԼԻՒ ՕՐ»ՈՒԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ

Թղթակից  
ՔԵՍԱՊ

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին, Շաբաթ, 6 Մայիս 2023-ին, «Սարդարապատ» սրահին մէջ տեղի ունեցաւ «Մոկլիւ օր»ուան հանդիսութիւն:

Յայտագիրը սկիզբ առաւ գայլիկ-արծուիկներու մոտ-



քով, ապա հնչեցին Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները: Բացման խօսքը արտասանեց գայլ-արծուիկ միաւորի Աքելյայ քոյր էլիզապէթ Չելչեան - Սահակեան:

Գեղարուեստական յայտագիրը ընդգրկեց «Մեծ Կանչ», պար, չափական մարզանք, հայկական պար, ազգային երգեր, Հ.Մ.Ը.Մ.ական կանչեր, բուրգ եւ թմայլիկ:

Աւարտին, Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեան արտասանեց իր սրտի խօսքը եւ «Պահպանիչ»ով փակեց օրուան հանդիսութիւնը:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ՝ ՏԵՐԻՔԻ ՄԷՋ Ի ՊԱՏԻ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՇՐՋԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ

## Թղթակից ՏԵՐԻՔ

**Կ**իրակի, 21 Մայիս 2023-ի երեկոյան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ.ի սկսողական կորիզի գայլիկ-արծուկներուն եւ կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն մասնակցութեամբ, Տէրիքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական կոլիկ ձեռնարկ՝ ի պատիւ շրջանը այցելող Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Եպս. Ազգարեանի:

Տէրիքի թաղական խորհուրդի ատենապետ Սերոբ Սուսանեան բարի գալուստ մաղթեց Առաջնորդ Սրբազանին եւ Տէրիքի հայութեան անունով որդիական սիրոյ ջերմ ողջոյններ փոխանցեց անոր:

Գեղարուեստական կոլիկ յայտագրի ընդմէջէն Ս. Աստուածածին կիրակնօրեայ դպրոցի աշակերտները Ս. Գրիգոր Նարեկացիի «Նարեկ» աղօթամատեանէն եւ Ս. Ներսէս Շնորհալիի «Հաւատով խոստովանիմ» աղօթաշարէն աղօթքներ արտասանեցին, ինչպէս նաեւ Ս. Աստուածածինի նուիրուած շարականներ երգեցին:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Տէրիքի սկսողական կորիզի գայլիկներն ու արծուկները ազգային երգեր երգեցին եւ Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որ-



դուն» բանաստեղծութիւնը ասմունքեցին:

Խօսք առաւ Պսակ Քհնյ. Պէրպէրեան եւ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր, հովուական գօտեպնդող այցելութեան համար եւ անդրադառնալով կիրակնօրեայ դպրոցի եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխոյժ գործունէութեան, գնահատեց գեղարուեստական յայտագիրով հանդէս եկող պատանիները:

Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Լեւոն Վրդ. Եղիայեան, իր կարգին, բարի գալուստ մաղթեց Սրբազան Հօր, հովուական օրհնաբեր այցելութեան համար: Ան յայտնեց, թէ գեղարուեստական ձեռնարկը ցոյց կու տայ Տէրիքի գաւակներուն ազգային ոգին եւ հայեցի կրթութիւնը:

«Թուրքիոյ սահմանամերձ ըլլալով հանդերձ, Տէրիքի հայութիւնը կառչած կը մնայ իր ազգային արժէքներուն», աւելցուց ան: Ապա, ան Տէրիքի թաղականութեան եւ ժողովուրդին կողմէ փոխկրեայ եւ արծաթեայ գլուխով ասա մը

նուիրեց Սրբազան Հօր եւ հրակիրեց գայն փոխանցելու իր սրտի խօսքը:

Սրբազան Հայրը յայտնեց, որ գեղարուեստական ձեռնարկը ո՛չ միայն գնահատանքի արժանի է եւ մեզի հպարտութեան զգացում կը շնորհէ, այլեւ հրաշքի համազօր երեւոյթ է: Սրբազանը իր ուրախութիւնը յայտնեց, որ երկու տարի առաջ հայերէնին լաւապէս չտիրապետող աշակերտները այսօր Նարեկացիի, Շնորհալիի աղօթքները կ'արտասանեն եւ մեր եկեղեցւոյ շարականները կ'երգեն: Հետեւաբար, ան մեծապէս գնահատեց Ս. Աստուածածին կիրակնօրեայ դպրոցին եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկսողական կորիզին ունեցած ներդրումը՝ նորահաս սերունդին ազգային ոգի ներշնչելու եւ հայեցի կրթութիւնը ջամբելու համար:

Գեղարուեստական ձեռնարկէն ետք, Սրբազան Հայրը հանդիպումներ ունեցաւ Տէրիքի թաղական խորհուրդին, Ս.Օ.Խաչի «Սարդարապատ» մասնաճիւղի վարչութեան, Ս. Աստուածածին կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմին, Հ.Մ.Ը.Մ.ի սկսողական կորիզի յանձնախումբին եւ Ազգային Ազատութիւն վարժարանի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին հետ:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԲԱԼԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՄԿԱՌԲՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ԱՏՈՒՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Թղթակից  
ԼԱԻԱԼ

Շաբաթ, 20 Մայիս 2023-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Լաբալի մասնաճյուղին Սկաուտ-Խորհուրդը տարեկան աստիճանատուչութեան իր հանդէսը կազմակերպեց Սուրբ Յակոբ վարժարանի «Պաստրմաճեան» սրահին մէջ: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբայրներ, Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամներ, Լաբալի Հայ Կեդրոնին մէջ գործող մարմիններու եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, դաշնակցային եւ քաղաքական դէմքեր, մասնաճիւղի անդամներ, ծնողներ եւ համակիրներ:

Հանդիսութիւնը սկսաւ սկաուտներու սրահ մուտքով: Ներկաները ծափահարութիւններով ողջունեցին զանոնք: Սկաուտներ սրահին մէջ իրենց տեղերը գրաւելով ներկայացուցին զեղարուեստական պատշաճ յայտագիր՝ Հ.Մ.Ը.Մ-ական եւ ազգային երգերով, մայրերու եւ Հայաստանի անկախութեան տօներուն նուիրուած ասմունքներով:

Ձեռնարկի աւարտին, սկաուտները ստացան իրենց վկայականները եւ աստիճանները: Մասնաճիւղի ատենապետը շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն եւ համակիրներուն վստահութեան եւ մասնաճիւղին նեցուկ կանգնելու համար, նշելով թէ տարուէ տարի մասնաճիւղին անդամներուն թիւը կը բազմանայ՝ համակիրներու լայն աջակցութեան շնորհիւ: Ան խոստացաւ շարունակել Հ.Մ.Ը.Մ-ական, հայեցի դաստիարակութեամբ կազմաւորել միութեան դիմող պատանիներն ու երիտասարդները:

Ապա խօսք առաւ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ատե-



նապետը եւ շնորհաւորեց Լաբալի մասնաճիւղին վարչութիւնը եւ Սկաուտ-Խորհուրդը: Ան իր խօսքին մէջ նշեց Լաբալի մասնաճիւղին ունեցած մեծ դերը լաւալահայութեան եւ Լաբալի Հայ Կեդրոնի կեանքին մէջ:





## ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՐԴԻՒՆՔԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ ԾԱՏՐԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

**Շ**աբաթ, 13 Մայիսին, Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ ճատրակի մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի մասնաճիւղէն քոյր մը եւ եօթը եղբայրներ:

Մրցաշարքի արդիւնքներու լոյսին տակ, եղբայրներ Զաւէն Ճամճեան (12 տարեկան եւ վար) եւ Վարդան Համպոյեան (16 տարեկան եւ վար) զտուածի մրցումները յաջողութեամբ անցնե-

լով, Հ.Մ.Ը.Մ. Թորոնթոն պիտի ներկայացնեն CYCC-ի մրրցումներուն (Canadian youth chess championship), որոնք տեղի պիտի ունենան 19-22 Յուլիս 2023-ին, Գալկարի, Ալպերթա:

Կը շնորհաւորենք բոլոր մարզիկները, որոնք պատուաբեր ձեւով ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի ճատրակի խումբը եւ ի մասնաւորի մարզիչը՝ եղբ. Արա Շանոյեանը իր նուիրեալ աշխատանքին համար:

## ԵՌՕՐԵԱՅ ԱՐՇԱՔ-ԲԱՆԱԿՈՒՄ ՄԱՄՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ՓԼՈՎՏԻՎԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ

**Հ**.Մ.Ը.Մ-ի Աթէնքի եւ Գոքին-իոյ մասնաճիւղերու երէցական փաղանգի անդամներ եւ

ազգային եւ սկաուտական նիւթերով դասախօսութիւններ, խաղեր, այցելութիւններ եւ ընկերային կեանք:

Սեյանիկի մասնաճիւղէն աստիճանաւորներ Պուլկարիոյ Փլովտիվի մասնաճիւղի երէցներուն հետ մասնակցեցան եռօրեայ արշաւ-բանակումի մը, որ տեղի ունեցաւ 28-30 Ապրիլ 2023-ին, Սեյանիկի մէջ: Յունաստանէն մասնակցեցան 19 սկաուտներ, Փլովտիվէն՝ 8 սկաուտներ: Յայտագիրը ընդգրկեց



### ՍԵԼԱՆԻԿԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Արշաւ-բանակումին երրորդ օրը, Կիրակի, 30 Ապրիլին, մասնակիցները ներկայ գտնուեցան Սեյանիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին:

Պատարագիչ Եղիա Աբղ. Մալխասեան օրուան քարոզէն առաջ իր գոհունակութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներու ներկայութեան համար: Պատարագէն ետք, ան սկաուտներու պատասխանատուները ընդունեց զրասենեակին մէջ եւ կէս ժամուան զրոյց մը ունեցաւ անոնց հետ:

Աւարտին, սկաուտները Հայր Սուրբին փոխանցեցին յուշանուէր մը:





## ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ ՀԱՃԵԼԻ ՕՐ

**2** Ապրիլ 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Առնհեմի սկսողական խումբապետական կազմին նախաձեռնութեամբ, մասնաճիւղին սկսողականները (թիւով 25) եւ անոնց ընտանեկան պարագաները միասնաբար անցուցին հաճելի օր մը: Հաւաքը կատարուեցաւ միութեան օգտագործած մարզադաշտին մէջ, միութեանական բարձր տրամադրութեամբ:

Հակառակ Հոլանտայի անձրեւոտ եղանակին, սկսողականներ այդ օր իրենց սնունդը վայելեցին հրաշալի արեւոտ եղանակով:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՌՆՀԵՄԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՄ ԶԲՕՍԱՎԱՅՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

### Թղթակից ԱՌՆՅԵՄ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Առնհեմի սկսողական խումբապետական կազմին կազմակերպութեամբ, 1 Մայիս 2023-ին, 22 սկսողականներ այցելեցին «Toverland» զբօսավայր: Պտոյտին կազմակերպման օժանդակեցին սկսողականներու ընտանեկան պարագաներ եւ կամաւորներ:

Հոլանտական հիւանալի եղանակին, բոլորն ալ անցուցին յիշատակելի լաւ ժամեր:



## ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐ Հ.Մ.Ը.Մ. ՎԵՍԹԵՐՈՍ



### ՇՈՒՒՏ

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԵՍԹԵՐՈՍԻ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻՆ «ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐ»Ը

### Թղթակից ՎԵՍԹԵՐՈՍ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Վեսթերոսի Մեկուսի շրջանի վարչութեան մարզական յանձնախումբին կազմակերպութեամբ, Շաբաթ, 29 Ապրիլ 2023-ին տեղի ունեցաւ «Մարզական Օր», որուն մասնակցեցան շրջանի սկսողականները, ծնողները եւ համակիրները:

Մարզական օրը ընդգրկեց զանազան մարզախաղեր (Ֆուտբոլ, պասքեթբոլ, աթլետիկա եւ այլն), հիւրասիրութիւն, ճոխ ժամանց եւ ամէնէն կարեւորը՝ հայկական միջուկը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԱՐՅՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

**Շ**աբաթ, 20 Մայիս 2023-ի երեկոյեան ժամը 5-ին (Պէյ-րուլի ժամանակացոյցով), Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու ատենապետներու առցանց երրորդ հանդիպումը, որ քննեց միութեան վերջին շրջանի գործունէութիւնը եւ յառաջիկայ հինգ ամիսներուն նախատեսուած աշխատանքները՝ թղթակցութեան առցանց դասընթացը, առցանց երկրորդ մարզախաղեր, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակում եւ Հ.Մ.Ը.Մ.ի 13-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով:

Հանդիպումին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան ամփոփ գեկուցում մը ներկայացուց անցնող մէկ տարուան ընթացքին իրագործուած գլխաւոր ձեռնարկներուն մասին, որոնց վերջինը հանդիսացաւ երիտասարդական երկրորդ համագումարը, Նիկոս-



իոյ մէջ (28-29 Ապրիլ 2023): Ապա, ան կատարեց կազմակերպական շարք մը թելադրանքներ, որոնցմէ ետք Կեդրոնական Վարչութեան անդամներ, իւրաքանչիւրը իր պատասխանատուութեան մարզին համաձայն, ներկայացուց զեկուցում մը:

Ձեկուցումներով հանդէս եկան եղբայրներ Ֆէտի-Խաթակ Գազանճեան (սկառուտական), Արմանտ Գիլիճեան (մարզական եւ «Հրաշք»), Օշին Փիրումեան (երիտասարդական), Վիգէն Աւագեան (քարոզչական եւ «Մարզիկ» պաշտօնաթերթ), Վահէ Թանաշեան (տեղեկատուական արհեստագիտութիւն եւ Database) եւ քոյր Թային Օրտողեան (նիւթական պարտաւորութիւններ):

Այս առիթով եւ Կեդրոնական Վարչութեան թելադրանքով, առանձին գեկուցով մը հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեան: Ան խօսեցաւ 160 օրուան շրջափակման դժուարին պայմաններուն մէջ Արցախի Մեկուսի շրջանին կատարած աշխատանքներուն մասին: Ան ուրախութեամբ նշեց, որ Արցախի պետութիւնը ընդունած է Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Մեկուսի մասնաճիւղին կեդրոն մը յատկացնել Ստեփանակերտի մէջ, 73 քառ. մեթր զբաղեցնող եւ 525 մեթր բակային տարածութեամբ: Եղբ. Գրիգորեան նաեւ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Մեկուսի մասնաճիւղին աշխատանքները առայժմ կեդրոնացած են Աշոտ Ղուկեանի անունան Ստեփանակերտի թիւ 2 դպրոցին մէջ, սակայն մօտ օրէն աշխատանքներ պիտի տարուին նաեւ Ստեփանակերտի թիւ 8 դպրոցին մէջ:

Առցանց հանդիպումի վերջին բաժինով, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 13-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի նախապատրաստութիւններուն եւ այս ուղղութեամբ շրջաններու ունեցած պարտաւորութիւններուն մասին:

Առցանց հանդիպումը վերջ գտաւ երեկոյեան ժամը 6:30-ին:

## ՅԱԻԱԿՑԱԿԱՆ

### ՕՆՆԻԿ ԳՈՒՅՈՒՄՈՒՄԻՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (1929-2023)

**Ե**ղբայր Օննիկ Գոլումճեան փոքր տարիքէն իբրեւ դայիկ միացած է Գահիրէի Հայ Արիւններու Միութեան: Երկար տարիներ ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» եւ Հայ Արիւններու Ընկերակցութեան, իբրեւ սկառուտ եւ մարզիկ:



Այս տիտղոս առիթով, «Մարզիկ» պաշտօնաթերթին կը կատարուին հետեւեալ նուիրատուութիւնները՝

- Կարպիս Գալէմճեան, անցեալի սկառուտ խմբապետ (Հէլոպոլիս) 50 ամ. տղար
- Կարօ Նշանեան, անցեալի սկառուտ խմբապետ, (Գահիրէ) 50 ամ. տղար
- Վարուժան Սերոբեան, անցեալի սկառուտ խմբապետ (Գահիրէ) 50 ամ. տղար
- Գրիգոր Մալէգեան, անցեալի սկառուտ խմբապետ (Աղքասաղարի) 50 ամ. տղար

Նկարագրիւրով պարզ ու համեստ, եղբ. Օննիկ եղած է ծառայասէր: Ճարտար փողահար էր եւ սիրուած սկառուտ խմբապետ:

Անմոռանալի յուշերով կը յիշենք եղբ. Օննիկի տարիներու վաստակը: Ան մահացաւ Ուոլթըրթաուն, Արեւելեան Մ. Նահանգներ:





ԵՒՐՈՊԱՅԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՔԷՆ ԱՄԻՍ ՄԸ ԵՏՔ՝

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԿԱՅԵԱԿ ԿԱՐԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության կազմակերպած Միջին Արեւելքի խմբապետներու Վկայեալ կարգի գործնական հանգրուանի դասընթացը տեղի ունեցաւ 21-23 Ապրիլ 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Ամմանի Մեկուսի շրջանի ակումբին մէջ: Գործնական հանգրուանին մասնակցեցան երեք Մեկուսի շրջանները (Պաղտատ, Քուէյթ եւ Ամման) 15 խմբապետ-խմբապետուհիներ, որոնք յաջողութեամբ աւարտած էին դասընթացին տեսական բաժինը:

Քացման հանդիսութեան ներկայ էին Կեդրոնական Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչ քոյր Թալին Օրտողլեան, Ամմանի Մեկուսի շրջանի ատենապետ քոյր Ռաքել Մարգարեան, ինչպէս նաեւ՝ կազմակերպիչ յանձնախումբի անդամներ՝ քոյր Թամար Քէշիշեան, եղբայրներ Ռազմիկ Տօնիկեան եւ Սիմոն Տէրտէրեան: Խօսքեր արտասանուեցան յանձնախումբին, հիւրընկալ շրջանին եւ Կեդրոնական Վարչութեան անունով: Քոյր Թամար Քէշիշեան ներկայացուց բանակումին եռօրեայ աշխատանքներն ու օրէնքները, եղբ. Ռազմիկ Մարգարեան՝ հիւրընկալ շրջանին անունով բարի գալուստ եւ յաջողութիւն մաղթեց մասնակցող խմբապետներուն, իսկ քոյր Թալին Օրտողլեան շեշտը դրաւ սկաուտական կարգերուն եւ յատկապէս Վկայեալ կարգի կարեւորութեան վրայ, որովհետեւ ան խըմբապետ պատրաստող կարգ կը նկատուի:

Եռօրեայ յայտագիրը գործադրուեցաւ ամբողջութեամբ: Մասնակցող

խմբապետներուն փոխանցուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի կառոյցին, խմբակային դրութեան կարեւորութեան, անմիջական օգնութեան, ծրագիր-յայտագիր-տեղեկագիր պատրաստելու մասին նիւթեր, որոնք ամբողջացան գործնական կիրարկումներով: Խմբապետները կիրարկեցին սկաուտական կարգապահական հրահանգներ, ինչպէս նաեւ սկաուտական հիմնական արարողութիւնները (դրօշակ, Մեծ Կանչ, խոստում եւ փոխանցում): Աշխատանքները յաւելեալ խանդավառութիւն ստացան սկաուտական խաղերով, կանչերով եւ անշուշտ՝ խարուկահանդէտով: Անոնք առիթը ունեցան նաեւ զրոյցներու, ուր շրջանները ներկայացուցին իրենց ընդհանուր աշխատանքներն ու դիմագրաւած դժուարութիւնները: Այս հանդիպումները առիթը տուին մասնակցողներուն ծանօթանալու այլ շրջաններու իրավիճակին, աշխատելաձեւին եւ դիմագրաւած դժուարութիւններուն եւ մարտահրաւերներուն, որոնք երբեմն կը նոյնանային բոլորին մօտ (յատկապէս զաղութներու քիւերու նօսրացում):

Սկաուտական աշխատանքներու կողքին, մասնակիցները առիթը ունեցան այցելելու Ամմանի մօտակայ տեսարժան վայրերը (Մեռեալ Ծով, Յորդանան գետ):

Փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 23 Ապրիլ 2023-ին: Հանդիսութեան աւարտին, մասնակցող խմբապետները ստացան Վկայեալ կարգի իրենց վկայականներն ու նշանակները:





**Հ.Մ.Ը.Մ.Ի Ո՛Վ ԳԱՅԼԻԿՆԵՐ,  
ԸԼԼԱՆՔ ՈՒԺԵՂ, ԸԼԼԱՆՔ ԱՐԻ,  
ԹՈՂ ՇՈՒՏ ՄԵԾՆԱՆՔ ԵՒ ԶԱՐԳԱՆԱՐ,  
ՈՒ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՊԱՏԻ ԴԱՌՆԱՐ:**

